
ԱԼԵՔՍԱՆԴՐ
ՎԱՐԴԵՏՅԱՆ
ՈԳԵԿՈՉ



Նվիրում եմ իմ անհայտ «Մուսային»,
որին չգտա,
բայց թերևս գա՝ գնալուցս առաջ...

ԱԼԵՔՍԱՆԴՐ
ՎԱՐԴԵՏՅԱՆ

# ՈԳԵԿՈՉ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՊՈԵՄՆԵՐ

ԵՐԵՎԱՆ ՆԱԻՐԻ 1991

ԳՄԴ 84 ՀՍ
Վ 335

Գիրքը հրատարակվում է հեղինակի ծախսերով

Խմբագիր **Դավիթ Սարգսյան**

**Վարպետյան Ա. Ս.**

Վ 335 Ոգեկոչ: Բանաստեղծություններ, պոեմներ /Ալեքսանդր Վարպետյան.— Եր.: Նաիրի.— 168 էջ.

«Ոգեկոչ» ժողովածուում զետեղված են ֆրանսահայ հեղինակի տարբեր ժամանակաշրջաններում գրված բանաստեղծություններն ու պոեմները, որոնք բացահայտում են Ալ. Վարպետյանի անհանգիստ հուլաշխարհը, ուրույն աշխարհայացքն ու ըմբոստ իմաստասիրությունը: Առանձին գրքով այդ բանաստեղծություններն ու պոեմները հրատարակվում են առաջին անգամ, թեև հեղինակի «Արփիական» խորագրով անդրանիկ գիրքը էպիկական մի քնարերգություն էր, արծարծված չափածո ու արձակ պոեկիայով և նվիրված Մեծ եղեռնի 70-ամյակին: «Արփիականը» հրատարակվել է Ֆրանսիայում և արժանացել Հ. Ուլունյան 1985—86 գրական առաջին մրցանակի:

4702080202 (62)
Վ————————————
705 (01) 91

ԳՄԴ 84 ՀՍ

ISBN 5—550—00752—5

© «Նաիրի» հրատարակչություն
1991

## ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Ֆրանսահայ արվեստագետ ու մտավորական Ալ. Վարպետյանը կրթությամբ ճարտարապետ է և կինո-թատերական գործիչ, գործունեությամբ նաև հրապարակախոս, արևելագետ, գրող ու գծանկարիչ· Խորացել է նաև իմաստասիրության ու հոգեբանության մեջ:

Ինչպես բոլոր սկսնակները, իր գրական առաջին թոթովանքը կատարել է մանուկ հասակում, ավելի ուշ տպագրվել ուսանողական թերթերում, ապա ամբողջովին տարվել իր մասնագիտական գործունեությամբ, միաժամանակ ֆրանսիական ու հայկական մամուլում հանդես գալով արվեստագիտական. դիցա-իմաստասիրական ու ազգային-հրապարակախոսական հոդվածներով, իսկ գրականության մեջ սահմանափակվել է իր բեմադրությունների թատերագրությամբ:

1983 թվականին Ալ Վարպետյանը գրում և պատկերազարդում է «Արևորդյաց պարը» խիստ իմաստասիրական կինոսցենարը, որի մասին արտահայտվել են հայ և օտար շուրջ քառասուն անվանի արվեստագետներ, այդ թվում՝ Գառզուն, Մ. Ռագոնը, Հ. Շիրազը, Ա. Տեր-Ստեփանյանը. Հ. Սահյանը, իսկ Ս. Փարաջանովը պարզապես գրել է.

«Սիրելի Ալեքսանդր, նախանձում եմ. ինչի՞ն. ձեր իմաստությանը, տաղանդին ու եռանդին.. »:

Այսուհանդերձ, չկարողանալով իրականացնել իր կինոստեղծագործությունը, հեղինակն այն վերամշակում և 1985 թ. Մարսելում իր միջոցներով հրապարակում է որպես էպիկական քնարերգություն նվիրված Եղեռնի 70-ամյակին: Ալ. Վարպետյանի անդրանիկ այս հատորը արժանանում է գրական առաջին մրցանակի, հավելվելով տարբեր ասպարեզներում հեղինակի ձեռք բերած պարգևներին:

Իր բազմաբեղուն գործունեությանը զուգահեռ Ալ Վարպետյանը բանաստեղծություններ սկսում է գրել համեմատաբար ուշ, պարբերաբար տպագրելով նրանք տարբեր թերթերում: Չափածո այդ գործերում հեղինակը բացահայտորեն ավելի մտահոգված է նրանց բովանդակությամբ քան ձևով, քի նա անչափ շատ «ասելիք» ունի, որի համար բանաստեղծությունը ոչ թե նպատակ, այլ լոկ արտահայտչամիջոցներից մեկն է: Ալ. Վարպետյանի այս հակումը պարզորոշ բացահայտվում է իր անդրանիկ «Արփիական» քնարերգության մեջ, որտեղ հեղինակը՝ լոռ բովանդակական թելադրանքի, ազատորեն անցնում է արձակից չափածոյի, ինչպես Հին Արևելքի գրականության օրինակներում:

Ուրույն ու լայն է Ալ. Վարպետյանի աշխարհայացքը, ասելիքը՝ խլթին, գրելու ոճը՝ նույնպես.

**Անուշ քաղցրարյուն,**
**Շաքարի շատից կյանքն է դառնանում,**
**Դառնության շատից՝ քաղցրանում անձկանք**
**(մենք հո լավ գիտե՞նք...):**

Այս տողերում հեշտ չէ կռահել, որ խոսքը շաքարախտով տառապող մի անձի մասին է, բայց հեղինակին այդ չի մտահոգում: Նա կարծիք չի պատրաստվում ամեն ինչ կիսել ընթերցողների հետ, գրում է

իր ու որոշ մտերիմների համար, թեև այլ պոեմներում ինքը տարրալուծվում է ազգի ու մարդկության մեջ, արծարծելով բարոյական ու իմաստասիրական համամարդկային խնդիրներ

**…Այո՛, Երկիրը կլոր է իրոք,**
**(այդ գիտե վստահ տափակը նույնիսկ),**
**բայց պտտում են հողագունդն հարգող,**
**ոչ թե անծանոթ ուժեր բնական,**
**կամ դիքերն անգո**
**այլ բյուր-բյուրական ու չորքոտանի**
**մեր խիստ պաշտեցյալ… ինքնաշարժերը:**
**Այո՛,**
**հոգին իրապես գոյություն ունի,**
**բայց չի գտնվում այն սրտերի մեջ,**
**ոչ ուղեղներում**
**այլ բազմափորոք մեր գրպաններում,**
**ուր և դրվում են**
**միակ իրական ու շոշափելի**
**սրբապատկերներ… թղթադրամները:**
**(«Ավազ ու փրփուր»)՝**

Ալ. Վարպետյանի ճարտարապետական երևակայությունն իր խոսքը դարձնում է պատկերավոր, իսկ իր մյուս նախասիրությունը երբեմն ստեղծում է առավել կինեմատոգրաֆիական մտապատկերներ, քան՝ գրական արտահայտություններ.

**…ծամածռվեց մորս դիակ դեմքը մոմե,**
**հալվեց դանդաղ,**
**անէացավ…**
**Տար անդաստանում անպատվար մի դուռ**
**տարուբերվեց լուռ:**
**Քայլեր մարվեցին:**
**Անտես մի տրոփ եթերվեց երկինք:**
**Հովը շուռ տվեց մի դատարկ դագաղ**
**ու շիրիմ լցվեց մեղկ-միապաղաղ**
**հավիտյան խաղաղ…**
**(«Ապաշխարանք»)**

«Ոգեկոչ» չափածո էսսեում Ալ. Վարպետյանը շարադրում է իր ողջ աշխարհայացքը ու ազգային գործունեության իր հիմնադրույթները: Այն, հիրավի, մի ամբողջ իմաստասիրական տեսություն է ու ազգային ավետարանի մի ուրվագիծ, որի ավարտը ոչ այլ ինչ է քան արեգակնային Աստծոն ուղղված մի աղոթք, գրված ոգեկան էքստազի փոթորկուն շնչով·

Ալ Վարպնտյանի «Ոգեկոչ» հատորը, իր «Արփիական» և «Ովքե՞ր են ի վերջո արիացիները» աշխատությունների հետ միասին, կազմում են աշխարհայացքային մի ամբողջություն:

**Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ժամանակակից արվեստներում և արվեստաբանական որոշ շրջանակներում ստեղծվել է մի հակում ու համապատասխան մի թյուր տեսակետ, ըստ որոնց ստեղծագործությունների մեջ ձևն արժանանում է առավել ուշադրության, քան՝ բովանդակությունը: Այդ նկատվում է գեղանկարչության, երաժշտության, գրականության, ճարտարապետության և կինո-թատերական ասպարեզներում, որտեղ կատարման կատարելությունը, գեղագիտությունը, «պրոֆեսիոնալիզմը», օրիգինալությունն ու նորամուծությունները դառնում են ստեղծագործական որոնումների հիմքը:

Երևույթը թերևս կարելի է բացատրել մի քանի հանգամանքներով:

Նախ՝ արվեստի «դեմոկրատացմամբ»: Հայտնի է, որ ստեղծագործական միջին ընդունակություններով օժտված են շատ ավելի անհատներ, քան արարչությունն իրենց բուն մասնագիտությունը դարձրած արվեստագետները: Այսօր արվեստով զբաղվողների թիվն անցյալի համեմատ ավելի մեծ է, առավել ևս, որ կատարողականի ուսուցումն ու «պրոֆեսիոնալիզմի» ձեռքբերումն ավելի հնարավոր է, քան ստեղծագործողների հուզա-բանական բնատուր տաղանդի արհեստական արծարծումը: Եվ ցավոք աշխարհի արվեստագիտական մեծամաս դպրոցներում առավելաբար ուսուցանում են արվեստի արհեստը:

Երկրորդ պատճառն արվեստի «ինդուստրիալիզացումն» է, մեծ քանակի անհրաժեշտությունն ու սպառման հնարավորությունը, կեցության արագացված ռիթմը և ստեղծագործությունների արտադրության տնտեսական ազդակը, որի հետևանքով որակը զոհաբերվում է վասն քանակի:

Երրորդ՝ թերևս ամենահիմնական պատճառը նոր «ասելիքի» պակասն է, որպես «ֆունկցիոնալ» և «պրագմա-

տիկ» դարաշրջանի արդյունք, որտեղ արվեստի խորհուրդը տեղը զիջել է «էսթետիզմին»:

Արվեստի սաղմնավորման նախապատմական շրջանում «ձև, թե՞ բովանդակություն» իմաստասիրական խնդրականը չէր դրվում: Արարածն ուներ ինչ-որ ասելիք և այն արտահայտում էր բնականորեն, ինչպես զգում էր՝ առանց մըտահոգվելու արվեստի կանոնների մասին: Քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց ձևի կատարելությունը դարձավ ստեղծագործական պահանջ, այն աստիճան, որ հազարամյակների ընթացքում ավելի ու ավելի հաճախ սկսեց փոխարինել բովանդակությանը: Առաջացավ «ձև և բովանդակություն» խնդրականի հասկացությունը, որին տարբեր ժամանակներում անդրադարձել են իմաստասերները, արվեստաբանները ու իրենք՝ ստեղծագործողները, ինչպես Պ. Սևակն իր «ԻՆՉ-ը, ԻՆՉՊԵՍ-ը և ՈՐՊԵՍ-ը» հարցազրույցում, որտեղ բանաստեղծը քվեարկում է առավելաբար «ասելիքի» օգտին՝ խորիմաստորեն արծարծելով հանդերձ, «ձևն էլ ունի իր բովանդակությունը» գաղափարը:

«Ինչ վերաբերում է բանաստեղծության ձևին, արտահայտչական միջոցներին, հանգ ու վանկին, չափ ու կըշռույթին,— գրում է Պ. Սևակը,— ապա նախապես ձևը կարող է ընտրել միայն նա, ով ոտանավոր է գրում և ոչ թե բանաստեղծություն: Եվ ընդհակառակը, ով բանաստեղծություն է գրում, նա ձևի փնտրտուք չի ունենում, նրա միակ նպատակը լինում է իր ասելիքը տեղ հասցնելու մտատանջությունը»:

«...Տասնյակ տարիների իմ մտատանջությունները ինձ բերել են այն եզրակացության, որ գրականության մեջ վերջին հաշվով կարևորը ԻՆՉ-ն է և ոչ թե ԻՆՉՊԵՍ-ը,— շարունակում է գրականագետ-բանաստեղծը.— Ճիշտ է, որ մենք՝ այդ թվում նաև անձնապես ես, երկար ժամանակ արյուն-քրտինք թափեցինք հասկացնելու համար, թե կարևորը ԻՆՉՊԵՍ-ն է և ոչ թե ԻՆՉ-ը»:

Բնականաբար խնդրականը ավելի բարդ է, ենթակա ուսանձին ու առավել խորը խորհրդածության, զի այս բոլորը բացարձակապես չեն ակնարկում արվեստի տարրական կանոնների անտեսում, գեղեցիկի ժխտում, թեև՝ ըստ

մեզ, ճշմարտացի է «Գեղեցիկը դեռ արվեստ չէ» դասական սահմանումը:

Իսկ ի՞նչ է նշանակում ԻՆՉ-ը կամ նույն «ասելիքը»:

Համաձայն տարածված մի տեսության մարդու հոգեկան աշխարհը տարբերակվում է ըստ հուզա-զգայականի ու բանականի: Ըստ մեզ այդ տարբերակումները երեքն են՝ զգայական, բանական և ոգեկան, որոնք բոլոր հասարակություններում արտահայտվել են համապատասխանաբար՝ արվեստի, գիտության և հավատամքային բնագավառներում: Այսուհանդերձ մարդու ներաշխարհի նշյալ երեք ոլորտներն էլ միաժամանակ՝ բայց տարբեր փոխհամաչափությամբ, հանդես են գալիս ցանկացած ստեղծագործողի ու նրա ստեղծագործության մեջ:

Արվեստները, որոնք կոչված են հոգեկան սնունդ ապահովելու արարածներիս, առավել կատարյալ են ու բովանդակալից, երբ սպառողներին ապահովում են թե՛ զգայական, թե՛ բանական և թե՛ ոգեկան գրգիռներ ու ալեկոծություններ, որոնցով տիեզերական թրթիռներն առավել ամբողջական են ներթափանցում ու վերարծարծվում մեր ներաշխարհում: Եվ այդ ոչ միայն արձագանքային փոթորկումներով ավելի կենսունակ դարձնելով մեզ՝ այլև ներգործելով արարածներիս կատարելության զարգացման վրա, ներդաշնակ տիեզերական օրինաչափություններին, զի մարդն ու նրա ներաշխարհը տիեզերքի արտացոլանքն են, ունեն տիեզերքի նույն կառուցվածքը՝ ըստ էզոթերիկ (գաղտնագիտություն) տեսության՝ նյութական, հուզական, բանական, երեք ոգեկան և աստվածային (անբացատրելին) աստիճանական ոլորտներով:

Արվեստի պատմության մեջ չկա գեթ մեկ հանճարեղ գլուխգործոց, որը չլինի հուզականորեն հագեցած, բանականորեն իմաստուն և ոգեկանորեն աստվածային: Երբ ստեղծագործության մեջ թույլ կամ պակաս է վերոհիշյալ երեք ազդակներից որևէ մեկը, արվեստի գործը մասնակիորեն դառնում է թերի, նույնիսկ մնացյալ երկու ազդակների կատարելության պարագային: Այս իրողության մեջ համոզվելու համար բավական է վերադիտարկել մեծ հանճարների՝ Դանթեի, Շեքսպիրի, Բեթհովենի, Միքելան-

ջելոյի, Գյոթեի թե այլոց գլուխգործոցները, միջագետքային, վեդայական, Վերածննդի թե 18—19-րդ դարերի մեծ ստեղծագործությունները:

Ահա այս զգայական-բանական-ոգեկան ամբողջությունն էլ կազմում է արվեստի «ասելիքը» կամ բովանդակությունը, որն այլ բան չէ՝ քան տիեզերական Խորհուրդ, իսկ ձևը՝ իր բովանդակական օրինաչափություններով հանդերձ, մնում է այդ Խորհուրդը հաղորդելու լոկ միջոց: Ձևերը փոխվում են ու հնանում ժամանակի հետ, Խորհուրդն անփոփոխ է ու հավերժական, նրանով են հարատևում հանճարեղ գլուխգործոցները, նրանով են անմահ այն կրող հանճարեղ կիսաստվածները: Երբ մի գեղեցիկ օր արարածը կհասնի աստվածային կատարելության և կկարողանա իր նմանների ու տիեզերքի հետ հաղորդակցվել առանց խոսքերի ու արվեստների միջնորդության, ձևը կվերանա, գեղեցիկը չի լինի այսպես կանոնավորված, ինչպես բնության մեջ չկան ո՛չ ուղիղ գծեր, ո՛չ սրբատաշ մակերեսներ, կա միայն ներդաշնակ մի խառնաշփոթություն, անօրինաչափ մի օրինաչափություն: Այդժամ յուրաքանչյուր արարած-աստված ինքը կդառնա թե՛ ստեղծագործող և թե՛ իր արարչության սպառողը, այլոց ու միջավայրի հետ կհաղորդակցվի լոկ ճառագումներով: Մինչ այդ մանուկ արարածներս ամեն օր մի քիչ ավելի բացահայտում ենք ինքներս մեզ ու աստվածային տիեզերքը, քիչ-քիչ ըմբռնում ՄԵԾ ԽՈՐՀՈՒՐԴԸ, նրա իմաստությունն ու առաքինությունը:

Քաղաքակրթական հեղափոխությունների բոլոր դարաշրջաններում նոր արվեստը ծնվել է միայն նոր աշխարազգացողության ու աշխարհայացքի հիման վրա: Առանց նրանց չկա ու չի եղել նոր մշակույթ, նոր մի քաղաքակրթություն: Գիտական թե իմաստասիրական յուրաքանչյուր մեծ բացահայտում՝ որոնք վերանորոգում են հին աշխարհայացքը, անմիջապես թարգմանվում են արվեստներում, ինչպես քվանտային տեսությունը արվեստում մտցրեց տարածության ու ժամանակի հասկացությունը՝ տարբեր արվեստաձևերի մեջ ակունքելով նոր ուղղություններ: Եվ ընդհակառակը, պրպտուն արվեստագետների կատարած ստեղծագործական կռահումները փոխադարձաբար սնում են նոր

մտածողություն, ներշնչելով գիտական ու իմաստասիրական նոր բացահայտումներ ու գաղափարներ: Օրինակ, կերպարվեստում իմպրեսիոնիզմը լոկ մի նոր ուղղություն չէ՝ այլ նախ և առաջ նոր աշխարհազգացում, որը գալիս էր բացասելու ակադեմիական տեսողությունն ու մասնավորապես նրա «գծի» տեսությունը:

Իսկական պոետները՝ լինեն դրանք գրողներ, նկարիչներ, երաժիշտներ թե ճարտարապետներ, գալիք ժամանակների անդրանիկ ծիծեռնակներն են: Նրանք առաջինն են զգում ժամանակի շունչն ու զարկերակը և վերացականորեն վերարտադրում այն իրենց ստեղծագործություններում: Հանճարեղ են այն գիտնականները, որոնք հզոր բանականության հետ օժտված են նաև պոետիկական՝ այսինքն զգայական ու ոգեկան հատկանիշներով և վերացական մըտածողությամբ, այլ խոսքով՝ աստվածային ամբողջական իմաստությամբ, զի զգայական, բանական թե ոգեկան ոլորտ թափանցած յուրաքանչյուր տիեզերական թրթիռ բորբոքում է հարկավ երկու ոլորտներն էլ ու հաղորդում ընդհանուր ուժգնացում: Այդպես են կատարվել բոլոր մեծ կռահումները, որից զուրկ են համակարգիչ մեքենաները՝ լոկ բանական լինելու պատճառով:

Արվեստագետ, գիտնական թե կրոնական լուսավորյալ առաջինն են որսում «աշխարհի վրա սավառնող նոր ոգին» և ընդունակ են նոր մի արահետ բացելու արվեստում, գիտության թե կրոնների մեջ:

Իսկ այդ նոր «ոգին» պատմության մեջ հայտնվում է պարբերաբար, ըստ ոմանց արեգակնային գործունեության ակտիվացման՝ 5, 6, 11, 2, 33, 99-ամյա կամ ավելի լայն հաճախականությամբ կրկնվող պայթյունների հետևանքով, ըստ այլոց պարզապես քաղաքա-հասարակական խմորումների պատճառով: Ըստ մեզ երևույթն ավելի բարդ գործընթաց է, թեև արեգակնային գործոնը մնում է բացահայտ, համապատասխանելով քաղաքակրթական, ռազմա-քաղաքական հեղափոխությունների, հանճարների ծնունդի ու նրանց արդյունավետ արարչության և նույնիսկ երկրա-աշխարհագրական պոռթկումների պատմական արտահայտություններին:

Այդպիսի մի դարաշրջան էր միջնադարյան Վերածնունդը, առավել համեստ այդպիսի մի շրջան ապրեց մարդկությունը 19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի սկզբներին, երբ վերանայվեցին ավանդական արժեքները ու աշխարհայացքները, ծնվեցին ու կյանք մտան՝ մարքսիզմը, ֆրեյդիզմը, նիցշեականությունը, իսկ հայ իրականության մեջ՝ «հեթանոսական» կոչեցյալ շարժումը՝ հանձինս Ալիշանի, Դ. Վարուժանի, Ա. Ահարոնյանի, Լ. Շանթի, Ա. Չոպանյանի, Կ. Զարյանի և շատ այլոց: Ավա՛ղ, ավանդական մտածողությունը այդ շարժումը որակավորեց որպես ռոմանտիկ փախուստ դեպի անցյալ:

Իրականում, եթե այն փախուստ էր՝ ապա միայն դեպի ապագա, այսինքն բացառման մի նոր բացառում էր, հնագույն արժեքների նոր վերաիմաստավորում վասն առավել զարգացած մի քաղաքակրթության, մի նոր Վերածննդի, ինչպիսին եղավ միջնադարում, երբ հազարամյա խավարից ու ամլությունից հետ մարդկությունը վերահանեց Առաջավոր Ասիայի ու հունա-հռոմեական ժխտված արժեքները, կատարեց քաղաքակրթական մի հսկա թռիչք, որի համար բոլոր լեզուներում անվանվեց Վերա-ծնունդ: Այն նախանշավորվեց Արևելքում՝ հանձինս Ավիցեննայի, Նարեկացու և այլոց, բայց քաղաքա-տնտեսական առավել բարենպաստ պայմանների պատճառով ծաղկեց Արևմուտքում:

Դարասկզբի հայ վերածննդյան փորձերը, որոնք ոգեկոչում էին հայ ժողովրդի երբեմնի կենսասիրությունն ու կենսունակությունը, միայն նոր մշակույթի ծնունդ չէին ակնկալում: Այն նաև մարտակոչ էր ընդդեմ հայոց դարավոր, ֆիզիկական ու հոգևոր լծի, ընդդեմ հաշտվողականության ու արմատացող ստրկամտության և վասն ճակատագրի դեմ նոր ճակատամարտի, զի կենսասիրությունը կորցրած որևէ համայնք ընդունակ չէ հաղթական պայքարի, այլ լոկ հուսահատ նահատակության՝ թեկուզ պատվավոր:

Ես կերգեմ Գինին
— Բագիններուն ծիծաղը և
Խորաններուն արյունը:
Դարերու կյանքը կերգեմ,
հանուն հաճույքի և
տառապանքի գեղեցկության:

Այսպես է բնաբանել Դ. Վարուժանը իր «Հեթանոս երգեր»-ը, այս մի քանի տողերում ուրվագծելով իր աշխարհայացքը՝ կենսասեր ու մարտունակ, ի փոխարեն խաչելության «մոդելի»:

Ա. Չոպանյանին ուղղված իր նամակներից մեկում բանաստեղծը գրում է.

«Հեթանոս կյանքը օրեօր զիս կգրավե, եթե այսօր կարելի ըլլար կրոնքս կփոխեի և սիրով կընդգրկեի բանաստեղծական հեթանոսությունը»:

Ինչպե՞ս ասել ավելի պարզ: Բանաստեղծն անհնար է գտնում վերադարձը դեպի հին կրոն, նա միայն որոնում է «բանաստեղծական» հեթանոսությունը, զի.

Արյունափառ Խաչին տակ,
Որուն թևերը տըրտմություն կը ծորեն
Աշխարհիս վրա բովանդակ,
Ես պարտըված, Արվեստիս դառըն սըրտեն
Կ'ողբամ ձեր մահն, ո՜վ հեթանոս Աստվածներ:
Մեռա՜վ Խորհուրդն. և Բնությունն է արյունե՛ր
Օրենքներու կարկինին սուր սըլաքով:
Զանձրույթը մնաց, պըճնըված փուշ պըսակով:
Մարդն է ինկած գարշապարին տակ հըսկա
Խուլ Աստծո մը հրեա...

(«Մեռած Աստվածներուն»— հատված)

Ահա և բանաստեղծի ողջ աշխարհայացքն ու վերն ասվածի պատկերավոր օրինակը «օրենքներու կարկինին» և «մեռած Խորհուրդի» վերաբերյալ: Եվ այդ ընդամենը երկու տողով, որոնք թաքցնում են գերագույն իմաստություն: Ո՛չ, բանաստեղծը Քրիստոսի դեմ չէ՝ այլ Բնության ու Խորհրդի կողմնակից:

Մինչև ողնուծուծը ոգեղեն, դեպի «աղբյուրը լույսի» գընացող Դ. Վարուժանը հայ իրականության մեջ աստիճանաբար երևակվում է ոչ թե լոկ մի պարզ կամ տաղանդավոր բանաստեղծ, այլ՝ որպես նոր աշխարհայացքի ռահվիրա, հորիզոնից այն կողմ տեսնող, անչափ մեծ «ասելիք» ունեցող մի հանճար, հայ ժողովրդի մտքի ու ոգու պատմական մի առաջնորդ:

Եվ բոլորովին պատահական չէ, որ 20-րդ դարի հայ այլ մեկ մեծ բանաստեղծ՝ Պ. Սևակը, իր դիպլոմային աշխատանքը նվիրեց Դ. Վարուժանի քերթությանը:

Եվ բոլորովին պատահական չէ, որ շուրջ 99-ամյա արեգակնային մեկ փուլից հետո, երբ ողջ աշխարհը խորը վերափոխությունների մեջ է ու գալիք դարը ենթադրվում է լինել արեգակնային, երբ երբեմնի արևապաշտ հայ ժողովուրդը դարավոր տառապանքներից ետ պատմական զարթոնքի փորձեր է անում, հայոց ճակատագրի վրա նորից սավառնում է վարուժանական ոգին:

Եվ նորից պատահական չէ, որ չափածո այս համեստ հատորում, իմաստասիրական ու արվեստագիտական մեր ըմբռնումները առանց բանաստեղծորեն համեմատվելու նըվաստ միտումի, ջանացինք մեկնաբանել Պ. Սևակի ու Դ. Վարուժանի արդեն ծանոթ խոսքերով:



# ՌՆԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***

Տիեզերքի գավում կավե,
անձնակենտրոն առանցքիդ հեց,
շաքարխնձոր է Երկիրն այս քեզ,
հյութեղ եղե՞մ,
մժեղաց մեջ դո՛ւ ուժեղ բոռ,
կամ գոռ բզե՞զ՝
տրվե՛լ է քեզ ուրեմն ամե՛ն
բերք ու բարիք, բերկրանք բոլոր.
ես քեզ չնչի՛ն տալիք չունե՛մ...

Սև ու սպիտակ գույնն այս որոշ,
չե՞ս գտնում գորշ,
պղտորն անգամ տեսնո՞ւմ ես պարզ,
եղելությունն՝ նյութեղ երա՞զ՝
բախտավո՛ր ես՝ բարով վայելե՛ս,
քեզ ավելիք ոչինչ չունեմ...

Երջանկության լանջ չհասա՞ր,
քրքրվեցիր ձգտումներիդ անկումներից,
ու մնացիր քուրջի նման
ցմահ առկախ,
կյանքի կեռման հարցականի՞ց:
Կանոնարկման մաղից չանցա՞ր,
բայց քամվեցի՛ր կանոնավոր
իղձ ու եղծից.
դու ինձ անչա՛փ տալիք ունես,
ես՝ ավելի՛ք,
սակայն՝ ավա՛ղ, վախենում եմ,
որ էլ այդչափ տարի չունեմ...

6 սեպտեմբեր, 1987, Լոնդոն



Սերունդ է լուծվում սերունդների մեջ,
վերքն՝ ապաքինության, մեղքն՝ ապաշխարանքի,
բայց ցավն արցունքում չի լուծվում երբեք,
ինչպես չի լուծվել արյան մեջ Ոգին...

***

**Ա. Ն-ին**

Աստղ տրոփեց...
Եվ արցունքի վերջին ցողով
Բեղմնավորվեց կաթիլն արյան,
Թաղված հույսի պեղված շողով
Ցայգաբացվեց երանելի մի նայադի
գալու ճամփան...

* * *

Ու թե ճիշտ է,
որ չի տալիս մի ափը ծափ,
չի լվանում իրեն մի ձեռք,
ու դեռ երբե՛ք
հուր չի ծնել մի կենտ դատակ,
բայց տալիս է մի ափն ապտակ,
որն՝ ըստ հարկի, թե ժիր ծափ է,
թե դավության լկացք հարդար,
թե քավության այրվածք արդար,
դեռ ավելին՝ վարքին նվաստ՝
բարի խրատ,
վարկին խրոխտ՝
բարվոք նպաստ...

16 հուլիս, 1987, Լոնդոն

***

Կեղծիքներն ամեն իրագործվում են
                    վասն ճշմարտության,
լրբությունները՝ վասն սրբության,
բռնությունները՝ վասն ազատության,
խարդավանքները՝ վասն ազնվության,
դավերը՝ հանուն մի դավանանքի,
ու ոճիրները՝ բարեգործության,
                    և հակառակը...
                    Բայց վասն ու հանուն.
միմիայն ոմնի, միմիայն ոմանց,
ծածուկ-բացահայտ, ամբողջ-մասնակի
կամ սահմանափակ մի ժամանակի,
                    պահանջին նպաստ:

Թե չկճպեցիք էությունը քուն՝
չե՞ք ըմբռնելու խայծի առակը,
չե՞ք տարբերելու խայտն առաքինի
                    ու խայտառակը...

8 սեպտեմբեր, 1987, Լոնդոն.

***

Ս. Փարաջանովին

Իմաստունի խոսքով պայծառ
լուսացնում եք ձեր միտքը մութ,
բանաստեղծի հույզով հրե
ջերմացնում ձեր պաղ հոգին,
բայց թե ծանոթ բարքով աղճատ՝
խանդ ընդ տաղանդ,
չեք հանդուրժում երախտավոր բացառիկին՝
արատները ձեր իսկ առատ:
Հարցրեք ապա արեգակին.
Ճիշտ է արդյո՞ք այրվելն անվերջ,
և մի՞թե իր բծերը սև
վշտի վերքեր չեն պարզայես...

***

Դու, ո՞վ չգիտե,
որ միջավայրում վխտում են ամեն
բացիլ ու մանրէ
և հենց նրանց դեմ
բնությունը մայր՝ հանց բարուր մեզ,
տվել է մեզ մաշկ,
փոշու դեմ՝ նուր մազերի ծածկույթ,
որ պատսպարվենք:
Բայց հոգի կոչված այս մերկը անտեր՝
առանց մաշկ ու մազ,
ի՞նչ անի հապա կյանքը հեղեղած
ճղճիմության դեմ, ոխ ու նախանձի,
սառնության խանձի,
ընչասիրության ու ցավի դիմաց:
Պատրանքի պատանք,
միմիա՛յն հավատք, միմիայն երա՛զ,
իրականության ցեցից հոշոտված...
Մարդիկ մարդասեր, իմ ձախորդ սերեր,
մի խլեք խնդրեմ
գեթ քուրջերն իմ այս:

08 06.1989, Մարսել

## SOLDE, SOLDE, SOLDE...*

Թե եկել ես երջանկության
                    տոնավաճառ,
պատճառ ունես դու անպատճառ:
Շուրջդ՝ առատ Մեֆիստոֆել,
ծախիր ինչ-որ ունես ավել,
թեթևացրու հոգուդ բեռը՝
Հուդայի պես ծախիր տերդ...
Երկիր ծախիր, որ տուն գնես,
ազգդ ծախիր, որ քեզ գտնես,
ու ձեռք գցես փոխան պատվի՝
մշտադալար դոլար դափնե,
մատյանի տեղ՝ բանկի գրքույկ,
փրկության փուչ տապանի տեղ՝
                    կահույք ու գույք:
Ծախիր հոգիդ՝ մի սակարկիր,
ինչ էլ տվին՝ մաքուր շահ է,
ինչ պոկեցիր՝ այդ էլ շատ է,
զի գորշ հոգիդ, արդեն գիտցիր,
                    գրոշ չարժե...

12 01.1988, Մարսել

* Էժան վաճառք (ֆրանս.):

***

Արարչական մի թեթև ճիչ
և եռհազար չորսը հարյուր ութը գրամով
երկիրն այս ծանրաբեռնվեց ևս մի քիչ,
բայց մոտ հիսուն սանտիմետրով ձգվեց նաև
դեպի վերև, դեպի արև...
Աստղ չգայթեց երրորդության՝ այդ ես եկա,
առանց արքա ու մոգերի երկրպագման,
տոհմածառիս ես մի բողբոջ հույս հետագա.
գուցե՝ անճար, գուցե՝ հանճար, բայց մի չնչին
ես դեռ ծծկեր արևորդիս՝
որպես անհայտ ճակատագրիս տողն առաջին,
հղում եմ ձեզ կենսաթրթիռ տաղը սրտիս.



«Ձեզի-Մեզի Մեծ Ավետիս...»

Արեգ-Արփիակ
6.12.1986

***

Դու չուզեցիր...
Լացակումած մինչև անգամ թունդ հուզվեցիր,
երբ ծնողիդ արարչական գուրգուրանքը՝
բարքով մի հեզ,
վարքով հպարտ,
սրտիկի պես արյունոլվա շպրտեց քեզ
խոլ կեցության հեռ ու հոռի հրապարակ՝
ճակատագրի ճակատամարտ:
Բայց թե եկար,
էլ ավելորդ մի երկմտիր երկար-բարակ.
կամ այնտեղից դու հետդ տար
առնականի պանծ ու պայծառ մի հաղթանակ,
կամ թող այնտեղ լեռնականի մի հաղթ դիակ,
որ դառնա քեզ
անվճար ու անձեռակերտ մի կոթող սեգ՝
պարտվածի գոռ մահարձան...

***

Զգո՜ւյշ, եղբայր իմ՝ ոտոխ մտերի՜մ,
փշեր ունեմ ես,
բայց ոչ լպրծուն ձկների նման՝
թշնամուն թակարդ,
այլ լոկ օձակուլ ոզնիներն ինչպես՝
դրսից՝ զինավառ, ներքնապես՝ անդավ,
ու նույնիսկ հլու:

Զգո՜ւյշ, քույրիկ իմ՝ դավ հավատարի՜մ,
փշեր ունեմ ես,
սակայն ոչ բացված վարդերի նման՝
թոշնանքի մակարդ,
այլ սոճու դալար սաղարթը ինչպես,
որի բողբոջը ոչ ոք չտեսավ
ու չի տեսնելու...

Սակայն փշերով ես չծնվեցի՝
մայրս չտվեց,
այլ դո՜ւք՝ ակամա՜, որ սիրտ զրահեմ,
ձեր նուրբ քողարկված ախորժակի դեմ՝
իմ սիրելինե՜ր...

12 հուլիս, 1987, Լոնդոն

***

Ո՛չ, համաստ չեմ.
դյուրամարս, հյութեղ անանասի պես,
ինչո՞ւ ամաչեմ,
հատիճ ունեմ ես,
բայց ոչ թե՝ ասենք, ինչպես տանձ կամ դեղձ,
այլ գլխացավանք ընկույզը ինչպես՝
անչափ ծայրահեղ.
դրսից՝ ապառաժ, ներսից՝ ինչ ասեմ,
...ինքնամփոփ ու հեղձ:
Բայց արի ու տես, ամքում եմ հուշիկ,
ո՞վ պիտի բացի,
ո՞վ թափանցի ներս՝
որդերից բացի...
Մի թողեք նեխեմ, թե ճարը գտաք
բացիք պատիճս,
ընդունում եմ մունջ արդար պատիժս՝
բարի ախորժա՛կ...

30.10.1989, Դիլիջան

***

Երկի՛ր հայրենի,
թե գիտենայիր չափը կարոտիս՝
իմ... չէիր ների։
Չի՝ արցունքալիմ
Սևանա սրտիդ ջրերը քիչ-քիչ,
իմ աչքերից են ծածուկ նվազում՝
փոխան արոտիս,
կորչելով իզուր օտար ավազում։
Թեև, ու... քանզի,
ծեփված են կոպերս քո կանաչ լույսով,
և հին ու հեղլի
սրտիդ ճաքերին ընդմիշտ ծեփվելու
բետոնե հույսով...

7 օգոստոս, 1987, Լոնդոն

***

Ի՞նչ ասեմ քեզ,
տարիի տարա՞փ,
բայց այրո՞ւմ ես,
ասե՞մ քեզ տապ՝
ա՞նք ես ցողում,
արցունքի ա՞փ՝
բարձո՞ւնք ես վես,
ուրեմն՝ քարա՛փ՝
փլուզվո՞ւմ ես,
ավաղ ասե՞մ՝
եթերվո՞ւմ ես,
կարգեմ պարա՛պ՝
տեսիլքվում ես,
հրեշտակ դասե՞մ՝
հեշտածին ես,
մնաց ասեմ
քեզ սատանա,
բայց սիրելիս,
ախր անչա՛փ
գեղեցիկ ես...

18 հուլիս, 1987, Լոնդոն

## ԷՎՐԻԿԱ... ՍԽԱ՛Լ

Ուզեցի լինել ազնիվ ու շիտակ,
ստորությունից կանգնել վեր ու վեհ,
որքան ջանացի...՝ ջրասույզ իջա
                    կեցության հատակ...
Բայց երբ մի օր ես քիչ ստորացա՝
                    ելա մակերես,
որքան ցածրացա՝ այնքան բարձրացա...
                    Բան չեմ հասկանում,
ո՞վ էր ի վերջո սխալ բարբառում՝
Արքիմե՞դն հանճար, Քրիստո՞սն անճար,
թե՞ իմ հարևան հիմար վաշխառուն,
                    որ կրկնում էր հար.
«Դրամն արժեքներից միշտ ծանր է կշռում»...

9.02.1988, Մարսել

## ԱՐԹՆԱՑԻՐ՝ ԱՅՍՕ՛Ր...

...Արթնացի՛ր հիմա, ընդարմ բարեկամ,
արթուն քնիդ մեջ մի վազիր անվերջ
                    վաղվա ետևից,
մինչև վառ վաղվա գալուն սպասես,
քո վաղը արդեն կդառնա երեկ՝
                    առանց այսօրվա,
                    առանց հուշերի,
զի օրերով է գործվում այն շղթան,
որով դառնում ենք գերին հույսերի...

22 հունվար, 1988, Մարսել,

***

Ի՞նչ ես անում 100 տարին՝
գեթ մեկ օրդ թանձր ապրիր,
ի՞նչ ես չափում ծայրն օվկիանի՝
դու Սևանիդ խենթ խորությամբ
նախ լիացիր,
երկնաքերը քեզ ի՞նչ կտա՝
երբ լեռներդ բարձր են ավել,
ամեն տեղ էլ՝ ինչպես ոսկին,
նույն արևն է
ու նույն ամպը,
դու քո երկրի արշալույսով
նախ հիացիր:
Մի կյանք ունես եղած-չեղած,
գուցե մեկն այլ չտրվի էլ,
նախ կարճ կյանքիդ տարողությամբ,
ողջ խորությամբ,
ողջ էությամբ
դու հագեցիր,
վայրկյանի մեջ վայելիր հավերժ,
մեկ գավաթում՝ եռքը գինու,
կենտ սիրո մեջ՝ անհունություն,
մեկ երգի մեջ քո երկն ասա,
Երանության բաժինդ առ,
ամբոխներին ողջույնդ տուր
ու հեռացիր:

Աբովյան, 7 հոկտեմբերի, 1991 թ.

***

Ժ-ին և Լ-ին

Այո՜, ծուռն եմ ես.
այսինքն՝ շիտակ, համառ ու անզեղչ՝
նույնիսկ աներես,
և ծանր եմ նստում ձեր հոգու վրա,
դրա համար էլ սուզվել եմ անզեղչ,
միայնության մեջ,
«ջրիկության» տակ՝
մինչ ճողփում եք դուք այդքա՜ն հեշտ ահա՜,
բարձրություն կոչվող... «մակերեսին» տաք:
ծանր են խոհերը խեղճ պարանոցիս,
ապրելն՝ ավելի,
ծանր են խոսքերս, երգս՝ անտանելի,
ծանր են «մեղքերս», վերքս՝ ահռելի,
բայց՝ հավատացեք,
թեթևանքը ձեր՝ երիցս ծա՜նր...
Խիղճս է լոկ թեթև, սուզվում եմ թեև,
և հարկավ ըստ ձեզ՝ մեղքն իմն է՝ գիտեմ.
մնում եմ համր...
Բայց աղաչում եմ,
բարի եղեք քիչ, մի փաթթեք վզիս,
և ձեր խճճված ուղեղ-թնջուկի՝
«փայլուն» մտքերի, «նուրբ» կարծիքների,
մետաքսանման ոստայնաթելը՝
որքան էլ լինի այն թույլ ու փտած,
բարակ ու «բարի»...

Ախր դուք շատ եք, իսկ փայտույթը՝ հա՜ստ,
                    և հեղձվում եմ ես,
ձեր այդ թքահյուս կարծիքից կախված։
Բայց դուք վերստին՝ ինձնից էլ հաստատ,
ավելի անզեղչ, առավել համառ,
ինձ եք մեղադրում... խեղդվելուս համար։

Թե այդպես դատենք՝ կախվածներն ամեն,
                    անձնասպաններ են,
չէ՞ որ ի վերջո մեռնում են նրանք,
իրենց սեփական... ծանրությունից կախ...

31.01. 1988, Մարսել

## ՔՆԱՐ ՈՒ ՔԱՆՔԱՐ

Ա՜խ, այդ Ամուրը...
Այդ չարաճճի օլիմպյան լակոտ՝
Սրտահարության չեմպիոնը չեղյալ,
Որ բոռի նման ոստնելով բոկոտ,
բողբոջ ամպե ամպ,
Առաքելական ասպասպով արծարծ.
Ծիածանն՝ աղեղ, կապարճում՝ շողեր՝
Խանդ ու խինդի մեջ սայրերը թաթխած,
Պարապ ու սարապ տարափում է տարփ՝
նզովքն իր օրհնեալ,
Խոլ խոյամարտող մարդկության գլխին,
Մինչ ես դիտապաստ տառապում եմ աստ,
Աստղիկ դիցուհու սրունքների մոտ՝
ստինքներն ի կախ,
Թախանձելով՝ ռնգ ծծկեր հեթանոս,
Խանդակաթ մի խած, արբունքի ամբրոս՝
Աստվածացման գեթ համտեսի մի կաթ,
Հարատև սիրո սոսկ մի ակնթարթ...
Մինչդեռ այդ որսկան սիրո սրիկան,
դիպչում է դիպուկ,
Քանզի՝ որպես խաս մարզական թիրախ,
Ի՛մ սրտի վրա հմտացավ հատուկ..
Բայց ամեն զարկին՝
Չդիպած սիրո դիցական խայծին,
Ես սայթաքեցի երազանքս ի վար,
Դեպ սիզիփոսյան ունայնի բարձունք՝
դատապարտված հար,

Անհաս տենչանքիս տիրատուր բեռին:
Ու ամեն խոցման,
Սիրտն իմ ցնցող՝ բերկրանքի տեղակ,
Արյունեց կապույտ տանտալյան արցունք՝
Տակուցքելով լոկ փորձության ջեղակ,
ու հող ավարա...
Այսպես էլ ահա.
Նա վարժվեց զարկին, իսկ ես գրկվելուն,
Նա՝ ճիշտ դիպչելուն, ես՝ վրիպելուն,
քանզի Աստղիկի
Սրտիկը մարմար միշտ մնաց ամուր,
ստինքներն՝ ամուլ,
Ինքն էլ առհավետ՝ պատրանք ամուրի...
Ա՞խ այդ Ամուրը,
Սրտեր հոշոտող՝ նաև աչքակուլ,
քնքուշ ուրուրը,
Գիշատիչ սիրտ, կույր տոփանքների,
Ու հավերժական տառապանքների,
այդ աներախտիք
Հրեշտակն անվարտիք...

14 08.1986, Մարսել

## ՏՐՏՈՒՆՋ Է ՏԵՂՈՒՄ...

...քաղաքի վրա,
լվանում անփույթ գույները պաստել,
ու գորշությունը՝ հին, անագորույն,
լցնում ջրհավաք աչքերիս մեջ ետ...
Ջի մանուկ հավետ,
թյուր ու անկայուն թույրերն այդ ուրույն,
ինչքս զեղեցի
ուրվագծերում իրականության,
և քաղաքն այս գորշ գունազարդեցի,
երբ մի օր դժգույն,
իմ դատարկության մեջ՝ փոխադարձաբար,
ինքը զետեղեց՝
պատրանքներ պայծառ, տենչեր գույնզգույն,
խաբուսիկ ամառ...
Այժմ վերստին՝
որպես պչրուհու արտասվող երես,
տեղին ու դեղին,
տրտունջ է տեղում քաղաքի վրա,
լվանում անփույթ գույները պաստել,
ու գորշությունը՝ հին, անագորույն,
լցնում ջրհավաք աչքերիս մեջ ետ...

Լոնդո՞ն՝ ա՞խ, Լոնդո՞ն.
միգամած կղզյակ, մենության քաղաք.
Été étonnant,
Automne éternel...*

**22** օգոստոս, 1987, Լոնդոն

---

* Զարմանալի ամառ,
Հավերժական աշուն (ֆրանս.).

## ԱՄԵՆԱ… ԱՄԵՆ

Երկրի այլազան կատարների մեջ՝
լինես խորքում թե երեսն օվկիանի,
մեկը բոլորից
բարձր է ավելի:
Երկնի բյուրազան աստղ-աստղունքի մեջ՝
դիտես Լոնդոնից թե Բյուրականից,
մեկր բոլորից
վառն է ավելի,
ինչպես հերթափոխ մեր սերերի մեջ՝
ձմեռ լինի թե անցողիկ ամառ,
մեկը բոլորից
ջերմ է ավելի…

***

Դո՛ւ՝ ամենաբա՛րձր,
երևակվել ես
ամպոտ օրերիս մշուշում անգամ:
Դո՛ւ՝ ամենավա՛ռ,
լուսարձակել ես
նույնիսկ կուրացնող գիսաստղի կողքին:
Դո՛ւ՝ ամենաջերմ,
պաղեցրել ես այլ տոչորքս մոլոր,
տենչերս օտար,
բայց և ջեռուցել առագաստն իմ նոր՝
մնալով հեռու,

մնալով ուրու...
Ու թեև դու իմ վերջինը չեղար՝
մարվելուց առաջ,
վերջին քերթվածս քոնն է լինելու:
Ու թեև դու իմ միակը չեղար՝
մթնելուց առաջ,
միակ ու վերջին պատկերն աշխարհիկ
դեմքդ է լինելու,
ու թե առաջնեկ իմ «մա՜-մա՜»-ն չեղար՝
մեռնելուց առաջ,
վերջին բարբառս լինելու է քո
անունն ապօրեն,
դո՜ւ իմ ամենա՜, ամենա՜... ամե՜ն...

31 օգոստոս, 1987, Լոնդոն

## ՌՆԳԱՅԻՆ ԵՐԳ

«Ես հիմա միայն ինձ համար կերգեմ...»
**(Կոմիտաս, հոգեբուժարան)**

Երգիր, պոետ, երբ այլևս
գրչատելու խոսքեր չունես.
կամ հակառակը՝ այնքան շատ է,
որ կրճատելն էժան չարժե...

Երգիր թշվառ, երբ այլևս
արտաքսելու արցունք չունես,
կամ հակառակը, եթե պոռթկաս՝
պիտ քրքջաս... ջրվեժի պես:

Երգիր լքյալ, երբ սերդ աներ
շեյխաց մահճում մերկ գալարվի,
կամ հակառակը՝ եթե գա ետ
ու մահացու վերքդ լիզի...

Երգիր մարտիկ, եթե պարտվես
գիշատիչաց գոտեմարտում,
կամ հակառակը՝ երբ կհաղթես,
ու փառքը քեզ թվա տրտում...

Երգիր և դու, ո՜վ մահապարտ,
թե աղոթքը չի փրկել քեզ,
կամ հակառակը՝ որպես հպարտ՝
տաժան կյանքի պատժով մերվես...

Երգիր պանդուխտ, թե կանչն հողի,
հոգիզոնը գիլիոտինի,
կամ հակառակն՝ բացվեն դռներ,
«եւ քո երկրէն փախ տալ ձմեռ...»:

Երգիր երկիր, նույնիսկ այնժամ,
երբ սիրտ չունես և ոչ էլ... ձայն,
կամ հակառակն՝ բախտիդ ընդդեմ՝
ելնես արժան թատերաբեմ...

Երգիր երգիչ, դու էլ մեկ-մեկ՝
ռունգերիդ մեջ, լոկ քեզ համար,
զի ամենքս մի երգ ունենք,
որ չի հնչում այլոցն հարմար...

6 հունվարի, 1988, Մարսել

## ԱՆՀՈՒՆՈՒԹՅՈՒՆ...

Մանկության զեռ փողոցն զառիվեր
հատվում էր այնտեղ,
ուր սկսվում էր անհաս թաղերի,
անհայտ խաղերի
երանությունը:
Երբ քիչ մեծացա ու իմ առաջին հորիզոնն անցա,
գտա պարզապես ծանոթ տեղերի,
հայտնի տաղերի... շարունակությունը:
Լոկ նույնն էր տարբեր...

Բայց կյանքն իղձերի խայծ խայտաբղետ՝
եռքով, արբունքով, գեղ ու գեղգեղով
ինձ գայթակղեց:
Տենչացի՝ հասա, խածի՝ խենթացա:
Որքան խնդացի՝ այնքանով անեց
իմ... տրտմությունը:
Հագեցում չկար...

Վայելքներից վեր, վաղանցուկից դեմ,
ձգտեցի վերհառ սեր հարակատար՝
պարույր հրեղեն:
Որքան տրվեցի, որքան ջերմացա՝
այնքան... պաղեցին կանայք անկայուն:
Ես ուշ հասկացա,
թե արյունն հոսում՝
տաք ու պաղերի հակադրությամբ,

ինչպե՞ս է գտնում հանապազօրյա
իր գոյությունը,
իսկ մոլորյալը՝ պարույրի տեղակ՝
ջրապտույտի ձգողությունը...

Ընտրեցի սուզվել ամբոխի մեջ հոծ,
խառնվել այլոց՝
որպես մի չնչին բանական բջիջ,
օվկիանի կաթիլ,
ապրելու համար ծփանքն ծավալի՝
տիեզերաշունչ անդորրը փոշու...

Որքան լուծվեցի բազմության անզօծ՝
այնքան թանձրացավ... իմ մենությունը:
Հյուլեն իսկ ուներ ներաշխարհն իր գոց՝
ինքնայրումն անտես,
որն ինչպե՞ս կիսեր հարևանն համեստ՝
առանց կիզվելու,
առանց խախտելու խաղաղն հանուրի...

Բռնեցի ճամփան թափառումների,
Ճեղքեցի անգամ սահմանները փակ՝
փականք անսահման,
Խորհուրդ փնտրեցի քաղաքից քաղաք,
տաճարից տաճար՝ հավատք հավատի:
Որքան հեռացա... մոտեցա նույնքան
իմ ելակետին:
Կլոր էր աշխարհն ու նույնքան տափակ
իր էությունը...

Բայց ինչ-որ մի տեղ,
պետք է որ լիներ ունայնության դեղ՝
անհունության դուռ...
Եվ վերքերիս մեջ ջանացի պեղել
բանալին անեղ՝
իմաստությունը:

Որքան խորացա՝ այնքան... ծանծաղեց
лինելությունը:
Վերացում չկար, վեհացում չկար...

Այժմ տենչահար,
հույսս անկատար հառել եմ երկնին՝
հավերժությունը համառոտող կետ,
ոգու միջնակետ՝
արևին անքառ,
ու աստեղնային բազմակետերին՝
թեև ստույգ գիտեմ, որ չեմ հասնելու,
թեև ստույգ գիտեմ, որ վերջակետն իմ
մեկուկես մետր փուչ հողի տակ է:
Մի ծաղրիր, աստված,
ասա ինձ. մի՞թե
ընդամենն այս էր մարդուն մատչելի
ԱՆՀՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ...

31 դեկտեմբեր, 1987, Մարսել

## ԲԱՑԱՐՁԱԿ ԶՐՈ

Ոմն «ոչնչության»...

Հարցնում ես ինձ հար.
— Ի՞նչ ես ինձ համար:
Պիտ խոստովանեմ.
— Զրո պարզապես, այսինքն՝ ոչինչ,
այսինքն՝ ամեն ինչ,
այսինքն՝ ինքնին անարժեք համար,
այնպիսի չնչին, աննշան մի նիշ,
որ հավելվելով ամեն ինչության,
...բազմապատկում է արժեքը տասով՝
լինի այդ բերկրանք թե նվազուն վիշտ,
լինի այդ համեստ, անհամ մի ուտեստ,
թե անհուն արվեստ...
Զրո ես մի պարզ, կետ մի անիմաստ,
որով ջոկում եմ տափակ աշխարհի՝
բացասականն ու դրականը ճիշտ,
իմաստավորում՝ չափ ու չափանիշ:
Կոորդինատային «0»-ն ես այդ նույն,
ուր սկսվում է անվերջությունը,
ու կենտրոնանում ցոլքը աստղային,
փնչվում՝ հույսերն իմ...
«0»-ն ես և իմ խենթ տրամադրության,
սահմանն այն չեզոք,
որից հեռքն ես սառչում եմ մենակ,
վերև՝ ջերմանում, եռում եմ հաճախ,
խապար վերանում...

Դու այն հաստատուն «Օ»-ն ես անորս,
որից ծնվում է ամեն մի օրս,
տանում ժամ առ ժամ ինձ քեզնից հեռու,
մեծություններով գայթակղվելու,
                    բայց հեռանալով,
մոտենում եմ ես հիասթափ, հլու,
հանգում կրկին քեզ հավատարմաբար՝
                    այսպես ամեն օր...
Եվ նույն «Օ»-ն ես, որ հաշվեմոլոր
անցյալս ջնջեց և վերսկսվեց
                    գոյությունն իմ նոր,
ու երանի այն քեզ մոտ վերջանար...
Ուղեծիրն ես իմ շրջապտույտի,
                    գլխապտույտի՝
հավասարակշռության առանցքս նաև,
                    բայց արի ու տես,
հենց քեզնից եմ այն կորցնում միայն...
Դու աներևույթ զրոներն ես և՝
                    օղակներն համայն,
որ տեսիլքվում են իմ բիբերի մեջ
                    ու քո շուրթերին,
փրկօղակային քո մերկ թևերին,
լուսին կուլ տված ալեհույզ լճում,
գավաթիս եզրին, կարոտիս ճիչում,
գերեվար վզիս անտես բոլորքում,
                    և գլխիդ վերև՝
Քո արփիական սրբապսակում...

Հարցնում ես ինձ հար. «Ի՞նչ ես ինձ համար»:
Զրո պարզապես, նիշ մի աննշմար.
լի ու սնամեջ իմ կողակիցը,
առեղծվածային իմ գործակիցը,
                    այսինքն՝ առանց ում,
ինքս եմ դառնում «բացարձակ զրո»,
միավոր անզոր, գոյություն անգո,
և էներգիան իմ՝ չիք, զրոյական,

տատանումներս՝ խիստ կործանական...
Այսինքն՝ բախտիս բացարձակ թիվը,
գյուտս պարզամիտ, այնքան կարևոր,
որքան մարդկության համար՝ անիվը...

2 փետրվար, 1988, Մարսել

## ՍԵՐՈՒՑՔ, ԹԵ՞ ՔԱՓ...

Ինձ մի խառնեք փրփրազարդ ձեր խավերին,
ստորգետնյա, կրքագալար ձեր խաղերին,
որով ելաք հորդ կեցության
հարթ մակերես,
պղտորեցիք կյանքի խառնակ գետն էլ այնպես,
որ չի ջոկվում. սև ու սպիտակ,
վերև ու տակ,
նհանգ-նայադ՝
Էլ ո՞ւր մնաց սերուցք ու քափ...
Քողարկեցիք թե՛ հուսո ափ,
թե՛ հորձանքին ընդդիմացող,
ձեզ չլուծվող,
վեհանձնակատ խույթ ու խենթեր...
Ու թե ժայռ չեմ,
որ նրանց հետ ձեր հեղեղի առաջն առնեմ,
շերեփուկ չեմ,
որ մաներեմ հոսանքն ի վեր կամ հակառակ,
կամ թե ճայ չեմ,
որ թևարձակ ճախրեմ եթեր՝
գոյությունից լոկ անհրաժեշտ կեր կտցելով,
թրջվելով, բայց թրծվելով արեգնատենչ
թռիչքի մեջ,
լավ է իջնեմ գետի հատակ՝
քան հեղձաշունչ լողամ ձեզ հետ,
ճողփեմ ձեզ պես՝
փառք ու աղբի քափում խառնակ՝
միջատների, միջակների միջավայրում...

Խորության մեջ,
ուր իմ բախտից դուք դեռ չկաք,
գուցե գտնեմ չշաղափված մի մարգարիտ,
երազ անտիպ, չքերթված սեր,
հող աներեր, հուն ճշմարիտ,
բյուրեղացման կայուն անդորր,
ու վերացման ներհուն օրոր...
Սակայն՝ գիտցե՛ք,
դուք էլ ինձ պես անկարող եք,
ժամանակի, ձեր հեղեղի առաջն առնել,
և երբ անցնեն անցքերն շփոթ,
ալիք փոթ-փոթ,
առօրեական խաղ ու խաբկանք՝
դո՛ւք պիտ իջնեք կյանքի հատակ՝
որպես... տականք:
Եվ ջինջի մեջ, ճանաչի տակ,
պիտի փայլեն անգամ անհայտ
քանքարի խայտ.
չնչին բյուրեղ,
պիտի հառնեն հեղուկից վեր
վեհ կատարներ...

Ջի՝ մանկան պես, աշխարհն ամեղ,
թե ծնվել է շրջված, շիվար,
թեև դարձավ մեծ խեղկատակ,
չի կարող հար
քայլել երկար գլուխն ի վար,
պիտի կանգնի վերջում շիտակ...

**19 սեպտեմբեր, 1987, Լոնդոն**

## PERPFTUUM MOBILE*

«Միևնույն գետում երկու անգամ չես կարող լողալ…»

Արթնացա մի օր՝
այլևս ես չէի...
Ուրիշ արյուն էր իմ մարմնում հոսում,
ուրիշ մարմին էր պարապը փոսում,
և ուրիշ պարապ՝ նոր հոգուս ներսում:
Ինձնից միայն կար՝
հեռավոր մի հուշ, մոտավոր նմուշ,
խորթ լուսանկար,
ծանոթ ազգանուն...

Արթնացա այդօր՝
այլքից աննշմար դուրս եկա փողոց:
Փոխված էր աշխարհ...
Նույնը չէր նույնիսկ մարդկությունը հին,
փերին հարևան դարձել էր պառավ,
թոռներն երեկվա թոռներ ունեին,
և շատերի հետ՝ անմահ կարծեցյալ,
մայրս անգամ չկար:
Նույնն էին միայն՝ ջրիկ գոյության
երթը գետահոս,
եթերն հաստատուն...

---

* Հավերժական շարժիչ (լատ.):

Արթնացա նույնօր՝
տարբեր գտա և բան ու բնություն,
թախիծ ու ծիծաղ,
մղձավանջ-երազ:
Բարձունքներն անհաս բլուր էին պարզ,
անդունդներն անկման՝ առավել ծանծաղ,
խաղերում հասուն կար և նպատակ,
նպատակում՝ խաղ,
հորիզոնում՝ պատ, անհունում՝ հատակ...
«Հավիտյան սերերն» էին անցողիկ,
անձկությունը՝ ձիգ,
մենությունը՝ լիք, փուչությունն՝ համայն,
դրույթները՝ նեղ— տիրույթները՝ լայն,
օրենքներն՝ սոփեստ,
իրավունքն՝ համեստ,
սրբությունը՝ քիչ, աստվածները՝ շատ,
հաստատն՝ անորոշ, անորոշն՝ հաստատ,
գտածս՝ չնչին, կորուստներս՝ անչափ,
և օրըստօրե տարիներն՝ երկար,
կյանքը՝ նույնքան կարճ...
Այս թոհուբոհում նույնն էր մնացել,
չարիքից պրծած մանկությունս չար՝
որն ինչպես առաջ, որպես ծուռմիտ արջ,
ճառագայթ ճանկած,
ջանում էր համառ արև մագլցել...

Կարթնանամ մի օր
այն թաղամասում, ուր չեն արթնանում,
քնում են անխռով ու անխռմփոց:
Փոխված կգտնեմ անկողին ու նինջ,
նախաճաշս՝ հում...
Ո՞վ պիտի լինի հարևանն իմ դինջ,
ի՞նչ շուն պիտ միզի տանիքիս վրա,
ինքնությունն իմ նոր, անձնագիրս քարե
ո՞ւմ պիտի պետք գա...
Կներվեն գուցե,
իմ արած-չարած մեղքերն երբեմնի,

Ու կշնորհվի սեր ինձ ետմահու
(հազար երանի...):
Արած-չարածն իր Տերն հանկարծ զղջա,
Ու վերջ ի վերջո իմ բախտն էլ ժպտա
(գրողը տանի...),
ես՝ բարեբանվեմ, դու՝... ջախտավորվես՝
կին իմ հարսնացու,
որ չցամաքեն կրծքերդ նարինջ
առանց տարփածու...
Չէ՞ որ փոխվում է կյանքում ամեն ինչ...
Փոխվում են հավերժ ու ամեն վայրկյան,
փոխվում տենդ ու տենչ, աստղեր ու աստված,
աշխարհը ունայն,
տիեզերքն համայն:
Բայց հարափոփոխ հոսունության մեջ
չեն փոխվում միայն՝ պարն լինելության,
գույարն երկվության,
հույսն երանության...

22 հունվար, 1988, Մարսել

## ՆԱ, ՈՐ ՊԻՏԻ ԳԱՐ...

Մայրությունն հղի աշխարհով էր լի...
Նա, որ պիտի գար.
տալու երազին մորեմերկ երկունք,
դալուկ տիրուհուն տանտալյան ցավի՝
ցնծություն ծավի,
արցունքներից ետ՝ ծիածան ժպիտ,
ցայգերին ժպիրհ՝ նիրվանային նիրհ,
լռակյաց սիրուն՝ երրորդության ճիչ,
բախտին՝ աչքալույս,
ու աշխարհին հետ՝ կարճ մի շրջազգեստ...
Չունեցավ ժպիտ, չունեցավ արցունք,
անգամ կենաց ճիչ՝
շրջազգեստը զուր մնաց տարակույս
աչքերի արբիչ...

Նա, որ պիտի գար.
դառնալու համար մայրիկի թե հոր
լուսանկարն հին, մանկությունը նոր,
հանգուցյալ թե ողջ
անվանում մի զատ, հուշ մի հարազատ,
կենսագրությունը մահվանից այն կողմ,
տոհմական նոր որմ,
հուսո շառավիղ
ու տոտիկ-տոտիկ գալիքի շավիղ,
դառնար հույզերի ոսկեվարս տավիղ,
աշակերտ ուշիմ, վայելչության [illegible]իշ,

մարդկությանը բիծ՝ անմեղություն քիչ,
բողբոջ նորոգիչ ու բջիջ առողջ,
սիրո չափանիշ,
դառնար հարսնացու, դառնար մայրացու,
կեցությանն անձուկ՝ կենսություն նեցուկ,
ունայնության դեմ՝ խինդի ապավեն
ու ծերության դեմ՝ խղճի ապաքեն...
Նա ինքը երբեք՝
չունեցավ անուն, չունեցավ ոչ դեմք,
ոչ ոսկեզօծ ծամ ու ոչ ժապավեն,
դարձավ միմիայն հավերժական վիշտ,
դառնության ավիշ...
Նա, որ պիտի գար,
ավելացնելու արվեստին մի խոսք,
քնարերգությանը՝ գուցե մի նոր ոտք,
քնարին այլ լար,
կամ որպես գրիչ՝
իմաստությունը փոխելու փոքր-ինչ:
Որպես նկարիչ՝ բնություն թե կերտ,
թերևս իրոք պատկերեր այլ կերպ:
Կամ հանց երաժիշտ,
հղանար թարմ երգ
համաշխարհային համերգում պղերգ,
և ինքը դառնար մարդկային վեպի
պարծ հերոսուհի կամ պարզ մի նաժիշտ
և վազեր դեպի՝
երազներով լի, խոնջ ու հևիհև,
անցվոր աշխարհի կանգառն երևի՝
իրացնելով և
իր նախորդների երազանքը կես...
Բայց նա, որ պիտ գար,
չբերեց նոր խոսք, ոչ քանքարի հոսք,
ոչ շունչ ու ոչ հևք,
չիրականացավ անգամ ինքը հեգ՝
չեկավ պարզապես...
Ու թե չավելցավ աշխարհում ոչինչ,

պակասեց սակայն անհրաժեշտ մի բան՝
ո՞վ գիտե թե ինչ,
իսկ ոմանց համար
ունայնությունը փոսեց իր ճամփան...

Մայր որդեկորույս՝
օ՜, տառապանքի դիցուհի անհույս,
ծննդատան գորշ ապակուդ հետև՝
անարցունք, անցուլ,
դիտում ես դեպի կյանքը հեռացող
նորածին գրկած երջանիկներին,
քեզ բախտդ փարթամ փնջեր չբերեց,
արևն էր ժպտում ամեն օրվա պես,
զեփյուռն էր փչում հեռ թե անտարբեր
տարուբերելով խոհուն կատարներ,
ու չեմ հասկանում՝ քո աչքերում հեզ
ողբն ահագնամեծ ո՞նց տեղավորվեց։
Ժայռն է փշրվում քամու ապտակից,
անզոր փլուզվում՝
թեկուզ չի հուզվում,
քեզ մահն ապտակեց քամու պես անտես,
ինչպե՞ս մնացիր ոտքերիդ կանգուն,
ու թե մնացիր,
քո մեջ փոթորկող ցավն անծայրածիր
ինչպե՞ս հողեղեն սրտիկդ նկուն
չարեց ցան ու ցիր։
Գիտեմ պիտ ասես. «Ժայռը հույս չունի»։
Հազար երանի՜...

Աշխարհն լքում են այլերն մեռնելով,
նա, որ պիտի գար՝
երազով երկար, հույսով ցավագար,
աշխարհի բազում երազների պես
ժամանեց մեռած...

**27 հոկտեմբեր, 1989, Դիլիջան**

## ԱՇՈՒՆ Է, ԱՇՈՒՆ...

...Անասուն ու շուն փարախ են քաշվում
　　　　վերածնվելու,
տերևներն անշունչ չվում են խումբ-խումբ
　　　　քամու ռունգերից,
կմախքն անտառի խնամքով մաշկվում
　　　　կենտ-կենտ ծունկերից,
ծառը սափրվում մորուք-ունքերից,
ողջ բնությունը խավարտ տունկերից,
պատրաստվում ասես վերընդունելու
　　　　գեղվիրաբուժում
ու մաքրվելու անող սունկերից:
Գիշերների հետ երկարում են խուն
　　　　ստվերներ սողուն,
հանց ճատրակային խաղաքարեր սև,
　　　　զորք վրիժառու:
Օդն է արցունքվում խեժախունկերից
　　　　տրտմությամբ լեցուն
ու ծծում չայրված օրերի ծծումբ:
Անձրևն հյուսում է հուշի աբրեշում,
վարագուրելով ամառը հեռու,
բամբակն արտերի ելել է երկինք,
ծանրությունն իջել խաղողի անստինք
　　　　թարթիչաց ցողին:
Հողը հնազանդ խմում է ումպ-ումպ
տեղատվության անդեղյա լեղին,
ցամաքել են ցոփ երակ ու առու,
սպառվել է արդ արբունքի օղին:
Սառցակալվել է լճաց հայելին,
արևն իրենով չի հմայվելու,
չի հարդարելու ծամը ցանուցիր,

Էլ չի թովելու, էլ չի բովելու:
Ձմեռն է խուժում,
ծածկում թումբ առ թումբ,
ամայությունը թոշնած ու դեղին,
բնաշխարհն համակ դարձել է ասես՝
սիրո տապակեզ տարփանքներից ետ,
լքված առհավետ,
կույսի ճերմակ ու ճմռած անկողին:
Գուժում է սիրտս
հրաժեշտների տագնապը նորից,
սիրտս՝ իղձերի պտուղ դեռ տհաս,
սմքում է սառից,
տնքում է ցավից,
վիժում օրպակաս երազներ խշշուն
ու չի դիմանում կորստյան դողին:
Կա՞ որևէ տեղ անցյալի բուժում,
մոխրին՝ բալասան, հուշին՝ վիրակապ,
կասկածի որդը սիրտս է հորատում
ու չեմ հավատում
գալիք օրերի փաթաթանների փարատող ուժի
Վհատությունս խորհուրդ է հուշում.
հանձնել եմ ուզում
հոգիս հուսահատ անցնող-դարձողին,
կամ որպես գարնան փափագի փալաս՝
կապել հավատով հին Կենաց ծառի
ողորմած ողին:
Աշուն է, աշո՜ւն,
այսքան գեղեցի՞կ ու այսքան թախծո՞ւն,
փառք ու երանի նրբին ներբողին,
մխիթարություն կերտող քերթողին
և հավերժության նորոգ կոթողին:
Աշուն է, աշո՜ւն՝
ժամն է նահանջի,
մնացեք բարով հուր սեր ու հույսեր,

մնացեք բարով մինչև նոր գարուն,
gուցե լինեմ դեռ,
գուցե ծառն իմ ծեր բողբոջի նախշուն,
վերակենաչի՝
առանց սարսուռի, առանց տրտունջի:
Աշուն է, աշո՜ւն...

30 10 1989, Դիլիջան

## ՊՈԵՏՆ ՈՒ ՊՈՌՆԻԿԸ

Պոետն ու պոռնիկն հակառակամերժ
    բարեկամացան,
սիրեցին նույնիսկ, խենթացան անկեղծ
    ու երջանկացան:
Մեկը հոգնել էր միջաստեղնային
    դեգերումներից,
թե՞ թառ էր փնտրում մի նոր թռիչքի,
մյուսը՝ հագեցել հաճույքներից սին
ու կարիք ուներ մեկ այլ խմիչքի:
Մարմինն այսու թևեր ստացավ՝
վերելք վայելելով փետրով պոետի,
փետուրն ընկղմեց մի թանաքաման՝
որոգայթ մի թով, ըղձանքով ձյութի:
Ու գրվեց սիրո տարօրակ առակ՝
երանությամբ լի, առանց ձանձրույթի,
և՛ քնքշություն կար, և՜ կիրք անառակ,
    քաոս ու փարոս,
իսկ հավատի մեջ՝ վկա է աստված,
    կսկիծ ու կասկած:
Այսպես ապրեցին որոշ ժամանակ,
ամբողջացումով մարմնի ու հոգու
    և տիեզերքի,
զի հավերժաբար ձգում են իրար
    երկիր ու արև,
միաժամանակ վանում են թեև
    միշտ մեկզմեկու:

Այսպես ապրեցին որոշ տարիներ՝
տատանումներով անկում-վերելքի,
ըմբոշխնելով թե տարերքը խենթ,
թե կատարը կենտ,
թե մեռյալ կետը ամեն ալիքի:
Սակայն հանգելու,
բայց թե տրոհման կարգն էլ պիտի գար
կարգ է բնության, հարց է բնույթի,
թևավոր ցլան թռիչքը շինծու
որքա՞ն պիտ տևեր,
որքա՞ն պիտ թևեր
դեպ քնարական անհունը եթեր,
որքա՞ն պիտ մնար մարմինն անոթի,
որքա՞ն պիտ մնար ճայը ճահճուտում,
ստեղծված էր նա սլացքի համար,
թեև պոռնիկի լքումից շիվար
լոկ մեկ ակնթարթ
հայտնվեց ակամա
հուսախաբության մթին անդունդում:
Սիրուն հակառակ
վանումն վերածվեց խորն ատելության,
զի կատարվածը առուծախ էր պարզ.
մարմինն էր ծախել պոռնիկը նորից
ոգուն ոգելից,
պոետն իր հոգին՝ մարմնի դիմաց...

Աբովյան, 27 օգոստոսի, 1991 թ.

## ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ԴԻՑՈՒՀՈՒՆ

Ս. Ա.-ին

Լուսանում ես....
Լուսանում ես դանդաղ, անփույթ,
հավերժության ծովից կապույտ
ափ դուրս եկող
արփաճաճանչ հարսի նման՝
և՛ մերկ, և՛ սուրբ
խորախորհուրդ:
Աշխարհն արար՝ կղեր ու գող,
պոռնիկ անտուն, պոետ անքուն,
թե մահապարտ,
ծառ ու գազան, խաչքար ու վարդ,
թե գերեզման,
մագնիսացած աներևույթ
շրջվում են լուռ ու անարգելք
լուսավորյալ դեմքով դեպ քեզ,
դեպ Արևելք,
դեպ երբեմնի Աղոթարան...
Լուսանում ես...
Լուսանում ես դանդաղ, անփույթ,
զեփյուռումով շշունջն երգիդ՝
առաքինի տանտիկնոջ պես
տիեզերքի:
Ու աստվերներն ամեն ծուռմիտ՝
իրենց տեղակ քո իսկ շիկնած
հայացքիցդ ամոթահար,

շրջվում են ետ կոկիկ-կոկիկ,
կենտրոնախույս,
ասես նման
ախտապաշտպան թարթիչների։

Լուսանում ես...
Լուսանում ես դանդաղ, անփույթ՝
սփռելով լույս, սփռելով հույս
արցունքաշաղ,
մեղսոտ երկրի ու մթնշաղ
բախտիս վրա:
Բայց այս երկդեմ աշխարհի պես
պտույտ-պտույտ,
բազմափաթույթ սրտիս կեսը
թաղվում է այլ մի մթան մեջ
թախծակորույս՝
ո՜վ հավատի միգամած կույս.
հոգուս խորքում նստվածք դարձած
ձախորդ կյանքի կորուստներից,
ժամավաճառ կարոտներից,
ափսոսներից,
սիրեններին, կենտավրոսին,
խենթ-իմաստուն կիսամարդուն
դեռևս անհաս,
սիրո անվարձ
վեհությունից աստվածային:

Ահա նորից լուսանում ես:
Լուսանում ես դանդաղ, անփույթ...
Այսուհանդերձ ուշանում ես,
իրիկնամուտ
պատանեկան պատրանքներիս
փրկությունից,
վեդայական ո՜վ լուսավարս
հավերժ Ուշհաս...

2 մայիս, 1991, Մարսել.

***

Ա. Ն -ին

Ես կամ:
Փակիր աչքերդ, որ էլ չլինեմ՝
գոնե... քեզ համար...

Աբովյան, 7 հոկտեմբերի, 1991



# ՈԳԵԿՈՉ

ՊՈԵՄՆԵՐ

## ՄԵՆԱՎՈՐ ԱՍՏՂԻ ՄԱՀԸ

Քնած էր անխռով կեսը աշխարհի
խավարում խարխափ,
մյուս կեսում արթուն կյանքն իր վարարուն
մրջնաշխարհային կենցաղն էր վարում,
բնականաբար
արարածն զբաղ չնկատեց իսկ,
թե ինչպես հեռվում, տիեզերքում տար,
առկայծող մի բիբ,
մենավոր մի աստղ մեռնում էր դանդաղ,
աննկատ մարում:
Ծնունդն հայտնի չէր, և ոչ էլ նույնիսկ
հասցե ու բնույթ,
դիտակներն երկրի չէին որսացել,
դասակարգված չէր մատյաններում գեր
որպես գիտանյութ:
Վառվում էր՝ ինչ փույթ,
ով ինչպես վարվեր՝ նա պիտի վառվեր,
ցոլար, սպառվեր,
այդ էր գոյության իմաստն իր վերուստ,
մնացյալն արդեն գործն էր Խորհրդի:
Այդպես ապրեց էլ՝
անհունության ու անհայտության մեջ,
միլիոն տարիներ,
որը մարդկային չափանիշներով
կոչվում է մի կյանք,
նեկտարով արբշիռ թիթեռի համար՝
ողջ հավերժություն:

Ի՞նչ տարբերություն տարի թե վայրկյան,
եթե չես թռչում կամ թե հանգած ես,
մինչդեռ աստղերը հեռվից են միայն
միատիպ, անշարժ ու պլպող թվում մեզ,
սակայն բոցերի կամ թռիչքի մեջ
առաջինը հենց
ժամանակն է, որ այրվում է անտես՝
հալվում, կրճատվում,
եռացող տարի ու սառած վայրկյան
սոսկ հավասարվում
տարատևությամբ՝ ոչ տարողությամբ,
թվաբանորեն՝ բայց ոչ թանձրությամբ...
Եվ աստղերը մեծ՝
յուրաքանչյուրը արև տարաչափ,
հանճարների պես վառվում են հախուռն,
ժայթքում, ճառագում՝ այրում թեկուզ կարճ,
բայց մահից առաջ
պոռթկում են պայծառ բեկորվելով խուռն,
ծնում նոր աստղեր, թողնում լուսեղ ամպ՝
առեղծվածային սև խոռոչ ոմանք,
գերհզորները՝
անմահության մի պսակ երփներանգ,
սիմֆոնիա մի գեղ, նեպլյուլոզ շքեղ,
ու արժանանում անվանի կոչման
կամ աստվածացման:
Մինչդեռ եսասեր աստղերը գաճաճ
տատասկների պես չեն ծաղկում կարգին,
խնայողաբար տնտեսվելով հույլ
ցոլատևում են թեև քիչ երկար,
հանգչում են տկար,
կորչում են անհետ՝
տարրալուծվելով տարածության մեջ
հանց փոշեհյուլե:
Տիեզերական բարքով համայնքի՝
առանց քմայքի,
առանց բանավեճ

իր մոտ ու հեռու հարևանաց հետ,
սպառեց համեստ աստղը հոգեվար
հրեղեն արյան պաշարն իր պատշաճ,
մենավոր հոժար.
չկազմեց երբեք համաստեղություն
թե կուսակցություն,
կամ խորհրդավոր միգամածություն,
չունեցավ անգամ մոլորակ մի էգ
ու չարաճճի արբանյակներ հեգ՝
երբ այլք երբեմն
ձգում են իրենց ամբողջ մի հարեմ:
Եղան իհարկե անցողիկ սերեր,
պատեհ-անպատեհ ընկերներ թափառ,
այցելուներ լենտ՝
գիսաստղեր կեղծամ, մետեոր մոլոր
ու աստղներ խենթ,
որոնք սեփական կրակ չունեին,
թրթիռ չունեին, հրթիռ իսկ չէին՝
լոկ շիկացած քար սլացքի թափից,
շփումներից շեշտ,
հայելումից հեշտ...
Ոմանք վանվեցին ինքնապանվելու՝
քամիների մեջ, բոցերից հեռու,
այլոք նետվեցին հնոցն իր հոգու,
վայելելու այրման խենթությունն հակիրճ,
բերկրանք կարճատև:
Թող վայելե՛ն՝ դե՛ ինչ,
բայց յուրաքանչյուր հպումից հալանց,
շփումից թեթև,
ջերմից ավելի մնում էր թախիծ
անբացատրելի,
մխում մի բացատ մոխրավերքերի՝
սև բծեր անանց...
Մենավոր աստղի
բարեկամները արևներն էին՝
հեռավոր թեև,

ընտանիքն իր մեծ՝ տիեզերքը ծեր:
Կեզ ու անտրտունջ
այսպես էլ ապրեց միլիոն տարիներ,
միայնության մեջ ականջելով մունջ՝
փսփսուքները մարդկային ցեղի,
մեղեդին մրմունջ աստղաստեղների.
Ունեցա՞վ արդյոք
կարոտի բորբոք,
հարևանորեն դիտելով թաքուն
աստղոց զուգորդված,
կամ թե աստղազարդ երկնով հմայված
երկրի երազուն սիրահարներին՝
չիմացավ ոչ ոք:
Չիմացավ ոչ ոք.
մենավոր աստղի սարսուռներն անքուն,
երբ ամենակուլ ծովում փոթորկուն
նավաբեկյալներն իր լույսով էին
փնտրում հուսո ափ,
անհունության մեջ մինչ ինքը չուներ
ոչ մի հանգրվան,
որն հրո համար թերևս ծովն էր,
ո՞վ իր ծարավին տվեց ջուր մի ափ:
Մարդիկ բախտն իրենց կապում էին հենց
իրենց քայքայման հետ,
բայց ո՞վ էր արդյոք մենավոր աստղի
բախտով զբաղվում,
հույզերով հուզվում...

Քնած էր անխռով կեսը աշխարհի
խավարում խարխափ,
Մյուս կեսում արթուն կյանքն իր վարարում
միջնաշխարհային կենցաղն էր վարում,
և այսպես զբաղ
ոչ մի արարած իսկ չանդրադարձավ,
որ երկնքում տար մի աստղ մենավոր
ապրում էր օրհաս,
մահանում դանդաղ:

Ի՞նչ փույթ մի աստղ ավել կամ պակաս,
քանի՜սն են ծնվում ու մեռնում անվերջ
կյանքի հորձանքում,
արժե՞ր լացուկոծ անշունչ ու անցավ
մի աստղի համար,
երբ գլխացավն է շատերին տանջում:
Մինչդեռ հեռավոր աստղի մահվան հետ
երկրում ինչ-որ տեղ ծնվում էր այլ վիշտ՝
ոմն իմաստուն, գուցե մի պոետ,
խուճապի մեջ էր երևի հանգչում,
կամ մեկի բախտը խամրում էր ընդմիշտ,
մյուսը աղաչում...
Լոկ մի աստղագետ,
նկատեց մթնում հոգեվար մի ամպ,
ռադիոսարքերը ճղճղացին բամբ
անդրաձայնային կարճ մի հառաչանք՝
ո՛չ փրկության կանչ, ո՛չ անգամ մի ՍՕՍ:
Տրվեց ահազանգ.
տիեզերական բազմազանության մեջ
անընդգրկելի,
ողջակիզվում էր աստղ մի անհայտ,
անկրկնելի,
ափսոս էր, ափսո՜ս,
գեթ գրանցեին մահը ակնթարթ,
բացահայտեին հայտնագործում նոր
ու կազմվեր «ակտ»՝
հոգեվարն անբախտ կունենար գոնե
գիտական թափոր...
Բայց հազար ավա՜ղ,
երբ երկիրն որսաց ուշացած հառաչ,
աստղը մենավոր
մարվել էր արդեն տարիներ առաջ...

29 10 1989, Դիլիջան.

## ԽՈՍՔ ԱՌ ՔՐԻՍՏՈՍ

Խոսիր ինձ Քրիստոս,
Խոսիր ինձ անձամբ՝ առանց առաքյալ,
Իմ և քո միջև միջնորդ չեմ ուզում,
Իմ և քո միջև ի՞նչ Պողոս-Պետրոս,
երբ թութակներին վարժ նմանակող
դամբաշ «սրբերիդ» բամբ բարբաջանքից,
բան չեմ հասկանում:
Բարբառիր դու ինձ քո անապատից,
որտեղ որբերի ոսկորտիք չկար,
և այն քո բախտից, չէր կոչվում Տեր-Զոր,
ու քառասուն օր
փորձության սովին դու լոկ դիմացար...
Կրկնակի անգամ
քառասուն անվերջ քառսունքի տարի,
քաղաքակրթության անապատում պաղ
ու քաղաքական բավիղներում կեզ՝
փախումով առկախ,
դիմանում եմ ես,
մարդասիրական բառ ու ճառերի
կոկորդ մխրճված «կշտության» այն,
որից ծորում է լորձ մարդակերի
ու բյուր-բյուրազան մարտիրոսների
լեշահոտ միայն...

Առանց խաչբառի, առանց բառախաղ՝
աղոթք ու սաղմոս, ու առանց ջարոզ,
բառիր ինձ Քրիստոս,

մորմոք մրմնջա քո փայտե խաչից,
որին փարվեցիր փառքի չորս մեխով,
                    բայց նայիր և ինձ.
ես՝ միլիոն ու կես ցավ հավաքածու,
ես՝ միլիոն ու կես մահ հավաքածու,
ես՝ միլիոն ու կես ողբ հավաքածու,
մեկ ու կես միլիոն անխաչ խաչվածով,
խաչված եմ ես էլ, խաչված եմահա՜,
                    խաչված եմ՝ նայի՛ր,
իմ ժողովրդի քերծ ճակատագրին,
հոծ նահատակաց դիերին ւանգո
ու նրանց չեղյալ խաչքարին հսկա,
ողբացյալների ետմահու կանչին,
                    իմ ցասման խաչին,
                    ֆաշիզմի աջին,
քո հավատամքի բորբոս կանաչին,
ու իմ հավատքի դատարկված փարչին...

Ձայն տուր, ո՛վ Քրիստոս,
արձագանքիր քո վերելակ գահից,
առանց ընդվզման բացատրիր անխոս,
                    ըմբոստ անօգիս:
                    Այդ ինչպե՞ս եղավ.
դու ելար խաչին, խաչը մեր վրա,
պաշտեցինք խաչդ, խաչ քաշեցիր դու
                    մեր կեսի վրա...
Մի լռիր, ասա, շիտակ ու հատու,
                    ինչպես պատահեց,
որ խաչելությամբ դու միայն մեկ անձ,
հար աստվածացար ու համբարձվեցիր,
մեկ ու կես միլիոն... նրանք ի՛նչ եղան՝
                    գոնե սրբացա՞ն...
Մեր մատաղները՝ անմեղ, անբասիր,
                    Տերն ընդունե՞ց...
Մեռելատեր եմ, մեռելներս տուր,
կամ էլ պատասխան՝ հարիր ու հակիրճ.
մեր այդ զոհերով գեթ զորեղացա՞վ

զորագրյալների գունդդ հրեշտակաց,
թե աստվածային հաշվարկով մի թյուր,
լոկ այս աշխարհիկ դժոխքն ունձացավ,
սադայելի բին,
հպատակներով սուրբ թե սատանա...
Ջուր մի սպառնա,
պատասխանիդ պարզ՝ պատիժս էլ կցիր,
թող որ հենց ինձնով մեղսոտ աշխարհի
մեղքն ավելանա՝
ես ավելանամ դժոխքիդ բովին՝
ոնց կոճղ թերևս.
ու մեկ ու կեսին՝ միավոր ևս.
բայց խոսիր Քրիստոս, լուսավորիր ինձ՝
ասա ինձ Աստված,
Աստված ես քանզի.
մեր նահատակաց հոգով անաղարտ,
գեթ ապանեխվեց շնչաօդը ջին,
թե՞ դիակներով մեր նեխ ու պարարտ,
ու հայ մայրերի, հայոց որբերի
լացով ռոոգի՝
լոկ, սոսկ ու միայն,
պարարտացրինք հողն այս ապականն...

Ո՛չ, էլ մի խոսիր, մի խոստովանիր՝
ոչ էլ խոստացիր,
այսքանից հետո ի՞նչ պիտի ասես,
այսքանից հետո եկ դու հասկացիր,
որ ճակատագրով նման եմ ես քեզ,
և ապրել եմ քո տառապանքը հետտ՝
ապրել եմ նույնը.
քեզ Հուդան դավեց, ինձ՝ հուդայությունը,
նախընտրեցին քեզ բիրտ Բարաբբայից,
ինձ բարբարոսից,
քեզ Աստված լքեց, ինձ՝ մարդկությունը...
Բայց քեզ պես ես էլ հարթություն առա՝
թեև սոսկ կեսով ու դեռ լոկ կիսով,

սակայն կիսատված երբեք չդարձա՝
ոչ էլ սուրբ շինծու...
Եվ որպես հեգ մարդ ու մահկանացու՝
դեռևս խոցոտ անգամ խեղածո,
դեռևս զոհյալ, լքյալ ու ժխտյալ,
ու լի արդարի վրեժով բարի.
այսքանից հետո
քարոզեմ պիտի՝
աշխարհի համայն տառապյալներին,
մարդասիրություն ու սեր մարդկային...
Լսիր ինձ Քրիստոս, եկ ինձ հասկացիր,
այսքանից հետո եկ դու հայացիր,
քանզի ունենք և հանուր դավանանք՝
ինչ եղծ Եհովա,
Արեգակն արդար,
որին դավեցինք այդ մի ուրանա...
Եվ հանուր մեղքի ի ապաշխարանք,
դու Աստված ես մարդ,
դու Քրիստոս, իսկ ես՝ խեղճ մի քրիստոնյա,
եկ երկրպագենք մեկտեղ ու խոնարհ՝
էակների ու էության պարծ ու արծարծ
միակ Աստված՝
արփիական Աստվածությանը
մեր մոռացված...
Եվ թող վերստին ամեն առավոտ
Արևն ապաքող,
դառնա սրբության պսակ արդարև
լինելության ու աշխարհի վերև:
Չարը ժպտադեմ, չեզոքն երկերես,
թող լույսով լվան արատներն իրենց՝
ապա արևկող,
փափկանան բարվոք բարության ջերմով:
Մեղքերը ոմանց՝ ստվերներն ինչպես,
թող որ կարճանան դեպի անխուսափ
ժամը զորացյալ...
Վերքերը այլոց, ապիներն անցյալ,
սև բծերն որպես լուծվեն անճշմար,

արդարության հոծ ճանանչում անդեղ։
Ճշմարտությունը՝ ճառագայթոց տեղ,
կույր աչքն էլ ծակի։
Արցունքն անմեղ՝ արեգակի հետ,
չքանա անհետ՝
ոնց ցողը ցայգի։
Քրտինքը հալալ՝ մեռոն դառնա վես,
ու օծի միայն խոնջի վարդապետ,
ու արարման ծես։
Իսկ նահատակաց հոգիներն անշեջ,
թող խաղաղությամբ առկայծեն հավետ
մարդոց խիղճն հսկող ափափիբի մեջ…
Լոկ այդ ժամանակ, երբ Լույսն Եղիցի՝
այս անգամ արդեն վստահ ու վսեմ,
ով դու հայաբախտ իմ եբրայեցի,
բերանս կառնեմ
կրավորական բառդ հայերեն՝
երիցս ԱՄԷՆ…

12 ապրիլ, 1987, Լոնդոն

## ՔԵՐԹՈՂ ԵՆ ՄՈՐԹՈՒՄ...

Ա՜խ, Վարուժան, Վարուժա՜ն...

Քերթող են մորթում:
Անասունի պես: Կեռ կաղնուց առկախ:
Ամբողջովին մերկ՝ նորածնի նման,
ու արյունլվա
Ղասաբներ որպես, մորթին են քերթում,
ու զի գիտակներ միս ու ոսկորի,
բանիմացորեն ճեղքում են նաև,
մորթվողի երգն ու հոգու վերքը.
**«Հանոյքը ցավի ու ցավն հաճոյքի...»,**
նախընտրում մեկը...
**Խրախճանք** կա, բայց ոչ որկորի՝
ինչ փույթ մաշկ ու միս,
սովամահներով կուշտ են լիուլի,
**Էֆենդու** ի՞նչ **քեֆ** առանց ճո՜խ հանդես՝
բանաստեղծության գեղձն են որոնում,
ոգեղինության կույր թե լավատես,
աղիքն անմեկին...
Տալիս է ալլահ բախտ ամեն մեկին՝
ըստ արտի գ յ ո ր ա,
բայց այս գյավուրի բախտն ու սիրտը հենց՝
տվել է իրենց,
քանքարն էլ վրա՜ն՝ ի՜նչ ընձա բախտի,
վ ա լ լ ա՜ հ, մ ա շ ա լ լ ա՜ հ...
**«Արեւմտեան կողմն աշխարհի**
**խաղաղութիւն թող ըլլայ»...**

* * *

Քերթող են մորթում:
Թերարժեքության խինդով գռեհիկ,
թափում են գետին փոստ ու փորոտիք,
արյուն են ոթում՝
վարդերի նման այստեղ ու այնտեղ,
շռայլության տակ հողն է ճռճռում՝
դեռ չի էլ մարսել լեշերն երեկվա,
բայց թե խենեշին ի՞նչ փուչ հագեցում,
այդքան փնտրված հագագը չկա,
ալլահը ագահ մեկ էլ երբ կտա
հանճար մսացու...
Մինչդեռ քերթողի
լյարդ ու թոքի մեջ, սիրտն արմատախիլ՝
**ճանանչով լեցուն սափոր սերմացու,**
հեգ թպրտում է հագ հողի վրա՝
բլթում, բլբլթում.
**«Արեւմտեան կողմն աշխարհի,**
**բերրիութիւն թող ըլլայ»...**

* * *

Քերթող են մորթում...
Կեռում են աչքերն՝ հուսաբեր զառեր,
չարխափան հուռութ,
քոռանում է իսկ խանչալն պողպատյա,
բայց Տերն իր տեսուչ, աչքն էլ չի թարթում:
Աչքդ լո՜ւյս Խավար, դարձար պաշտոնյա՜,
ո՞վ կգուշակեր աստծո՜ պարապուրդ:
Պոկում են քիմքից,
հաղորդության բուն նշխարը մսե
ու աղոթքի հետ՝
անհազանգն այլոց փրկության զանգից:
Արձագանքում են ժայռ ու ապառաժ,
հառաչին՝ բառաչ,
սակայն արքատաշ խորան ու գմբեթ
ծեր էլ չեն տալիս:

Այնինչ Փրկիչի ականջներին զույգ՝
կույր արդարու թյան աչքերի նման,
իջել էր չալմա.
«Հյուսիսային կողմն աշխարհի
օրհներգութիւն թող ըլլայ»...

* * *

Քերթող են մորթում...
Փրթում են փնջով նյարդերը քնար,
և կսկծահունչ ու ջղագալար
սարսուռներից թարմ,
փշաքաղվում է անտառը անգամ՝
բայց մարդոց խիղճը քո՞ր էլ չի գալիս:
Դանակը դահիճ դարձած կնտնտոց,
հանճարի վերջին լարերի վրա,
ջութակում է դեռ մի գլուխգործոց,
ռեքվիեմ մի վեհ թե՞ օրատորիա:
Երգից հոգեվար,
չարություն է լոկ ու անզոր լալիս՝
բայց կիրթ աշխարհը ծափ էլ չի տալիս...
Քնար, հեծկլտա՜.
«Հարաւային կողմն աշխարհի
սիրերգութիւն թող ըլլայ»...

* * *

Քերթող են մորթում...
Լրբությամբ առլի՝ սիրուց ամայի,
արտումն աշխարհի,
ուր հին դրախտի փլատակաց տակ,
փտում էր փրթված սիրտը իր ցեղի՝
մաս-մաս նահատակ,
սնելով առատ իժեր ու կարիճ,
և գանգաբնակ ողջ մի պետություն՝
որակյալ թույնի մի բարձրամակնիշ
արդյունաբերություն:

Այժմ ոխառությամբ մորթում են նրան,
ով խաչակնքեց աշխարհն իր երգով,
բայց վարձքի դիմաց՝ ի՞նչ արծաթ-ոսկի,
աշխարհը զազիր գնացավ նույնիսկ
մի կտոր արնին...
Բախտավո՞ր Լորկա,
բռիությանը նրբություն էլ կա...

* * *

Էհե՜յ, մարդկությո՜ւն, հարալո՜-հարա՜,
քերթող են մորթո՜ւմ,
ձրի թամաշա՜...
Դեռ շատ վաղուց չէր, երբ ողջ մի Հռոմ,
ամբոխվում էր խուռն հրճվանքով հոռի,
իր բթամատից մի խեղճ ստրուկի
կյանք ու մահ կախած՝
հոխորտ Յանուսի բանալու նման...
Ինչո՞ւ չեք գալիս, ի՞նչ է ձանձրացաք,
մամլիչ դարերի բյուր թերթերի տակ,
թիթեռնիկի պես դարսված զոհերի
մահվան խունկապից,
թե՞ դարձաք արդեն անչա՜փ նրբազգաց՝
(մի՞թե պոետը ցուլի չափ չկա...):
Բայց չէ՞ որ հիմա,
արվեստն են մեկ այլ արվեստով մորթում՝
անատոմիական բաց մեկնաբանում
գոց անհունության...
Տե՜ս քերթողի սիրտն ո՜նց է թպրտում,
կարող եք ձեռնել՝ արտակարգ բան չէ,
պատռված գնդա՜կ՝ վաղօրոք մաշված,
դե՜հ, կենդանության այնքան քրքրեցին...
Բայց հանդե՜սն արժե՜,
մարդասպանության ի՜նչ «իմացյալ մա՜հ»,
իր անմահությամբ առհավետ առկախ
ձեր բթությունից...

* * *

Քերթող են մորթում...
Հասել են արդեն թշվառ ուղեղիս,
ու... ամորձիքին բանական մարդու:
Լսի՛ր խաթարիս,
ո՛վ մարդկությունից թլպատ մարդկությո՛ւն,
թե պիտ շարունակես մարդ հռչակել քեզ,
նախընտրում եմ ես
դառնալ շիմպանզե
կամ կոկորդիլոս, ռնգեղջյուր գուցե,
և զորագրելով ջունգլիներն համակ,
հեղեղել ամբողջ որջդ ռոկկոկո,
խլել քեզանից Մարդ հորջորջը քո,
ու տիտղոսն այդ պարծ հանձնել աքլորաց,
քեզ նրանք քանզի,
թեև զիջում են սնապարծությամբ,
բայց անմեղությա՛մբ.
հավերն են միայն բողոքում գոհ-գոհ...
Դրանից հետո,
մենք վայրագներս՝ սակայն ոչ անարգ,
մենք գազաններս՝ վերուստ ընտանի,
նոր մարդավարի,
կքննենք Բանը կենսաբանության՝
կճշտենք ըստ այն.
ի՞նչ տարբերություն. ոստան թե ոստայն՝
սեփական ծուղակ, խեղճոց խճճում...
Ինչ նմանությո՛ւն. երկոտ մարդ ու սարդ՝
արյուն են ծծո՛ւմ:
Եվ Ամանոր է ոճիրին ամեն օր՝
կարմիր նավասարդ,
մեհեկան տարի,
երբ որոճում է արյուն պտետի,
օրհնությամբ ստոր:
Տարբերությունը մարդ-սարդի այդժամ՝

ոտաց քանակի, արյան որակի,
մեջ է միմիայն,
մեկ էլ՝ ընդամենը միայն մեկ տառի...

* * *

Քերթող են մորթում...
Չհամարձակվեք ինձ նորից խաբել,
թե մի քուրդ Հալո կամ թուրք մի Թալեաթ,
արբամայրերի վիժվածք են պղատ՝
պտուկի բորբոս, արգանդի սունկեր,
հազվադեպ այնքան՝ հանճարը որքան...
Դեռևս ցայսօր,
անգամ ճիվաղ մայր, զենք ու զրահով
մանուկ չի ծնել:
Վիժվածքներն առատ սերվում են միայն,
կարված՝ ոչ թե խեղճ Ջևսի ազդրերին,
այլ ձեր մաղձածոր մեծ լեղապարկին,
և Քրոնոսի պես կլլել եք սակայն՝
լոկ հանճարներին,
բայց բարվոք մարսել իմ արցունքներով:
Իսկ թե բորբոս են հեն ու հարամի,
ապա այնքանով՝
որքանով մարդը բորբոսը դարձավ
դեռ խմորագունդ այս մոլորակի:
Իսկ եթե սունկեր՝ ոչ թե արգանդի,
այլ ձեր նեխ գանգի՝
նեյրոն արմատով սունկ անագորույն,
որ պիտի աճեն ձեր գլխի վրա,
որպես նեյտրոնյան բոցգլուխ պայթյուն՝
ամպի չափ գոնչո լեղապարկ հսկա,
ձեր մաղձի պես թույն,
մաղթանքի տեղակ ափռելով չորս կողմ,
չարության թարախ, ժանտախտային հողմ՝
մահից առավել դատաստան ահեղ...
Եվ ո՛չ մի անձրև, ո՛չ մի ջրհեղեղ՝
դարեր ու դարեր,

աշխարհի ժանգը չի կարող լվալ:
Եվ պիտի լինի հավիտյան ձմեռ,
                    վասն ու քանզի՝
(ոճրության քանի՜ նման միավոր)
աշխարհի սրտում, օգոստոս մի օր...

* * *

                    Քերթող մորթեցին...
Բայց բարեպաշտնե՜ր, դուք խեղճ քերթվածիս
տողե՜րն ե՞ք սակայն համարում դաժան...
Ներիր ձախորդիս դժբախտ Վարուժան,
իզուր պղծեցի շուրթերս... երգով.
                    Ցնծա՜ ՆԵՄԵՍԻ՜Ս,
                    ողբա՜ ԼԱԼԱԳԵ...

26 օգոստոս, 1987, Լոնդոն

## ԱՎԱԶ ԵՎ ՓՐՓՈՒՐ

Անծուփ ծովափին թափուր,
դեռածին զոհվող ալյակներն աղերս՝
երկրպագման պես,
լիզում էին հեզ, քոթոթավարի,
սֆինքսի նման գոռոզ ցամաքի
թաթերն ավազոտ,
ու հլու թաղվում փրփրաբարուր,
ավազին փլված մի խոնջ ծերունու
սրունքների մոտ:
Անցյալով կոթնած,
ծերացած ծիլի կնճռոտ մնացորդ
իր կոճղն կենաց,
ու հայացքն անհայրատ
խորախոհ սեպած հորիզոն կոչված,
տիեզերական շուրթերի կապույտ,
հավերժ հեռավոր համբույրին անհայտ,
ուր՝
լուսեղեն ճարմանդ արփին մայրամուտ,
երկնի ու երկրի կոճկումով հուշիկ,
կնքում էր ընդմիշտ օրը իր վերջին՝
ամայության մեջ,
միայնության մեջ,
ունայնության մեջ,
ձեռնում էր դանդաղ իմաստունն ալեհեր:
Անդոհ անդորր էր:
Լոկ մի խումբ ճայեր՝

որպես մտքերի թռիչք խառնիխուռն,
ավարտից առաջ
քջջելով ասես մի վերջին անգամ,
մեռնող ծերունու ծովացած հոգու
կնճիռներն այլաց,
կտցահարում էին հուշի պատառներ...

...Առհոս օրերի
տիղմավորումով հատիկ առ հատիկ,
ի տղա տիոց փուչ պատրանքների
եթերացումով մեկիկ առ մեկիկ,
ահա ավարտած մեկհատիկ կյանքում
ծերը ձեռք բերեց խոր իմաստություն։
Դեռևս դեռահաս,
հացի մեջ անգամ քչփորել էր հարց.
Ինչո՞ւ են կուշտերն հոշոտում իրար...
Այնինչ երգում է աշուղն անոթի։
Ինչո՞ւ է ծաղիկն անընդհատ ժպտում,
մինչդեռ ցուլերը խոժոռված են հար՝
ոխով մամլիչի...
Ինչո՞ւ է մոխիրը միշտ մխում թախիծ,
իսկ հուրը՝ քրքիջ։
Ինչո՞ւ են ջրերն անվերջ քչփչում,
քարերը՝ լռում։
Երազն ինչո՞ւ է ապրում կոպի տակ՝
բայց ոչ բիբի մեջ...
Անուրջներն ինչո՞ւ՝ հավետ նահատակ,
չեն նյութեղանում ինչպես այդքան հեշտ՝
վշտերն արցունքում։
Կա՞ անհրաժեշտին արդյոք հագեցում,
հույզին՝ հատկացում, հոգուն՝ հատուցում...
Վերջապես ինչո՞ւ՝ ինչուների պես,
առաջացման հետ,
հար հորիզոնն է մեզանից փախչում,
երբ մոտենում են լեռները անգամ...
ինչո՞ւ...
Որովհետև այս գոյում անզգամ,

եթե հրաշք կամ հրեշտակներ չկան՝
կա մի երկդիմի ու սահմռկելի
                    իրեղեն Րրեշ,
որ հորջորջվում է ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ...
                    Եվ լաբիրինթոս
նրա այդ անհագ աղիքների մեջ,
կեցության անմարս օրերի առհոս
դառն նստվածքումով հատիկ առ հատիկ,
մանկությունն ի վեր փուչ անուրջների
պղպջակումով մեկիկ առ մեկիկ,
արդ արդեն ավարտ կյանքում դատարկուն,
ինչե՞ր չէր տեսել ծերունին իմաստուն...

Լսել էր հազար հռետոր հմուտ,
որ ստում էին... հենց ճշմարտությամբ՝
ինն սույգին խառնելով մեծ սուտ:
Դիտել՝ հիրավի գիտուններ ուրբշ,
որ ճշմարտություն էին որոնում համառ՝
էլ առավել խոր... թաղելու համար,
որ այլոց մնան չպեղված ընդմիշտ...
Դիտարկել՝ «ճկուն» օրենքներ բազում,
որոնք... իրենցով չեն դատապարտվում
                    այն դատողությամբ,
որ իրավունքը՝ գետերի նման,
իջնում է հավետ վերևներից վար,
                    բայց տարբերությամբ՝
արդարն ճկուն իժերին նույնիսկ,
որոնց թույնն իրենց մահացու է խիստ,
                    իսկ մարդոց համար երբեմն բուժիչ
Եվ նկատել էր հեգնանքով անզոր,
որ արդարությունն արարածային
                    (մահն բարեբանվի՜...)
հենց արդարներին չի տալիս ոչինչ՝
                    քանզի... արդար են արդեն,
ինչպես ասում են չի տալիս երբեք,
ունևորությունն երջանկություն... լոկ
                    չունևորներին՝

քանզի... այդ չունեն:
Սարսափել էր ծեր իմաստունը միշտ,
թունդ մեծամեծար ամբոխի պատվից,
որը իր անճար
տգիտությանը գտնում էր պատճառ,
եզակիների... հանճարն ի ծնե,
ջանքը քրտնալի
ու մեծարում էր... պսակով փշե,
երբեմն էլ պատժում... աստվածացումով:
Եվ ըմբռնել էր ծերն ամենատես,
որ երկարակյաց փառքի կարճ ճամփան,
խաչմերուկներն են խաս խաչելության՝
միայն թե լինես,
խաչվող կամ... խաչող օրինակելի:
Եղելությունից եղկ ու եղկելի,
փորձել էր փրկել իր հոգին ծվատ,
սրբազան սիրո մեհյաններում վես,
քանզի՝ քաջ ծանոթ,
կեցության փոշոտ գոյամարտի մեջ,
սիրո նվիրյալ տաճարն անաղարտ,
պետք է որ լիներ՝
ապականության ու ապաքինության
ապաստարան կուռ:
Բայց բացահայտեց.
որ խոր էությամբ սերը անձնասեր,
հեստ ու համեստ մենամարտ է լուռ
նրբին բռնության,
հեռ ու սեռերի անողոք ոգոր,
ուր հաղթն է իշխում հնազանդությամբ,
բայց պարտվածն է ելնում շահավոր՝
բռնի մենությամբ...
Սփոփվել էր խուն բարեկամությամբ՝
սակայն անխուսափ,
կեղծ ընկերների իր սերն հուսախաբ,
փոխվեց հարգանքի ատիճանաբար՝
հանդեպ... անկեղծ թշնամոց անաչառ:
Որ բանտ է աշխարհն՝ այդ արդեն գիտեր,

բայց գիտցավ նաև, որ բանտում ազատ,
ուր ծնունդն է մուտք,
ինքնությունդ այլ՝ մեղքդ ամբարիշտ,
ապրելդ՝ պատիժ,
ատյանի առջև որպես ոճրապարտ,
ոչ միայն չունես խոսքի իրավունք՝
այլև... լռության.
պարտ ես խուժանին ձայն տալ դեմ կամ թեր
գոլին ասել պաղ, գորշին էլ՝ ճերմակ...
Իսպառ նիհարթափ՝
բարքերից հումակ, բալովքից համբակ,
նետնելով խոռ խոռնչյրն թափառ,
չափչփել էր մոլորակը բոլոր,
ոչ թե գիտության Լայտնի մետրերով՝
այլ տարագրյալոց քայլերով մոլոր,
իսկ ժամանակը չափել էր անխաբ,
ոչ թե սարքերով չոր, սղոցատամ՝
այլ տառապյալոց զարկերակներով:
Քանզի՝ դեռ ցայսօր,
չեն նախագծված սրտերը մարդկանց,
քանոն-կարգինով,
ցավն ու բերկրանքը՝ բանաձևերով...
Ծրջել էր, զննել, շոշափել, փորձել
ու իմաստացել:
Իմաստացել էր այնքան չափազանց,
որ վերջիվերջո հասկացել էր այն,
ինչին ծանոթ է այսօր ողջամիտ
...դեռահաս անգամ.
Այո, Երկիրը կլոր է իրոք,
(այդ գիտե վստահ տափակը նույնիսկ)
բայց պտտում են հողագունդն հարցո,
ոչ թե անծանոթ ուժեր բնազանց
կամ դիքերն անգո՝
այլ բյուր-բյուրազան ու չորքոտանի
մեր խիստ պաշտեցյալ... ինքնաշարժերը:
Այո,
«հոգին» իրապես գոյություն ունի,

բայց չի գտնվում այն սրտերի մեջ,
ոչ ուղեղներում՝
այլ բազմափորոք մեր գրպաններում,
ուր և դրվում են
միակ իրական ու շոշափելի
սրբապատկերներ... թղթադրամները՝
հայցիր թեկուզ բախտ, կտրի օրինյալ:
Այո՜, ի վերջո,
վերացական չէ Ավանդն ի վերուստ,
աշխարհն էլ՝ ոչ փուչ.
Կան առասպելներ... թերթերի մեջ թյուր:
Կան և աստվածներ... հյուլեներում բյուր:
Կան առաքյալներ... բազկաթոռներում:
Կա և սրբություն... ոսկու հանքերում:
(բայց և լրբություն... Աստվածաշնչում):
Կա և մաքրություն... արտաքնոցներում:
Կա իմաստություն... խենթանոցներում:
Կա (ազատություն)... փակագծերում:
Կան հույզ ու հավատք... վիճակախաղում:
Կան և անուրջներ... պահեստների մեջ:
Կան հեթանոսներ... փարաջավոր են:
Կան և քրիստոսներ... բայց քրիստոնյա չեն..
Ուշացած թեպետ.
հասկացել էր ծերն այս ամենն արդեն:
Ընդունել նաև՝
որ «**ԻՐ**ականում» **ԻՐ**ն է տիրակալ,
**ԻՐ**ն է արմատը **ԻՐ**ականության,
ու այլ բան ու չառերի բաղադրյալ.
**ԻՐ**ավունք, **ԻՐ**ոք, **ԻՐ**անք, **ԻՐ**ապաշտ...
**ԻՐ**, այսինքն՝ գույք, առարկա ու նյութ,
ինչպես և՝ ավազ...
Հույզեր ու երազ,
գարեջրի լոկ փրփուր են անհյութ՝
փչվում է, թափվում:
Օճառի պղպջակ՝ ի սկիզբ մանկութ,
քամուն հպատակ:

Տենդոտ ցնորի ուղեղային քափ՝
երբեմն չի բուժվում...
Ընկալել էր ծերն ու խորհել ներհակ.
թերի է իրոք հենց մարդու հոգին,
ու թերևս դաս ունի առնելիք
իր... ստամոքսից,
որը տրվածից վերցնում է միայն
ինչ կենսական է, թերմացքը՝ թափում...
Յուրացրել էր այս,
ու իր մեջ կախել այն բանաստեղծին,
որ բոլորիս մեջ թաղված է վիժված,
իսկ իր քրիստոսին՝ հենց ներաշխարհում,
խաչել էր նորից:
Այլևս իրապաշտ,
մնացորդ օրերն ապրել էր ինքնին՝
ոչ հոգու թռիչք, ոչ հույզի անկում,
բոլորի հետ հաշտ,
ամբոխի նման ու արդարության պես՝
աչքերը կապած...
Եվ ահա հիմա մարդկանցից հեռու՝
ամայության մեջ,
միայնության մեջ,
ունայնության մեջ,
եկել էր ծովափ հանգիստ մեռնելու...

Անծուփ ծովափին թափուր՝
հայացքն անհայրատ
շարունակ սեպած երկնի ու երկրի,
հավերժ հեռավոր ու անվերջ անհուն
համբույրին անհայտ,
ուր ընդհատվում է մահկանացուի
հորիզոնածիգ
բանականությունն առարկայական,
ու ընթացք առնում մեր երկնըմբերձիկ
ոգեկանությունն առեղծվածական՝
ամայության մեջ,

միայնության մեջ,
ունայնության մեջ,
մեռնում էր դանդաղ իմաստունն ալեհեր:
Մայրամուտից հետ շառագունել էր
անդորրն հովվական:
Օրն իմացությամբ շաղախում էր մութն
հանապազօրյա:
Գիշերը հուշիկ շաղում էր հուռութ,
որ պեծպեծում էր ծովում պսպղուն,
ու լուսնի կեռից
կախում մոգական խորհուրդն իր հմա:
Խաղաղվել էին ճայերն ճախրանքից
ու նիրհում քնկոտ,
վաղորդյան ցայգի երազով գալիք:
Ծպտունների պես, ալյակներն էին
լռկ շաղակրատում անխոնջ ու անվերջ,
ու պղպջակոց լեզվով պճպճան.
ներբողում համառ հին հեքիաթներ պերճ,
սին ցնորքներ ճոխ:
Սակայն անսասան,
զսպում էր նրանց ծովավազը լուրջ՝
իր վաղնջական ներծծումով մունջ:
Մինչդեռ,
ծովի վրայով սավառնում էր ոխ՝
ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ վրեժը մահվան:
Այո՛, արդ վերջն էր՝
ակնթարթն անդարձ...

Հանկարծ...
Թերևս վախճանի խուճապից ահեղ,
ըմբոստացած ծովն ընդոստ խռովվեց՝
մռնչաց վայրագ, վհհացավ, ծառսեց,
ու իր անմեկին անհունությունից,
փրկօղակի պես ծովի ափ նետեց
եթերայնության մի սլատար անհաս՝
փերի փրփրագեղ,

մի չնաշխարհիկ մերկ հավերժահարս...
...Եվ մեռնող ծերի
շուրթերին դիպավ թացության թրթիռ:
Ծունչն ավարտական բախվեց այլ թոքի,
մարմնով սուրաց շիկացած ավազ՝
գոյության ջեռ տենդ:
Բաց ափն ակամա շոշափեց՝ պտղթկուն,
խենթությամբ լեցուն ուռուցիկություն,
ու նյարդերը իր
հախուռն հեղեղեց խելագար ու խենթ
սարսուռն երանության...
Ավազը փլվեց:
Երկիրն երերաց ու եւավ երկինք:
Աստղերն հուզվեցին լուսեղեն յացով
ու նետվեցին ցած:
Հողագունդը հեղձ ճզմեց տափարակ,
կանթեղից գայթած արևն հոգեդարձ:
Բռնկվեց ճարակ:
Հրդեհվում էր ծովն անծայրածիր:
Բամբ պատարագեց խմբերգն հրեշտակաց՝
բամբըն լինելության...
Ու արբանքի մեջ ծերի սիրտն ողբաց,
անցյալ իր ցկյանք բանտարկությունը՝
անդարձ կորստյան ողբերգությունը:
Միտքը ճաճանչեց.
Ամայությունն է արգելանոցն այն,
ուր թափառում են կյանքից վտարված
հույզերը մեր խեղճ, զգացմունքները զեղչ,
որ տեսիլքվում են լոկ որպես պատրանք,
բայց զօր ու գիշեր պտտում թաքուն
անհվն գոյության...
Միայնությունն է կենտրոնն այդ անվի՝
յուրաքանչյուրիս համար յուրովի,
ուր կենտրոնախույս հանդիպում ենք մեզ,
այլքից արգելված ժամադրության պես,
սիրում, ստեղծում ու բանաստեղծում
իղձեր ու ըղձանք...

Ունայնությունն է մեռյալ կետն այն կենտ՝
հանգման ու հանգչման կետն իմաստության,
որտեղից և հենց թափառք են առնում
ու իմաստությանն այլ թափ փոխանցում,
մեր աներախտիք անուրջները սին...
Զառամյալը ցարդ
կռահել էր այդ՝ ներշնչման պահին,
բայց գտավ հիմա... երբ շունչն էր տալիս:
Թպրտաց հոգին,
բողոքուն պոռթկաց՝ ոչ ոք չլսեց,
ծովը հանդարտ էր՝ ծովափին անտարբեր,
ծերը՝ մեռած էր...
Փրփրաց փերին դիակի վրա,
ողբաց, ճվաղեց, քայքայվեց անհետ,
ու դանդաղ թաղվեց ավազների մեջ՝
աղելով փոքր-ինչ երկիրն ավարա,
ու որպես իր հավատիքն իրեղեն՝
չգո գոյության,
թողնելով ծերի կոպին աներեր
արցունքի փրփուր...

...Անծուփ ծովափին թափուր՝
շատ տարիներ անց,
ծնվող ու մեռնող ալիքներն անկարգ,
մանկավարժորեն ապտակում էին
հինավուրց մի գանգ:
Հանգամանորեն տարուբերվում էր
կառափը պարապ,
բայց նրա ներքո՝ ներս ուղեղի տեղ,
եռում էին զեխ,
պճպճում ուրախ՝
հազար ու հազար երազ բնազանց,
հազար ու հազար պղպջակ պատրանք
հազար ու հազար ժխտված հույզեր
ու մերժված մտքեր...
ծովը դեռ շատ գանգուրներ ծնեց
ու նետեց ծովափ,

ավազը դեռ շատ փրփուրներ ծծեց՝
մաշվեց, մանրացավ, մաքրվեց անգամ,
ապերախտաբար բյուրեղացավ խաս՝
                    բայց չհագեցավ:
Իսկ ծովը ըմպել՝ չկարողացավ...
Թեև անարյուն, թեպետ անանուն՝
                    ԱՆՀՈՒՆԸ մնաց...

31.07.1986, Մարսել

## ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ

Ռ. Մ.-ին

Կորուսյալ իմ սեր,
Որքան վանվում եմ ես քո ակունքից,
ու խուռն վտակվում անհայտ հեռուներ,
այնքան զորանում է ձգողությունդ,
դատողությունս նույնքան նվազում
ու տագնապում եմ՝
քնազանց չէ՞ր մեր բաժանումը հեռ,
զի էներգիայի մենք տարբեր բևեռ
մեր անջատումով,
ինչո՞ւ վերստին սրտներս պիտի
լամպի պես վառվեր...
Ու չեմ տարբերում.
ի՞նչ շահեցինք մենք մեզ խնայելով
կամ վնասեցինք տնօրինությամբ...
Ի՞նչ հաստատեցինք վարանումներով,
ո՞նց ցամաքեցինք վարարողությամբ...
Ինչո՞ւ սառեցինք բռնկումներով,
որ լիցքավորվենք... այս նոր ջերմությամբ...
Եվ վերջիվերջո.
ի՞նչ հասկացանք մենք այսքանից հետո՝
անհասկացողությամբ...

Կորուսյալ իմ սեր,
որքան ձգվում եմ ես քո ափունքից
ու ձգտում դեպի խորհուրդն օվկիանի,
այնքան աճում է անափ վշտերիս
տարողությունը,

խռով խոհերիս խոլ խորությունը,
մով մենություն,
մոլորություն...
Ու էլ չգիտեմ.
Առաջանո՞ւմ եմ՝ թե՞ լոկ նահանջում
առաջացումով,
լողում եմ տեղո՞ւմ՝ թե՞ զո՛ւր ընկղմում
իզուր հառնումով:
Թերևս անվերջ պտտվում միայն՝
ջրապտույտի շուրթին մոռացված
տաշեղի նման,
որ քախտի այլացն անկամ տրվելու
բախտն անգամ չունի,
ու պիտի մնա այսպես հավիտյան,
անելանելիության երախում հեղլի՝
առանց կորչելու,
առանց փրկվելու՝
մինչև օրհասը տարրալուծության...

Կորուսյալ իմ սեր,
որչափ զարթնում եմ ես քո արբունքից
ու... մղձավանջում գալիքն առանց քեզ,
այդչափ ճչում է վհատությունս՝
աղճատվում նույնչափ վստահությունս
իղձ ու իրերի:
Ու թվում են ինձ.
կետերն հատուկետ՝ ամայի կղզի.
— **Հուսո հանգրվա՞ն...**
շատրվանն իրենց՝ հով արմավենի.
— **Ապաստան չունե՛մ...**
մտերիկությունը շնաձկերի՝
բարեկամություն.
— **Ընտրություն չունե՛մ...**
մինչդեռ բացահայտ բաղձանքը նրանց՝
սրտաբացություն.
— **Ա՜խ, անկեղծությո՛ւն...**

ճայերն երկնաչու՝ թևավոր անուրջ.
— **Երազ չմնա՜ց...**
երկինքն աստղածակ՝ համակ որսացանց.
— **Հոգու սև պատա՜նք...**
ջրապտույտս՝ գերեզմանափոր.
— **Հազար երանի՜...**
ալիքներն անցվոր՝ թաղման թափոր.
— **Լքյալի պատրա՜նք...**
օվկիանոսն ամբողջ՝ մի կաթիլ արցունք.
— **Փոշուն ողորմի՜...**
հատակը՝ բարձունք, մամուռը՝ դափնի.
— **Փառավոր վախճա՜ն...**
Սիրեցյալ, իսկ դու՝
անդարձ մշուշվող ափունք տեղատու.
— **Փղձկման մակընթա՜ց...**

Կորուսյալ իմ սեր,
կործանվում եմ ես՝ վիհ չեմ վայրէջքում.
տապակվում եմ հեստ՝ բայց ի՞նչ ճարակում՝
սարսռում եմ պաղի՜ց,
աղաղակում եմ զույգ ականջներով,
քանզի իմ ձայնով ծովն է շառաչում,
մի՞թե չեք լսում՝
ոչ մի ականջում, ոչ մի ճաճանչում...
Երկինքն եմ ճանկռում՝ ձյան փաթիլներով
ծեփն է թափթփվում,
իմ առանց այդ էլ ճերմակ կառափիս...
Գալարվում եմ մեն, էությամբ ամեն,
զի կուլ եմ տվել ինձնից մեծ քաղցկեղ՝
Ունայնությո՜ւնը՝
բայց իմ մրմուռից կարծես սառել են,
Ուրանոսն ընդարմ, Պոսեյդոնն ահեղ,
իր եռաժանին սրտումս խրած՝
որպես սիրո նետ...
Մի՞թե անմիտ է, այսքան անհեթեթ՝
Անհունությո՜ւնր...
Հորիզոնն է լոկ

օղակվում վզիս՝ ոնց տարօրինակ
կախաղանի թոկ,
որ չի սպանում, այլ հեղձում է հար
ընդարձակումով...
Հավերժ հոգեվար,
գոչում եմ մահվան հրեշտակն հուշեր ու՝
տեսփլքվում ես դո՛ւ,
անտարբերության դիմակով ազդու...

Քանի եկել ես,
փրկի՛ր ինձ հոգյա՜կ,
խճճուն սարդի պես կախված եմ ահա.
սեփական մեղքից,
քո թողությունից,
մեր սիրո մազից...
Հորիզոն միա՜կ, ոսպես փրկօղակ,
փաթաթվիր անքեն խեղճ սլարանոցիս՝
սեղմիր շատ ամուր, որ ազատ շնչեմ...
Եվ քակիր՝ խնդրեմ, վզիս քարը մեծ,
որ շնչափողով նստել է խղճիս՝
հպարտությունս...
Նա գլորեց ինձ քեզանից հեռու,
զի լքումդ մոտ ծանր էր առավել՝
քան այս քարը եղծ...
Քակիր քո գալով,
բայց աղերսում եմ՝ մի թող աղերսեմ
մեղկ փրկություն,
մի՛ թող քեզ ասեմ,
ինչը չասելով ասել եմ արդեն:
Գիտե՞ս ամեն ինչ՝ չգիտնալու տո՛ւր,
մի՛ թույլ տուր իզուր,
թախանձել քեզնից այն՝ ինչ չի տրվում
հենց թախանձումով...
Ողոքում եմ լոկ՝ մի խղճա խեղճիս՝
բավ է ինձ ու քեզ կարեկցանքս ինքնին,
թող ինքս ինձ գեթ դեռ թվամ անպարտ,

մնամ քիչ հպարտ...
Քանզի՝ պաշտեցյալ,
թե այսուհանդերձ դեռ չեմ խորտակվել,
պատճառը... այդ նույն քարն է անիծյալ,
որով վիշտն եմ հոծ իմ հոգում մամլել,
ու հայացքս սեգ կոկորդ բարձրացած
հորդ արցունքներից քիչ վեր եմ պահել...

Սեր իմ կորուսյա՜լ,
փրկի՛ր՝ մի՛ զրկիր,
ինձ վերջին... մեղքից՝ որը սիրեցի՛ր,
քեզանից հետո, տառապանքներից
ու նրանից զատ էլ ոչինչ չունեմ.
մի թող աղերսե՛մ,
մի թող վերասե՛մ,
մի թող նվազե՛մ...
Ես այդ ժամանակ գիրկդ կվազեմ
ու ծնկի կգամ...

28 հոկտեմբեր, 1981, Մարսել
—17 օգոստոս, 1987, Լոնդոն

## ՀԱՐՍ ԱՐՓԻԱԿԱՆ

Հիսուսի դավթար,
հավնրժի պատառ՝ թերի քսան դար:
Դարի մեջ տարի: Տարվա նշյալ օր...
Անսահմանի մեջ՝ մոլորակ մոլոր,
ծնունդ ու մահվան մի ժամադրավայր,
մկրտված՝ Երկիր:
Փոշոտ ճամփեքով, փշոտ լարերով
քարտեզագործված շապիկի վրա՝
քառուղի մի տար...
Երկրում անհարիր,
քաղաքում օտար՝
ուր չէինք ծնվել ոչ ես, ոչ էլ դու,
հայացքով հատու,
շվար մարդկության մեջ նայեցինք իրար...
Նայեցինք թռուցիկ,
առանց նայելու նայեցինք երկար՝
անտեղյակ սակայն,
որ հայացքներիս բամբյունով անձայն
բախտներս բախվեց...
Հանկարծ,
զարթնած զվարթոնք փափսացին զվարթ,
թախիծն հոխորտաց, հույսը երկմտեց,
բայց դյութ վարդազարդ
Աստղիկ Դիցուհին դյուրաբար վճռեց...
Ու հենց հեղակարծ,
Երկիրն երերաց,
էգ ու որձ նրա բևեռներն հակադիր

լքեցին իրենց թառերն հարկադիր,
            խցկվեցին մեր մեջ՝
վարակելով մեզ խենթ ձգողությամբ...
            Եվ լոված աշխարհին
ու հողմապտույտ մեր ներաշխարհում
փաթիլ առ փաթիլ աստղունք ձյունեցին...
            Ապա՝
            կնագիշերով հենց
արևը ծագեց ու բայղուշ լուսնի
            մռութը ծածկեց:
Բանականության լրիվ խավարում
ու հոգու պայծառ կուրացում եղավ:
Ճերմակ ու ճաճանչ Ձին Աներջանքի
(որով՝ թե ժամանակին դիքերն հուշեին,
դեռ ծննդատնից պիտ քեզ փախցնեի...)
            Արնից իջավ,
ամպի պես թեթև, ոնց անտես եթեր,
սուրաց աննշմար իմ ու քո միջով՝
որպես ոտնահետք սրտեր դաջելով...
(կույրս մենք էինք՝ այլևրք չտեսան...):

            Ես ու դու ահա,
բախտից ժխտված մի ժողովրդի
արցունքից ծնված երկու երեխա
ես՝ արևապաշտ մի արևորդի,
դու՝ արփապարզև հեզ հարս արևի,
            ես՝
ոխ ու ողբերի ըմբոստ հեթանոս,
            դու՝
սեր ու սերունդի ծննդոց փարոս,
ետևում թողած հոգու որոգայթ
մեր մարմինների ու հոգի հոշոտող
տառապանքների ցատկան սև հովազ
            ատվերներն ընջոտ,
երկնաքեր դժոխք, երկրափոր դրախտ,
            անդորր ու անդոհ,

ճաճանչ երազի ետևն ընկած՝
հույզերով առլիք,
հույսերով արբշիռ,
վազում ենք նրա ոտնահետքերով...
Անուշ չհոգնես,
Անուշ դիմացիր,
թեկուզ ոգեղեն Ջին Անրջանքի
ինձ ու քեզ դեռևս մի քիչ էլ տանի
ճահճուտով կյանքի...
Բյուր մարդկությանը՝ բարիքներ պատիկ,
թյուր քերթողներին՝ պատրիքներ պատիր,
հույլ հանճարներին՝ փառքեր ու պատիվ,
փափկասուններին՝ բարքերի պատիճ...
Մեզ պետք չէ ոչինչ,
հրեն մեր առջև՝
հեգ ունայնության լավագույն թիրակ,
սեգ երանության գերագույն թիրախ,
հրեղեն սիրո մի հրո դրախտ՝
դրախտն արդարև.
աստվածայնության մի պարթև ԱՐԵՎ:
Դու տենչդ միայն տենդի մեջ պահիր,
մինչև որ պատռենք պատն հորիզոնի,
մինչև որ գտնենք ճամփան հավերժի,
որ,
անդեմ անդենից ասդին ու անդին,
անէականի ու անէության մեջ
չկորցնենք իրար,
չկորչենք շիվար...

Անուշ քաղցրարյուն,
շաքարի շատից կյանքն է դառնանում,
դառնության շատից՝ քաղցրանում անձկանք
(մենք հո՞ լավ գիտենք...):
Տես,
ճերմակ մատակի մատաղ զավակին
ճախրում է մի նազ աղջնակ մորե մերկ

մեր երանելի նայադը մանկիկ՝
զավակը գալիք:
Դեռ չունի երեկ, չի ապրի երբեք
իր տատ ու պապի եղեռնն երեկվա,
բայց հաստատ գիտցեք
բոշա ու բալղուշ լուսնապաշտներ քութ,
որ պիտի տեսնի մեր երանելի
երնեկը վաղվա,
(Երբ պատռտելով սին դարերը մութ
արփիական հին աստվածությունը մեր
ետ վերադառնա...):
Ու մի օր ինքն էլ նույն այս երազի
ետևից ընկած,
խենթ պիտի վազի խենթերիս նման...
Դու լոկ չհոգնես,
քանզի՝
հանգիստը հոգու... հոգնության մեջ է,
ինչպես,
հավերժությունը՝ ակնթարթների...
Եվ եթե չուզես՝
հույսը եթերվի, հոգսը ծանրանա,
և եթե կուզես՝
հույզը չաթարվի, հոգին չհոտի,
կամ քո առջևից պիտի որ վազի
ձիավոր երազ՝
կամ քո ետևից սև ցավի հովազ...
Ուրեմն,
էլ ոչ մի հառաչ, էլ ոչ մի ըառաչ,
ուրեմն՝ առաջ:
Իսկ եթե հոգնես՝ դեղահաբ որպես,
արևը կուլ տուր, որ լիցքավորվես,
որ թեկուզ ինչպես բռնկված մումիա
հասնենք Արեգին,
միրճված միասնաբ որպես զոհվող զույգ
գրկախառն պատրույգ
տիեզերական վեհ կանթեղի մեջ,

անթեղված լուծվենք նրա բորբում շեղջ,
մեր մոխրանալով թեժացնենք նրան՝
                    փյունիկի նման,
որ հենց այրումով մենք անմահանանք,
երկրպագելով՝
                    մենք ԱՍՏՎԱԾԱՆԱՆՔ...

25 դեկտեմբեր, 1985. Մարսել

## ԱՊԱՇԽԱՐԱՆՔ

(Մորս փոխան... լուսապսակի)

Թղթե մի փոթ:
Լատինատառ երեք-չորս բառ:
Ճայթուցիկ բոթ.
— MAMAN EST MORTE...*
Մայրս չկա՞... Հասցե շփո՞թ...
— ՄԱ՛Յ-ՐԸ՛Դ ՄԵ՛-ՌԱ՛Վ, ՄԱ՛Յ-ՐԸԴ ՉԸ՛-ԿԱ՛...
Ծարճատում են տառերն համառ.
— Ինչպես չկան մայրերն ոմանց
ու մի կենտ օր՝
ցավաքաշխման հին օրենքով օրինազանց,
ցավ ի խորոց,
չեն լինելու մայրերն այլոց...
Մահոտ բարբառից այդ պարկուճավոր՝
բոթից բթացած ըմբռնումիս մեջ,
մայրս մահացավ արդ արդարև...
Տապալվեցի:
Տապակվեցի,
անշեջ ցավիս անթեղում շեղջ:
Զարտասվեցի,
բայց ճենճերող հոգուս տապից
տեղնուտեղը գոլորշիացող արցունքներիս
մուժում դժնեհ՝

* Մայրիկը մահացավ (ֆրանս):

ուրվականի դալուկ դեմքով մոմե,
մայրս նայեց թախծով անքեն.
— Ծարս ճամփիդ պաղեց որդիս,
որտե՞ղ էիր, ո՛րդի նժդեհ...
Ո՛չ, չմեռա ես կաթվածից երկփողանի,
զույգ սպասումն ինձ սպանեց՝
թե՛ քո գալու,
թե՛ գնալուս սպասումը հետնորդներիս...
Ու ես մեռա՝
քեոս աստծո և կարոտս շուրթիս վրա:
Որտե՞ղ էիր, որտե՞ղ որ-դի՛ս...

Ծամածռվեց մորս դիմակ դեմքը մոմե՝
հալվեց դանդաղ,
անէացավ...
...Տար անդաստանում անպատվար մի դուռ,
տարուբերվեց լուռ:
Քայլեր մարվեցին:
Անտես մի տրոփ եթերվեց երկինք:
Հովը շուռ տվեց մի դատարկ դագաղ,
ու շիրիմ լցվեց մեղկ-միապաղաղ
հավիտյան խաղաղ...
Զեփյուռն արձանագրեց մեղմ մի արձագանք.
աղբյուրի լեզվին դարձավ բամբասանք,
իսկ իմ խեղճ խղճիս՝
երրորդ մի ականջ, կանչ մի հոգետանջ.
Ո՛ր-տե՛ղ է-ի՛ր. ո՛ր-տե՛ղ ո՛ր-դի՛ս...

Որտե՞ղ էի...
Օտար մի երկրում, օվկիանից անդին,
գլխերանոցի մի քուռ աստղի տակ
խարխափող մարդկանց՝
անհայրենիք ու հայրենակից,
դարձած հավատո հայելի անդրադարձ,
ճառագում էի ճառն Արեգակի:
Ի՞նչ իմանայի, որ տանն հայրենյաց՝
զուգաժամանակ,
մորս արևն էր խավարում անդարձ...

...Քար ու ժայռերն հոհռացին,
մսազանգված գոյիս վրա՝
նախանձեցի։
Ծով ու օվկիան սարսռացին,
իմ վիթխարի վշտից վարար՝
քամահրեցի։
ծառ ու անտառ կարեկցեցին.
(ուղեղումս ե՞րբ անեցին...)
սոսափյունով սփոփական՝
պոռթկացի հեգ.
— Թե դեռևս պետք է ապրեմ,
փայտի գութը ինչի՞ս է պետք՝
հաշմանդամին հեռակ է լոկ...
Սոսկ արձանները արար աշխարհի.
ցավակցեցին մարդավարի՝
մշտնջենական իրենց մնջության
ակնթարթով մեկ՝
խոնարհվեցի,
մունջ ընկալելով նրանց ձուլածո
խորհուրդը սեգ.

Մայր տառապյալ,
որքևայրի, որդեկորույս, ողջանվեր,
արարչուհիս արդ ողբացյալ՝
լուսե ստվեր, շուք իմ շուշան։
Պիտի դառնամ,
ես քո քայլող մահարձանը անձեռակերտ,
նենտ ու կենդանի գլուխգործոց
կոթողը քո ստեղծագործ,
որ դու հավետ՝
հանձինս ինձ,
հարակատար քո իսկ արարչության
լույսում ապրես։
Քո սիրասուն հոգեառոց
ներիր, եթե այդքան կուզես՝
ինձ չների՛ս.
թո՛ղ որ մնամ մեղքիս մեխվա՛ծ,

թո՛ղ որ մնամ իմ ժայռացած
խղճին խաչվա՛ծ,
թո՛ղ որ ցավս սև ցինի պես
հար կտցահարի իմ հոգին բաց,
որ ես որպես հայ Պրոմեթևս,
ջահանդամիս խորքից մորմոք
պեղեմ, բաշխեմ ոգենորոգ
ջահեր բոցբոց,
և ևս այլևս,
ափռեմ սրբո ջեռ ու ճաճանչ:
Այսուհետև՝
որպես Դանկո արևորդյաց,
իմ իսկ պաղբոց այրումով հենց,
պիտ ջեռուցեմ պաղ ու ստերջ
ջերմոցները մարդկայնության:
Կոծից իմ չոր
փթթած թախծիս հովտից կանաչ,
պիտի քաղեմ քերթության խուրձ:
Պիտի քամեմ քաղցր ու տոչոր
սիրո սերուցք՝
նույնիսկ քենիս մաղձոտ գեղձից,
իսկ իմ վիրապ վերքերից բուռն՝
առողջություն:
Որպես նորօր ալքիմիկոս՝
փիլիսոփայական քարով խղճիս,
իմ փորձանոթ սրտի լեցուն ցողից,
բուրվառ հոգով պիտի թորեմ
վսեմության մեռոն ցոլուն:
Տառապանքից՝
պիտի տարրալուծեմ պատճառ,
մղձավանջից խեթ ու խավար,
անուրջներից իմ խենթ ու վառ՝
խորհուրդ ծեգի,
փորձր արծվի,
ետ՝ բաղադրեմ իմաստություն
պարզ ու պայծառ:
Հետո՝ որպես

արեգակի ժամացույց ցից,
մեխված մեղքիս սռլերով սուգ,
պիտի նշեմ ճիշտ ու ստույգ՝
                    նոր և անցյալ,
ձեր մեղքերի, սխալների
ու դավերի նիշն անսխալ,
            և խռովքովս ահազանգեմ,
անկասելի մոտեցումր անեղ ժամի...
                    Եվ վերջապես,
արեգի փունջ ճառագայթով,
պիտի հյուսեմ հուսո քնար
և փառերգեմ՝ էլ առավել.
առասպելյալ առեղծվածր արփիական..
Եվ ահա այս վաստակս անվարձ,
պիտ նվիրեմ անվերադարձ
                    ողջ ապրողաց.
— Մորս թաղմանը դուք ներկա չէիք,
մորս թաղմանր՝ ի՛նքս բացակա՛,
                    բայց և ահա,
արդ գոցում եմ այդ մեծ բացը.
                    վերցրե՛ք մարդիկ,
Ա՛ՅՍ Է ՄՈՐՍ ՀՈԳԵՀԱ՛ՑԸ...

Ոչ ոքի դեմ ես ոխ չունեմ,
չար ոգու դեմ բողոք չունեմ,
իմ աստծո դեմ բողոք չունեմ.
                    ու թե հա՞րկ է՝
արփիական Դիքն կրակե,
անդրիական գույիս շանթի
                    բյուր փորձություն՝
(թե ո՛չ՝ էլ ի՞նչ աստվածություն...):
                    Թո՛ղ ի ցմա՛հ.
Քամու աջով բախտս ձախորդ
                    հա՛ր ապտակի:
Բանսարկությունն աղ կարկուտի՛:
Գայթուն փառքը որոգայթի՛
                    ամպե բարձով:

Սիրեն սերերս ողբա՜ն գույ-գույ
երկնի լացով:
Երազներս ցնդեն անդո՜ւլ՝
ձյունեն ապա, հալվեն ոտքիս:
Երջանկությունը լույա՜-լույա՜
սառցակալի կոպիս վրա:
Եվ թո՜ղ հողի Մա՜հը զարհուր,
ամեն ցայգիս սպառնա՜ զուր
մայրամուտով՝
հավիտյանս հավիտենի՜ց...
Արդ ես մարդ չե՜մ, մահարձա՜ն եմ՝
կդիմանա՜մ:
Մահվանդ հետ՝
ցարդ մահացա ես մեկ անգամ,
ցավս դարձավ իմունիտետ՝
կդիմադրե՜մ...

Միայն թե...
Միայն թե դու,
հարկ է նույնպես ապաշխարես,
մեղապարտ ենք՝ թե՜ դու, թե՜ ես.
ես քո մահվան՝ դու իմ կյանքի
տաժանքով լի:
Ուրեմն, որպես փրկյալ ոգու
անդրաշխարհիկ ապաշխարանք,
հանձն առ ողջիս.
տեսլաժամին ոգեկոչաց այցելիր ինձ՝
թեպետ դիակ, թեև մումիա, թեկուզ կմախք,
գուրգուրիր ինձ քո մատներով ոսկորոտիք,
գգվիր որբիդ կրծքով անատինք,
գորովով քո սնիր կորով,
խանդակաթով՝ ևս քանքար,
հուշովդ՝ կամք:
**Երդվի՜ր նաև որդուդ թշվառ,**
որ երբ հոգնեմ, երբ սպառվեմ, **հիվանդանամ**
էլ չթողնես ես ծերանամ
ու չամոքես, չապաքինես՝

այլ ինչպես այն օրն անիծյալ
արյունլվա ինձ հրեցիր կյանքի ջրհոր՝
                    մեղքդ քավես,
ու ի՜նչ ավարտ մեր թողության,
մանկան նման թաթս բռնած,
երկրատարած այս ճահճուտից ինձ էլ փրկես՝
                    դեպի անդորր,
դեպի լույսի վերին ջրվեժ,
                    դեպի հավերժ,
                    դեպի հավե՜րժ...

2 հուլիս, 1986, Մարսել

## «ՍՐԲԱԶԱՆ ՊՈՌՆԿՈՒԹՅՈՒՆ»

Քեզ՝ ՈՍԿԵՄԱՑՐ.
փառք ապգիս մերոյ եւ կեցուցիչ…

Երաշտային էր տարին այդ ձմեռ,
ջերմոցի պես չոր, անձյուն ու անձև…

Հունվարյան մի խոով ու խառնակ գիշեր,
միստիկ մոլեգնեց միստրալն մարսելյան,
ավլեց քաղաքից ամբոխներն ամբողջ,
և, որպես աշնան անկենդան տերև,
                    խցկեց տուն ու որջ,
իսկ դիցաբնակ լեռներից բերեց
մոռացված ոգին հեթանոսության
և իր խենթությամբ նորից հաստատեց
ամայությունը բարեկրթության:
Փոթորկում էր ծովն անհայտ հայցերից,
փրփրոտ կրծոտում շուրթերն ապառաժ,
թքել էր ուզում կարծես ափերից
մետաղյա նավերն իր ատամնաշար:
                    ծառեր ու մացառ,
գզգզում էին ամպերն կատաղի՝
արքայական չանչող ճանկերով ցանցառ,
ճերմակել էին ծերպերում աղի
զուր զոհողության ճայերը անշառ…
                    Գալիք կար օդում,
                    կարոտ ու գարուն,
և աստվածաշունչ զարթոնք ամենի…

Իմ քուխարու մեջ հուրն էր ճարճատում,
որպես այլ բողբոջ կոճղին չորացած,
այլ փոթորկում կար մեր գավաթներում
և ուրիշ տարերք մեր մեջ զորացած:
Եկել էիր դու,
կուսությունդ փառ՝
ի փառս ուրացյալ աստծոց սրբության,
մի լքյալ քուրմի մահճում մորթելու...
Տրոփ կար օդում,
և ավետիք լուռ՝
զոհաբերության ծիսական սարսուռ...

ծնկել էիր դու
թափված լաթերիդ լոտոսյա թփում՝
ճերմակ մերկությամբ, ի դեմ ատրուշան,
մորթվելու պատրաստ կարապի նման:
Դեմքիդ դեռատի
թրթռում էր ցոլ երկմտանքն այրման,
շափաղ ու շվաք վիճարկում Լին
ասես տարփ ու բարք:
Խուփ կոպերիդ տակ սպասյանվել էր կիրթ
կրկնակ մարգարիտ,
մինչդեռ կիսաբաց շուրթերով շուշան
աղոթում էր մի շամբշոտ շամիրամ:
Թշերդ էին շիկացած ծուրվառ
ատամնահակինթ,
ծամդ՝ խնկածուխ,
ծծերդ դողդոջ՝ կանթեղեն կանթեղ,
պտուկներդ թուխ՝
կրքերի ծծումբ:
Զիստերիդ միջև— շեքումդ շքեղ՝
կռապաշտության սքող զոհաթումբ,
կատարին՝ կակաչ:
Գիրկդ՝ անհատակ երանության կիրճ:
Կոնքիդ ընդերքում՝ կյանքի լաբիրինթ,
միջուկում՝ հավերժ:

Գավակին քո գիրգ ընդհատված մի շեշտ.
— երկվության մահին,
փաստում էր հակիրճ,
որ ունեն նույնիսկ հրեշտակները հեշտանք,
որ զուգորդում է էությունդ էգ՝
սուրբ հավերժահարս
և տարփատոչոր մանկահաս մի հարճ:
Քո մեջ անպարկեշտ
պոռոտ էր միայն՝ դրոշմն արարչության,
պնդելով համառ, որ... երկրածին ես:
Արքունք կար օդում,
համբարձման խոստում,
և հաղորդություն սեգ գեղեցկության...

Օ՜, չքնաղ էիր, հրա՜շք էիր դու,
կատարելության հոծ ժողոված.
բնության սփյուռ հավաքածուում՝
չգերազանցված մի գլուխգործոց,
եթերում տաշված վիմափոր քանդակ՝
հայտնություն երգոց,
ելևէջ նյութեղ,
շրջապատող ողջ՝ տարտղնած տաշեղ:
Որպես ավարտ ձև,
անթերի էիր ինչպես գալար ձու,
բովանդակությամբ... հարիր հարատև՝
պատճառ ու արդյունք,
վախճան ու ակունք:
Մայրամուտն էիր ոգեղենության
և արշալույսը կորուսյալ աստծոց,
սրբություն սրբոց՝
բայց և ներշնչանք սրբապղծության...
Կրոնքն էիր այն,
հավատքը միակ, ում առջև միայն
խոնարհվում էր արդ՝ խավարում անգամ,
հենց իմաստության հուրն երկրպագու:
Օրհնանք կար օդում,

«անառակության» սրբազան պատգամ
և մեհենական խորհուրդ ահարկու...

Ու մինչ մոլեռանդ մրրիկն աներես,
ճեղք էր ճանկռոտում խցկվելու ներս,
ծովը խանդահար փնչում էր շառաչ,
բոցն էլ իր թասից հատակ էր թափվել՝
բուխարու առաջ,
հրդեհում հարաճ,
գալարվում էր ձույլ մերկությունը մեր՝
ինչպես ութոտնուկ խանձից փշաքաղ,
վառվող վարդատունկ:
Հուրը մեր քարկապ մարմինն էր լիզում:
Մեղքը բաղադրյալ շունչն էր մեր կիզում:
Փրփրել էին ծծերդ ողկույզ,
և կաթ էր կաթում տենչանքի վրա:
Ծոցդ՝ ալեկոծ, ծոծրակդ՝ անառիկ,
ծամդ էր հեղեղում երանք ու առիք...
Համբույրդ էր կպչուն և հյութը նրա,
մինչ մաշկդ ավշոտ այնքան լպրծուն,
որ սայթաքում էր կոնքերդ ի վար
...երանությունը:
Բացել էր մեր տակ վիրապն իր վարար՝
անհունությունը:
Վիժում էինք կործ, անկշռությամբ մառ,
կառչելով անզոր ինչից պատահեց,
ինչպես պատահեց...
Երկիրն էր ուզում մեզ ողջ-ողջ լափել,
երկինքն էր ուզում գմբեթն իր թափել՝
թևածո՞ւմ էինք...
Փրկությունն էր լոկ... վերացումն իսպա՛ռ...
Տառփանք կար օդում՝
խփիոտ ու խայտանք, քաղցր տառապանք,
չկար միմիայն... օդ ու հազեցում...

Կրկին վայրագին,
սապատավում էր մրրիկն անմեկին,

ապտակում փեղկերն ծածկամտության,
ծառսում էին վեր ալիքները եռ՝
ցանկալով մարել աստղը ցանկության:
Տնքում էր հողը պատռման ցավից,
                    տքնում ժայռ ու լեռ,
ծիլն Լր հոխորտում նախնյաց անձավից,
ջղաձգելով արմատ ու նյարդեր...
Վարարել էին գետերն սանձարձակ,
վարգում էին ցիր ձիերը վայրի,
փլուզվում էին կամառ ու տաճառ,
                    տանկեր ու բանտեր,
և Ազատության արձաններն այրի:
Փլուզվում էին «տներն անառակ»
վերսալներն կեղծամ, կուռքերը ճաղատ,
խորտակվում էին ասֆալտներն չբեր
և ծխագլուխ մեննիրներն արդի:
Տապալվում էին բուրգերն վարչական,
մզկիթներն հրթիռ, եդեմն երկնաքեր,
կործանվում էին վանքեր ու վեղար՝
և խաչակնքում խաչերով երեր
                    վերջը աշխարհի...
Երկինքն Լր համակ խտացել իմ մեջ՝
զի բեղմնակարոտ երկիրն էիր դու,
Ոսկեմայրն էր մեզ հորդորում անվերջ՝
                    երկինք խենթացիր,
                    երկիր խենթացրու...
Եվ արհավիրքից ապոկալիպտիկ
...վերահառնեցին մնհյաններն անտիկ
ու լքված բոլոր ավերակներում
հնչեց կենսության օվսաննա օծուն՝
հիմքը գոյության, հիմնը էության:
                    Պոռթկում կար օդում,
                    ճիչ ու ճաճանչում
և փառերգություն առաքելության...

Եվ եղավ կյանքի այլ պատարագում՝
եղա՛վ փոթորկում, եղավ և՛ պոռթկում,
եղա՛վ պատակտում,.եղա՛վ պարարում,
եղա՛վ վերացում, եղա՛վ վեհացում,
եղա՛վ հավատքի գոռ աճագնացում՝
նախորդ բացասման հաջորդ բացասո՛ւմ,
հին աստվածուհու նոր աստվածացում
և «պոռնկության» վերասրբացում...
Ղողանջ կար օդում
ու ցավ ծնության,
ծիծաղ կար օդում և լաց ցնծության...

* * *

...Վաղ առավոտյան
մերկությանդ լույս իջել էր նուրբ նինջ,
արյան կաթիլն էր երանքդ ցողում՝
մինչ երջանկության արտասուք մի ջինջ
թառել էր անքուն իմ թարթիչներում:
Նիրհել էիր լի գալիքով հղի,
այնինչ ժամն էր իմ
անդարձ մեկնելու,
սպառվել էր իմ բաժինն ընկերանքի՝
սերս էիր վերջին,
բայց այլևս քեզ չէի տեսնելու...
Թախիծ կար օդում,
հավերժ հրաժեշտ,
և ցայգյան արցունք-արյամբ բեղմնավոր
մի վաղնջական, մի անրջական
քերթվածի երկունք...
Գարունն էիր դու, ես՝ անցնող ձմեռ,
արշալույսն էիր, ես՝ մթնշաղը,
գալիքն էիր դու՝
Ոսկեհարսն այլի, կեցուցիչն այրող,
ես՝ քո քուրմն հլու,
ես՝ վերադարձիդ ծեր աքաղաղը,

բայց իմ հերթն էր արդ զոհաբերվելու՝
քո բախտի բագնին,
իմ տեղատվության,
մշտնջենության այս շրջանառու...
Քեզ՝ բարի ծաղկունք,
ինձ՝ բարի վախճան...

29 հունվար, 1988 Մարսել

## ԱՎԵՏ Ի ՀԱՎԵՏ

…Պատրանք է ունայն
Կարճ կյանքը երկրի
Երկինքն է միայն
Օրրանն իղձերի:
Այստեղ ենք հասնում
Մեր երազածին,
Մեկ վեր է հանում
Հավերժ կանացին:
(«Ֆաուստ»—վերջաբան.

Քեզ գոց գիտեմ…
Քեզ գիտեմ այնքան,
որքան
Քնարի մանքում շարքային մի լար՝
վերստին վիճակված ձայնանիշն իր կենտ,
ձայնը՝ ընկալուչ ականջի ճամփան,
և ճամփաները՝ ճանապարհն իրենց
դեպի վերջնակետ՝
դեպ գոյաության վերին նպատակ…
Սակայն չգիտեմ.
Ե՞րբ ծնվեցիր դու կամ դեռ պիտի ծնվե՞ս,
Հինգ հազարամյակ
Միածնի անմեռ ծնունդից առա՞ջ՝
թե՞ երեսուն դար իմ մեռնելուց ետ:

Քեզ բաց գիտեմ…
Քեզ գիտեմ այնպես,
ինչպես
կարապը երգն իր ճակատագրական՝

ի զանց սոլֆեջիոյ, առանց նոտագիր,
երգը՝ չվերթը քմահաճ քամու՝
                    արձագանքով իր,
և քամիները՝ ներշնչմանն հլու՝
աշխարհագրություն... առանց գիտնալու...
                    Սակայն չգիտեմ՝
թեև իմ մեջ ես, բայց ոչ իմ կողքին,
                    անգամ շատ հեռու.
էպիկենտրոնը գոյությանդ ցիր,
օջախը հոգուդ, կերտող հողածին,
հետքդ հովահար, որ ո՞ւր թողեցիր...
                    Բայց գիտեմ հաստատ,
որ կոսմիկական ինչ-որ կոորդինատ,
անհունության մեջ հասցեդ է հոսուն:
                    Բայց գիտեմ կայուն՝
տիեզերական օվկիանում դրկից,
խեցում խցանված մարգարիտի պես,
ծուլ համբերանքով սպասում ես ինձ:
                    Քեզ ինչպե՞ս գտնեմ...

* * *

Գուցե՞ դու եղար Կույսն Օռլեանի,
ու հարկ էր ինձ Լլ խարույկդ նետվել,
հորդ արցունքներով հրդեհդ մարել,
կամ մահ կիսելով միաձույլ կիզվել,
                    ու այսպես չայրվել,
որ մոխրիդ վրա սիրտս խորովվի
                    պաղն հոգիս այրի...
Գուցե դու էի՞ր Հեղինեն չքնաղ,
                    բայց մի բախտախաղ,
ինձ չվիճակեց քեզ առևանգել,
                    և այդքան իզուր
հարս ու հարսնացու կոծեցին այրի,
ու այդքան պարման կործանվեց ի թյուր՝
                    մարտում Տրոյայի...

Արդյոք դու չէի՞ր գնոշկուհին այն գեղ,
որի անցն անշուք, աշուղը նաիրի,
մատյանի տեղակ, տապանագրի տեղ,
կույր-կույր գրանցեց անանուն երգի
եվէջներին...

Թերևս այսօր զառամյալ ես ուշ,
կամ թե ուշացած դեռահաս քնքուշ,
բայց այդպես էլ մեր մենությունները հեգ,
ժամացույցի զույգ սլաքների պես,
թե հանդիպեցին լոկ վայրկենապես՞
չիմացան երբեք,
անցան կողք-կողքի, առանց կանգնելու,
առանց գրկվելու..

Թեև բախտակից րախտի բացասմամբ,
բախտի բացառմամբ,
թերևս մի օր՝ երբ դու մարմնանաս,
գտնես բուխարում տողերը իմ այս,
տողաց ակոսում տաք հոգիս պեղևս,
ու չգտնելով հողակույտս անգամ,
իմ թղթե մոխրին դու արցունք հեղես
և ինձ պես ողբաս,
ձախորդ մեր վեպը ժամանակավրեպ,
գալը՝ տարաժամ, գնալն՝ անժամկետ,
մեր այսաշխարհիկ սերն անհնարին...
Օ՜, վիշտ իմ վերի՜ն...

* * *

Ես աշխարհ եկա,
քեզ հանդիպելու տենչով հարակա:
Եկա քո գալու հույսին ենթակա:
Եկա իգական բուռն ձգողությամբ
քո հավերժական:
Ես երկինքների խոլ երկրպագու՝
եկա ունց մոլոր ծաղկամոլ մեղու,

երկրի մագնիսին...
բայց սոսնձվեցի մժեղի նման
Քեզ որոնեցի չորս միլիարդանոց
մրջնանոցում հոծ՝
ուր թեև կային և՛ թևավորներ,
բայց հրեշտակ չէին՝
այլ արվակործան դյութիչ սիրեններ,
բյուրավոր Եվա՜...

Պատահեց գտա,
քո անրջական դեմքը լուսնկա՝
ննջող լճի ճմուռ հայելում,
թարթիչներդ թաց՝ սիզախոտերում,
ժպիտդ ջերմիկ՝ այգաբացերին,
կրծքերդ արբուն՝ դեղձենու ճյուղին,
խայտանքդ ընդոստ՝ երկրի ընդերքում.
քո գիրկը գտա բնության գրկում,
բայց քեզ ընդգրկել չկարողացա՝
ո՜վ անգո Գեա...

Սակայն որսացի
խոստացյալ սիրուդ ավետն հնչակա,
ալեորս բարդու փափուկներում,
պատրանքդ առկա՝
ամբոխում լուծվող անծանոթ հարսի
թողած պարապում,
ոտնաձայներդ՝ սրտիս տրոփում,
այրումդ տարփոտ՝ արյան տոթերին,
և շրթունքներդ... կանանց շուրթերին...
Օ՜, մեղանչեցի՝
մնալով ընդմիշտ քեզ հավատարիմ՝
գերագույն սիրո դավանանք դու իմ։
Դավաճանեցի՜,
ակայն ոչ թե քեզ՝ այլ նրանց միայն,

որոնց գրկի մեջ ու ներկայության,
բացակայությունդ գտա միմիայն:
Ու թե պիտ ներվեմ՝ նրանցից համայն,
իսկ թե չներվեմ՝ պատիժս ապառիկ,
տվիր նախապես՝ չլինելությամբ,
դեռ իմ չգործած մեղքերի դիմաց...

* * *

Եվ ահա այսպես,
սպասելով քեզ ծերանում եմ ես.
ժամանակը չար դեմքս է ճանկռոտում,
ձմեռն անաչառ՝
ճերմակ ցայգերիս բյուրեղացումով,
մորուքս է հինում,
օրերս են թափվում կյանքիս կեռերից,
քունս է կքվում փուչության բեռից,
հոգնել է հոգիս հոգսերի հեռից՝
սոսկ սերը համառ սիրտս չի լքում,
քանզի օրեցօր.
գեղեցկությունը գեղեցիկ է էլ՝
քան թե անցյալում,
ջահելությունը առավել ջահել՝
քան իրականում,
հասունությունը՝ ավելի տհաս,
իմաստությունը՝ իմաստուն պակաս...
Թեև ոչ ահել,
բայց ջահելներին ահով եմ նայում՝
թե հանդիպեցինք, ինչպե՞ս ինձ սիրես,
ծերանո՞ւմ եմ ես...

* * *

Այժմ՝ երբ արդեն,
ափիս խճողքում հալվող առաջին
փաթիլը չնչին,

վերլուծեց լացով աստղը մեր սիրո,
ցնդող ցողի հետ հույսն էլ հողեղեն,
եթերվեց անդեն,
ձյան հարափոփոխ վիճակից երկգո
հավաստի դարձավ հավատքը հինդու,
որով ես և դու
թերևս երկնում պիտի հանդիպենք,
որպես ոգեղեն էակ երկնաչու...
Եվ արդ, համբուրված հույսի ետևից,
հայացքս հառած հոգի առինքնող,
ու ճառագայթուն
երկնի երդիկին,
եռացող ջրի գոլ կաթիլի պես,
ջրիկության դեմ ոգորում եմ ես,
համբերելով դեռ
արծարծում ոգիս՝ ամբարելով ջեռ,
որ գոլորշիանամ, քեզ փնտրելու գամ,
արդեն այս անգամ,
տիեզերքում ցիր ու անծայրածիր...

* * *

Արդ վստահ գիտեմ,
որ անվերապահ քեզ պիտի գտնեմ,
գիտեմ այդ անկեղծ՝ որպես բանաստեղծ,
քանզի նրանք են
ծիծառն ու թիռր գերիմացության,
այլ իմաստուն է պոետը անեղծ,
ու բանաստեղծ է գիտունն իսկական...
Ուլ քնարական գիտությամբ ոգուն,
պիտ լողամ անահ օվկիանում անհուն,
պիտի քեզ գտնեմ, պիտի քեզ գրկեմ,
փարվեմ քեզ այնպես, որ կաղապարվեն
հոգիները մեր,

ինչպես տարփատենչ մարմինները մերկ,
ձև տան մեկմեկու՝ առնելով մեկ այլ
բովանդակություն:
Օ՜, երանությո՜ւն,
Էլ ի՞նչ ակնթարթ՝ հոծ հավերժությո՜ւն...
Փառապա՜նծ Գյոթե՛,
գեթ գիտենայիր այնժամ դու եթե,
որ կանգ չի առնում թարթափը անկամ,
այլ տրոհվում է ինչպես մի հյուլե,
ակնթարթն անգամ՝
տարանջատելով պոռթկմամբ գերհզոր,
սեր արարչական, ջերմություն մի շեջ,
իսկ միջուկի մեջ՝
դեռ չտրոհվա՜ծ, դեռ չտրորվա՜ծ
հավերժություն նոր...
Եվ հավերժական տարփանքից տոչոր,
ու անմահության ակնարկից արբշիռ,
այլևս անկշիռ՝
Պեգասր հեծած,
պիտի տրորենք տիեզերքը բաց,
պիտ հածենք մեկտեղ վեհ ու անվեհեր,
պիտի հալածենք աստղեր միգամած,
պիտի թևածենք այլ մոլորակներ՝
այցելենք այլոց, աստծոց հյուր լինենք,
դիտենք մեր աչքով դժոխքդ՝ Դանթե՜,
դրախտդ կամ թե,
ճանաչենք Բանը, Էություն պեղենք,
Ոգին քչփորենք, Արևն հորատենք՝
վերագտնելով Խորհուրդն բրածո,
ու իմաստնանաք ինչպես երբեմնի
նախնիք մոռացյալ՝ նույնիսկ ավելի...

* * *

Եվ վերջիվերջո,
շրջելով պարույրն անվերջ կրկնության՝
որպես ավետյալ սիրո արձագանք,
կրկին աշխարհ գանք,
վաստակած ընծան վերածնության՝
կենսության վերահ՝ կեցության որակ:

Եվ արդ կենակից երկնի ու երկրի
զարմեր երկվորյակ,
սերված մեկ Արից, սնվենք մեր Նարից,
մանկության կորած հեքիաթը նորից
օրորոցները կօրորի մեր դաշն...
Կարմիր ու կանաչ հին անուրջների
արահետները ոտներիս նարոտ՝
զեփյուռի հնքով, թիթեռի թևքով,
վետվետանք ճանաչ բուրաստան ու դաշտ,
գայթելուն գիտակ, ծուղակաց ծանոթ՝
համատարմությամբ աչքներս կապած,
թաքնվենք խաղով այլևս վստահ,
մոլորությամբ լի թփերում կյանքի:
Անմար կարոտի կամքով հուշարար,
ևս մեկ անգամ վերգտնենք իրար,
պատանեկության հուշերում հայտնի...
Այդժամ ծիածանը երկնքից քաղեմ,
և քեզ՝ թագուհիս բոլոտն ու բոհեմ,
այսուհետ ցմահ,
երփնապսակով հովվուհի կարգեմ,
հար մատաղացու գառնուկ տենչերիս:
Իբրև չարաննար մանուկ միամիտ,
հետաքրքրության քղանցքը քակեմ,
թողքոջումն աչքեմ կոկոն կրծքերիդ
(գուցե դեռ անհայտ գյո՞ւտ բացահայտեմ...)
իսկ քո դափնազգի շուրթերից շիվար,
փախցնեմ ցոգոլ համբույրը նուբար,

իմ աղվամազից ինքդ փշաքաղ,
                    հանց մի նունուֆար,
ծածկվես ու ծածուկ անրջես ականեղ՝
արգելված պտղի համր խելքամա՛ղ,
հաճույքն ամոթի, ցավը փառահե՛ղ...
Ես էլ շփոթված խենթ բանաստեղծեմ
հենց հանպատրաստի երգն իմ առաջնեկ՝
թերևս ծնվի դեռևս անեղ
                    երգ մի հանճարեղ...

                    Հետո՝ երբ անես,
հոգվույս ջերմոցում՝ փակ ու անպարփակ,
                    հոգածության տակ,
և հայացքներիս գող ու տարփակեզ
                    ճառագմամբ բեղուն,
կույթ ու կուսական քո ծառից կենաց,
խնձորն արնաներկ, արբունքդ արբուն,
առանց կավատի ձեռքովդ ինձ տաս:
                    Խնձորը այդ նույն,
որ կովախնձոր դարձրեց Եհովան.
«իմ»-«եսի» միջև, մարմնի ու հոգու...
                    Խնձորր այդ նույն,
որ՝ օձով որդնած, դարձավ ողբի հունդ,
և ոչ թե դրախտ՝ դժո՛խք արժեցավ,
                    սերնդե սերունդ...
Իսկ մենք այդ դժխեմ դրախտից շինծու
                    ինքնակամ քշված,
երանությունը երանքումդ թաց՝
(կուսական եդե՛մ, լքված ծովածո՛ց)
                    կբացահայտենք...

* * *

Մենք՝ աննյութական, նյութացած նորեն,
մենք՝ երկնից իջած դիք, բայց մարդեղեն
տիեզերական կենցաղին ծանոթ
ու արարչական յիցքերի անոթ,

ներդաշնակության բևեռներ ներհակ
ու ներհակության լիսեռ ներդաշնակ.
կենսության կարոտ հոգևոր վառոդ
ու ներքին այրման շարժիչներ կյանքի.
հավիտենության նստակյաց քոչվոր,
անցյալի նախորդ
ու ապագայի նախնիներ ներկա,
ամբողջությունը կարկատող քարկապ,
երկինք ու երկիր միակցող սարափ.
տարփ ու տառփանքի
խռով հաշտարար.
հոշոտենք իրար հեթանոսաբար՝
առանց շփոթի, առանց ամոթի՝
մնալով հավերժ կրքի անոթի,
բայց և իրամերժ գոռ կուռքերի քուրմ...

Եվ թող ծծերիդ գոգից քրտնաթուրմ,
քո պորտի վրա պորտը նրկնքր,
հերարձակ ծագի՝
որպես սրբալույս փարոս վիրկչական,
անբոքբոս խոյան,
պաղ խաչի տեղակ, աղ աջի փոխան.
թրջված շրթերով կրակն համբուրենք,
և լուռ պսակվենք՝
լուսապսակով կինտ, անձեռակերտ՝
բորբ բագնի առջև, լեռան գագաթին,
ամբողջովին մերկ,
ամբողջովին բաց.
ո՞վ Արևի հարս. հա՞րս արփիական...

Եվ թող ընդերքից հավիտենության
արարչությունը ցնծությամբ ժայթքի.
դու հղիանաս,
բարվոք մայրանաս,
ու աշխարհ բերես երկվորյակ մի նոր՝
ծովյա Նոյուհի ու ծովիան մի Նոյ...
Մենք՝ դասալիքներ դրախտ ու բախտի.

երկկենցաղ քաջքեր, ոտխներ ախտի,
երկնագործական արհեստին հասու՝
այստեղ և այսու,
առանց ջրհեղեղ, առանց ոխ ու քեն,
սիրով հեղեղենք աշխարհն ապաքեն,
ակունքենք սերունդ նորոգ գոյության,
սրբագրենք արատն եղծ եղելության,
կեցությամբ առողջ,
ու համառոտենք անցյալը ամբողջ՝
մեր մի կյանքով մեն...
Ի՞նչ փույթ թե ցավով պիտի դու երկնես,
ի՞նչ փույթ, եթե ես
լերկ եղունգներով պիտի հող հերկեմ՝
հոգնություն սերմեմ, հոգսեր քաղհանեմ,
մինչև մեր լեշով հողը լիանա...

* * *

Մենք՝ իմաստության իմաստ ինքնակա,
կենսականության ինքնանպատակ,
իրարու նոքար, իրերի արքա՝
Արփուն հպատակ.
կհարստանանք մեր ալքատությամբ,
կպճնավորվենք մեր սյերճ մերկությամբ,
կկահավորենք մեր բույնը մեզնով,
կբարգավաճենք՝ ինքնասպառմամբ,
սիրտ կնվաճենք՝ սեր նվիրելով,
կտիրապետենք՝ հնազանդությամբ,
կհպարտանանք՝ հեզ համեստությամբ...
Օ՜, կերջանկանանք չար չարքաշությամբ
ու կսրբանանք հենց մարդկայնությամբ՝
թեկուզ նվազենք խնդրոց հավելմամբ,
ու չհասկացվենք խրթին պարզությամբ...

Իսկ եթե վիճենք՝ էլ չվիճելուց,
եթե բաժանվենք՝ իրար փնտրելուց,
եթե մոլորվենք՝ լոկ հանդիպելուց,

եթե մոռացվենք՝ իրար հիշելուց,
ու թե ուրանանք՝ անձնուրացությամբ,
ու թե կուրանանք՝ լավատեսությամբ,
իսկ տարիներ անց եթե նմանվենք՝
հին տարբերությամբ,
բայց տարիներ անց եթե տարբերվենք՝
նոր նմանությամբ...
Ծերանանք այսպես մանկանալով հար
ու մի պայծառ օր՝
դու տատ չարաճճար, ես ծեր սիրահար,
թողնելով միմյանց հազար թոռ ու ծոռ,
որպես մի վերջին խաղ չարաճճի,
արևն շալակած՝ շորորով արջի՝
ճանապարհ ընկնենք այլևս անդարձ,
դեպ հասարակած,
քնության կրծքում, միայնության մեջ՝
մանուկների պես,
չաչանակելով՝ ապրած հեքիաթի,
կյանք ու մահվան սին,
ու մեզ սպասող մեր նախնյաց մասին,
իրարու փարված մարենք միասին,
իրարու մերված թաղվենք միասին,
մեր երանելի ծովափին Վանա,
ու ննջենք հավետ նիրհով նիրվանա...

Ա՜խ, այս երազով արժե և ապրել,
մեռնելն՝ առավել...

* * *

Իսկ մինչ ա՞յդ...
Մնում ես գալիք հայտնության հին հայտ,
ես՝ ոսկրավանդակ իմ խեցու խցում,
հողագունդը ոտքիս խեղճ կալանավոր:
Բայց կանոնավոր
այցելում ես ինձ՝ ինչպես հոգեքույր,
երբ զույգ կոպերիս կողպումով կոկիկ,

կրծքավանդակիս փեղկերն եմ բացում
համոզմունքով կույր,
ու վառում սրտիս լուսամփոփն հուշիկ:
Եվ՝ այ քեզ հրա՜շք,
թափուր մենության խրճիթս ավերակ,
ինձ համար անգամ դառնում է հաճո,
երակներս խառն՝ ջեռուցման հանգույց,
երազներս խուռն՝ ողջ հեռուստացույց՝
կաս դու ի վերջո՜...
Կարգի ես բերում մտքերս հոռի,
ո՜վ դու հույզերիս ժիր տանտիրուհի,
դիտում ենք մեկտեղ անուրջն ապառիկ,
ծրագրում տեղում նորանոր տեսիլք,
հյուրասիրում եմ՝ որպես վճիտ սուրճ,
կարոտս հեղուկ,
ըմպում մտովի քո բերած ընծան՝
ավիշդ՝ Սոմա՜...
Մնում ես այնքան, որքան բանտապահ
իրականությունը թույլատրում է մեզ՝
միշտ ամփոփ մի պահ:
Գնում ես ապա,
աշխարհի համայն տղամարդկանց հյուր,
քանզի ավետդ աշխարհն ընդունեց,
զի անբովանդակ աշխարհն բովանդակ,
սպասում է քեզ...

* * *

Գնա՜, ի՞նչ ասեմ, անելիք ունես,
այն էլ՝ շատ ու շտապ.
Պիտի... մերկանաս նկարչի առջև
ու պատկերավոր ուղեղը խմորես...
Պոետի փետրով թևածես թեթև
ու լացես թանաք:
Բայց՝ ո՜վ դու վախտի թե բախտի հանա՜ք,
ստվար խուժանի ախորժակի մեջ,
պիրկ ստինքներիդ ողկույզներից պերճ,

պիտ քամես գինի,
տաս թունդ հարբածին թույն առաքինի,
հուսախաբվածին՝ պիտ մղես արցունք,
դավաճանվածին՝ կորստյան բարձունք...
Եվ առանց դանակ,
բյուրավորների բիբ պիտ փորատես,
ետ ծեփես քեզնով ու բանակ-բանակ,
իրականության երախն առաքես՝
գոչելով «ի հո՜ւյս»...
Նորապսակի գիշերնոցով կույս,
պիտի քողարկես գժտություն գալիք,
և առագաստը՝ լի երջանկությամբ,
հավատքով առլիք,
պիտ փչես հետո ինչպես խաղալիք
դեպի փորձության «իններորդ ալիք»...
Բայց այդքան չար չես,
քո անմեղությամբ որքան մեղանչես,
կենցաղի գոգնոցն էլի քո ծաղկմամբ
պիտի զարդարես,
կամք տաս տկարին, խորհուրդ՝ տխմարին,
տմարդին՝ զսպես,
և մոր մերկությամբ,
պարպես մեղկությունը տան հասարակաց,
և նոր մեղկությամբ,
լցնես մերկությունը հրապարակաց...
Գնա՜, ինչ ասե՞մ, անելիք ունես.
դեռ քանի-քանի խաղ պիտ հղանաս,
դեռ քանի-քանի բախտով հղփանաս,
ու քանի անգամ դեռ հղիանաս՝
անվերջ բազմանաս...

Գիտեմ՝ չեմ խանդում, քանզի դու կին չես՝
այլ հավաքածո կանայք հոգնակի,
որոնց բոլորին չեմ կարող սիրել,
գիտեմ, չեմ խանդում, քանզի դու կին չես՝
այլ հորինածո տիպար եզակի,
որին դեռ ցայսօր ոչ ոք չի տիրել,
ոչ ոք չի պղծել...

* * *

Եվ պիտի մնաս առհավետ անհաս,
մշտապես մոտիկ՝ հավերժ հեռավոր,
անսկիզբ սկիզբ՝ անվերջ վերջավոր:
Խռովքի ակունք դու վաղնջական,
խայտանքի օվկիան մշտնջենական,
մակընթացություն խանդ ու խնդության,
տեղատվություն՝ տեսականության...
Լինես տիրամայր, դուստր, քույր թե կին՝
                    կին ես դու կրկին,
որևէ մեկի սերը թանկագին:
Եվ քեզ պիտ գտնենք՝ լոկ կորցնելով,
բայց և կորցնենք՝ նույն այդ գտնելով.
մինչև սովորենք ապրել հոսելով,
հոսունության մեջ հունդդ որսալով,
անհունությունը՝ անվերջ փոսելով,
ու հաղորդակցվել՝ էլ չխոսելով...
Քանզի չես ծնվել դու կող կամ կավից՝
այլ հին քառփ խառնակ շփոթից,
ու ունայնության փոթորկումներից...

* * *

                    Իսկ մինչ ա՞յդ,
օրհնվե՞ս ինչպես կաս՝ որպես հայտ անհայտ,
                    անհայտի թակարդ,
տրոփ սպասման, կարոտ անկատար,
անհասության հար փլուզվող կատար,
ցնծություն հույսի, կսկիծ կասկածի,
մորմոքուն մարմաջ հավերժ կանացի,
գայթուն գալստյան բախ երջանկավետ,
                    առկախ հրաժեշտ,
                    խա՞ք դու անհրաժեշտ.

ԱՎԵՏ Ի ՀԱՎԵ՜Տ...

10 հուլիս, 1987, Լոնդոն

## ՈԳԵԿՈՉ

### (չափածո էսսե)

«Արև, Արև ե՛կ, ե՛կ,
**Մասիս սարին վեր ե՛կ,**
Սև-սև ամպեր հեռացեք
**Արևին ճամփա տվեք,**
Թողեք, որ նա գա մեզ մոտ
Նրա լույսին ենք կարոտ...»

**(ըստ Ղազարոս Աղայանի)**

Ոգեկոչո՜ւմ եմ.
ձեր հավերժական էությունը բոց,
ինքնությունը բուն ու բախտը դժխեմ,
ո՜վ ողջուկոտոր
աստվածներ հայոց.
գերված Նեմրութի քարքարոտ լանջերին,
ճզմված վանքերի հիմնատակերում,
ցրված տարագիր աշխարհի բոլոր
թանգարաններում՝
բեկոր առ բեկոր,
դարձած անանուն ու հուշեր անդեմ՝
պատառ առ պատառ,
ինչպես ձեր սերած ազգն այս թշվառ։
Ոգեկոչո՜ւմ եմ՝
ո՜վ հովանավոր աստվածներ հայոց,
ձեր հորդորը գոռ, խորհուրդն անմեկին,
ոգին հնէանոս,
մոգությունը հին,
սատար կանգնեցեք ձեր հավատավոր
զարմերից մեկին,
խոյանքի կարոտ խոնարհյալ հոտի
խոյին արփորդի,
ծուռ ծոռերի կող ձեր քուրմին արդի։
Եվ պատըռտի թող

ճառագայթների շերամն ապստամբ.
գաղափարական մթություն ու ամպ,
եղելության քող, հավատք ցնցոտի,
առօրեական ոստայնը սարդի:
Թող օրհնյալ լինի առաքելությունը
լուսատու որդի,
և ընդունեք այս որպես մի համեստ
ազգի մանիֆեստ...

Ես՝ Մեծամորից դարերը ճեղքած,
բանականության բետոնին ձլած
հունդ արգասավոր,
որ դառնա պիտի գալիք սերնդի
իմաստության ծառ,
բայց չեմ գալիս ես անցյալի խորքից,
որպես թախծավետ հուշերի ծիծառ՝
այլ հարակրկնակ պարույրն ավարտած
Խորհուրդ Խորինից,
որպես ճառագումն այն իմաստության,
որ հանգած աստղից հասնում է երկիր
լուսատարիներ ետ,
բերելով իր հետ հայոց հանճարի
ճաճանչը փառքի:
Եվ ես վերջապես որպես վերծանված
հայոց ժայռերի գաղափարագիր,
որից սերվել են Գանդիներ ու Կանտ
առանց գիտնալու.
իմ ժխտված նախնյաց մարգարեությամբ,
արփադեղնուցում բջջի սերտած
իմ առհավական ծածկադպրությամբ,
ահա իմ հերթին առանց տքնելու
բացասում եմ արդ՝
գիտության դերվիշ, ատոմի առնետ,
մոլոր այն բոլոր իմաստակներին,
որոնք թե միայն ու վերջիվերջո
տարր կրծոտեցին ու նրա ներքո
անվերջ նվազող

արեգակնային համակարգ գտան,
իսկ կույս աստղի մեջ՝ գոնչ գալակտիկա՝
(հրաշք դեռ չկա՞...),
և նյութի չնչին տրոփն հոգեկան
վերակոչեցին այլորեն «ռքվանտ»,
իսկ բջիջների վարքը մոգական՝
«մոլեկուլային կենսաբանություն»,
կյանքը սարքերի բարդ՝ «բիոնիկա»,
հոգին ժխտելով
հիմնեցին սակայն հոգեբանություն՝
(մինչ այդ կոչվում էր սնապաշտ ավանդ,
ականջդ կանչի՞,
ո՞վ դու անցյալի հանճարեղ «հիվանդ»...),
բայց տարրեր կիսող գիտուններն այդ մառ,
առողջ ուղեղի վառ կիսագնդի
երկրորդով խավար,
ընկալումով թեր չեն ըմբռնել դեռ,
չնչին, տարրական մի խրողություն,
որ նորը հինն է, հինը՝ նորը նույն,
մարդուն մատչելի մեկնությամբ նորոգ,
ակնոցով նորույթ...
Զի չենք արարում ոչինչ աշխարհում՝
խմորում ենք լոկ
քարեր տարրալույծ, ուղեղ քարացած,
վասն մարդկային մի երջանկության,
որն վերջ ի վերջո ինքնին իր-նյութ չէ,
ընչավետություն ինքնանպատակ՝
այլ հոգեվիճակ,
կենսահրդեհման բջջի մարմաջ,
անդորրանք վերին, կեցություն միջակ
(դեռ ձախ ձեռքով են բռնում ականջն աջ
և բարիքի մեջ բերկրություն փնտրում.
— Ունենալն ի՞նչ լավ՝ չունենալն է վա՜տ—
պիտի հոժարեր քերթողն ինքնաբավ...):
Այդպես է ահա հոգին անշոշափ
այլ բան չէ բնավ՝

քան տարատեսակ մի «ներքին այրում»,
արյունն՝ այրիչ, ըղձանքներըՙ կայծ,
                    իսկ սիրտը՝ շարժիչ,
որը լովում է մահվան մակարդմամբ,
                    հոգին՝ չքանում:
Նյարդերն այլորեն հանդիսանում են
                  «կիսահաղորդիչ»
                    կամքը՝ «վոլտ»-լարում,
Հավատն՝ «էլեկտրա»-զորություն ստույգ,
տղամարդ ու կին՝ ներհակ թե ներդաշն,
                    կենսաբևեռ զույգ,
սերը՝ լուսաղեղ ու ձգողություն,
                    շիկացումը՝ կիրք,
զգացմունքը խորն՝ անդրակարճ ալիք,
ատելությունը՝ հակամետ վանում,
ցասումը ընդոստ՝ այլ կարճ միացում…
                    Ավելին ասեմ.
ունայնությունը՝ հիրավի «վակուում»,
ոգին՝ ճառագում, միտքը՝ վարակում
                    խոսքը՝ առաքում,
կյանքն՝ համատարած մագնիսական դաշտ,
արարածներս՝ լիցքերով տոչոր
                    կենսահյուլեներ,
իսկ աստվածները՝ ինքնության ջահեր,
                  կամ եթե կուզեք՝
«կատարելության կատալիզատոր»…
                  Ու թե ազգ ամեն
իր էությամբ է ստեղծում անեղծ
                    իր աստվածներին,
տալիս նրանց դեմք ու բնույթն իրենց,
դարձնելով իր իսկ տենչի փարոսը,
իր բուն ինքնության ուրույն մերանը,
հանուր բերանը, հույսի գերանը՝
                  կամա-ակամա
վերցնում է սակայն հակադարձաբար,
ճակատագիրը նրանց լավ թե չար:
                    Եվ պետք էր ասվեր.

«Ասա ո՞վ է քո աստվածը ազդու՝
асем ով ես դու...»:
Ու թե ասված էր.
«Փորողն է ընկնում իր հորած փոսը...»
կամ թե՝ «Պտուղը՝ ծառից ոչ հեռու...»
«Մի արա այլոց
(ո՞ւր մնաց աստծոց...)
այն՝ ինչ չես ուզում քեզ հետ լինի հենց...»,
բայց այսուհանդերձ
հայ ազգն էլ ընկավ իր իսկ մեղքերի
փոսը ահարկու
և իր նախաստեղծ հայ աստվածների
բախտից ոչ հեռու...
Չսկսվե՞ց արդյոք աղետն այնտեղից,
երբ իրարակուլ գոյապայքարում,
ամեն տիրակալ՝ հեռու թե դրկից,
իշխանությամբ նախ իր աստվածն էր գործ
այլոց պարտադրում,
մինչ անմիաբան մեր ջոջերն որոշ՝
ճոճվող մի աթոռ, խորոզի մի թառ
փրկելու համար
(ինչպես և այսօր...),
դարձան ուռալեզ ու օտարամոլ,
և ձեզ՝ ո՜վ հպարտ աստվածներ հայոց,
իրենց հետ դարձրին հունահպատակ,
պարսկատարբերակ,
և արևորդյաց մեհյաններում գոռ
մտան խառնածին աստվածներն օտար:
Բայց այդ դեռ ոչինչ,
հետո պիտի գար
«ազգաշինարար» մի «լուսավորիչ»
ու շինությունը սկսեր... ավերով,
Արևին հագցներ խավար մի վեղար
ու շենությունը սկսեր... ցավերով,
իսկ դուք՝ ո՜վ անպարտ աստվածներ հայոց,
զոհ չհանդուրժող,
բարի հավակնող բռնի հավատքի,

մորթվող առաջին մատաղը եղաք
(ազգի մորթումը հետո պիտի գար...)։
Բայց ցեղի սրտում դուք չմահացաք,
հարատևեցիք որպես ծպտյալ իր՝
                    աղամաև, թոնիր,
նոր ծեսերի մեջ՝ Արևգալ, Զատիկ,
Պաս ու Վարդավառ կամ թե Նավասարդ։
Եվ ահա այսպես՝ ո՜վ տերեր բնիկ
                    լեռնաշխարհի սեգ,
ձեր բնօրրանում դարձաք վտարանդ
                    (ինչպես մենք երեկ...),
դավանանքից՝ դավ, ավանդից՝ աղանդ։
Որպես մասունքներ, աննշմար նշխարք,
սփռվեցիք տար երկիր ու աշխարհք,
                    և պիտի մնաք՝
պատմության քոչվոր, ուրվականի հնք,
հնագիտական մեծ դիտակի տակ՝
                    անորոշ մի հետք
                    (ինչպես վաղը մենք...)։
Այնինչ այլերը նույնիսկ պաշտեցին
իրենց տաճարի կենտ պատը ավեր,
ու լացակումած, ճակատներով մերկ
                    այնքան ծեծեցին,
որ... կուռ ամրացավ թե՛ փուք հավատը,
և թե՛ հանճարեղ որդյաց ճակատը...
                    Իսկ հայը պարկեշտ՝
ինքը խաչացու նրանց խաչածից
                    միայն գութ հայցեց՝
               (բախտի ի՞նչ զավեշտ...),
կառափի տեղակ կուրծքն այնքան ծեծեց,
                    որ արցունքի հետ
հատավ որբ ազգի թե ոգու կաթը,
և թե՛ փրկիչի գութի գավաթը...

Օ՜, ողբում եմ ձեր կորուստն անխավեր,
                    ո՜վ տառապակոծ
                    աստվածներ հայոց,

ողբացին նաև քանի քերթողներ,
քանի-քանի քուրմ խնկարկեց ծածուկ
ձեզ իր արվեստում,
բայց քա՞նի գուշակ, քա՞նի իմաստուն
հարցրեց համարձակ.
թե արիական ցեղն այս երբեմնի
այդ ինչպե՞ս չոքեց դռանն եղեռնի,
նահապետական օջախն հարավառ
ինչպե՞ս տարտղնեց ոնց մոխիր անթեղ,
Արևն ոգեշունչ
քրիստոնեական այդ ո՞ր հրաշքով
զեղչվեց լուռումունջ
և դարձավ մի խեղճ հոգեվար կանթեղ։
Առաքելական այդ ի՞նչ հունարով
դարձան ի վերջո տոհմի տոտեմներ.
խոյը մարտունակ՝ գառ մատաղացու,
նժույգը սլաց՝ լացկան մի լծկան,
արծիվն երկնաչու՝
թռչել մոռացած կաչաղակ գոռոզ,
առյուծն ազնավուր՝ հնազանդ կատու,
և տոհմածառը պնդամեջք ու հոծ՝
քամուն հպատակ հասկեր հարկատու,
որոնք թե դարեր կշտացրել են լուռ
հազար հարամի,
ի վիճակի չեն այսօր իսկ իրենց
գեթ կերակրելու...

Մինչդեռ ո՞ւմ պարզ չէ,
որ հազար անգամ, պատվաստված ծառը
տալիս է վերջում պտուղ տարակազմ,
քիմիայի դարում՝ փորձանոթ անգամ՝
տանձենու ծաղրը...
Չգիտենք մի՞թե,
որ ծառն ամուր է արմատով ուրույն
ու բնով կայուն,
և այդ ծառը նույն,

եթե չի ուզում ստվերում կծկված
թզուկ թուփ դառնալ,
լուսավոր մի օր իսպառ վերանալ,
իր գոյամարտում պիտ ձգտի վերև՝
միշտ դեպի Արև,
(որն և հենց հայոց աստվածն էր վերուստ,
աստվածները՝ ուստ...)
ինչպես երկնուղեշ բարդին արփապաշտ՝
հայ արևորդյաց սուրբ ծառը այն հաշտ:
Այդպես էլ ահա՝
ինչպես սրբազան բարդին հարակա,
վտիտ ազգերը տոկուն են միայն
իրենց արմատով
ու բարձր միայն արփատենչ բնով:
Եվ փոքր ազգն այն,
որն իր սեփական փառքում ուրացավ,
պիտ մնա ընդմիշտ լույսի մուրացկան՝
մինչև ուծանա, մինչև որ լուծվի
անտառում վարձկան...
Թեև ճիշտ էին
Քրիստոսի հայտնի խոսքն ամոքիչ.
«Ես չեկա նախորդ ուխտը դրժելու՝
այլ լրացնելու...»,
բայց գիտեմ նաև զարմերը նրա
իմ լրացումը չեն հանդուրժելու,
պիտի չերկնչեմ,
պիտի մեղանչեմ,
թեկուզ իմ հոգին նզովքին խաչեն,
գոչեն «պղծությո՜ւն»
ու պատարագեն «սրբերը» բամբասս,
և թող շիրիմիս չդրվի խաչքար՝
այլ լոկ ցասման խաչ,
պիտ ոգեկոչեմ այսու ձախ ու աջ
ձեր վերադարձը՝ ո՜վ անհիշաչար
աստվածներ հայոց,
քավություն տվեք ուրացկան որդոց,
մեր գլխի մեղքը քավեցինք գլխով՝

մեզ գայլը լիզեց, բայց թե ի՞նչ հառնում՝
                    մեռանք խնկապես,
իսկ թե մնացինք՝ շան պես լիզելով
                    վերքերը մեր հեզ։
Այլ տարբերակով փառվեցինք հավերժ
                    հրդեհներում թեժ,
բայց թե ի՞նչ ջահել՝ ծերացանք ավել,
                    գեղչվելով անվերջ։
Քանզի ողբացի Եզնիկները քեզ
ու իմաստազոր հառնումդ հերքելով,
խաբեցին ազգը հանդերձյալ կյանքով,
թեև դեռ ցայսօր ոչ ոք այնտեղից
                    «նշմար» չտվեց.
                    Բայց արի ու տես,
այսքանից հետո հայը դյուրահավ՝
քեզ մի սնոտի հեքիաթ դասելով,
հավատաց անհոգ Հիսուսի բարվոք
                    հարության անաւ,
ու նրան հանձնեց փրկությունը իր,
գոյապայքարից դասալքվելով...
                    Օ՛, վերհառնիր՝
ո՛վ բնականոն ԳԵՂԵՑԻԿ ԱՐԱ,
տուր մեզ դու կրկին դաս ու օրինակ,
նաև մաքրության, հավատարմության,
                    ու այնպես արա,
որ առաջվա պես հայը տարագիր.
պաշտի օջախն իր, կնոջն անբասիր,
                    որ ո՛չ մի «շամամ»,
ո՛չ մի Շամիրամ, անգամ սուրբ Մարիամ,
գաղափար վտիտ թե երկիր փարթամ,
                    եդեմյան կղզի,
մեզ այսպես դյուրին չգայթակղի,
                    որ էլ չգայթենք,
կարմիր թե ճերմակ արյուն չվայթենք,
որ ամեն գարուն թարմանանք քեզ պես,
                    նորոգվենք այնպես,

որ ողջ քո ազգը գեղեցիկ դառնա,
անվերջ վեհանա,
քեզ պես քո ազգն էլ առասպելանա
ու հավերժանա...

* * *

Ոգեկոչում եմ և քեզ Ոսկեմայր՝
որդեծնության, բերք ու բույսերի,
սիրո ու սեռի,
դիցուհի հաղթու, տիրուհի հրայր,
ո՛վ Մեծն ԱՆԱՀԻՏ.
«Փառք ազգիս մերոյ» և կեցուցիչը...
դու մեր հին Նարը, Նանե-Նանարը,
մարմնի ու հոգու ներդաշն քնարը,
կենսասիրության ստույգ ցուցիչը:
Քեզ քանի հպտիտ
բամբասեց, եղծեց,
բայց թե մտովի ի՜նչ ախորժակով
պիրկ ստինքներդ պինդ պատառոտեց:
Ասացե՛ք, խնդրե՛մ,
բարոյական չէ՞ր առավել արդյոք
նախկին «սրբազան պոռնկությունը»՝
քան քողարկվող լոկ
պոռնկությունը «սրբազանների»՝
թողնելով այլոց կույր ճգնությունը:
Վասն քո պատվի
հայ օրիորդները ազնվատոհմիկ,
ընծայում էին կուսությունն իրենց,
անծանոթներին անգամ աղքատիկ
ու ճանապարհում նվերներով պերճ:
Նույնն է և այսօր՝ այն տարբերությամբ,
որ ծեսը այդ սուրբ արվում է ծածուկ,
վասն... նվերի,
դրամի, պաշտոնի, ընչասիրությա
երբեմն ճնշված մի ազատության,
և որպես կանոն,

համեստներն են լոկ ընծայում իրենց,
«բարեպաշտներին»՝ կրծքերի կարոտ...
Օ՜, վերադարձի՛ր, Մայր Ոսկեծղի՝
դու ավելի քան ժամանակակից
                    առանց սրբության,
վերադարձիր, որ կենցաղն չեղծի՝
արևմուտքն ամուլ, արևելքն արու,
վերադարձիր դո՛ւ ու վերադարձրո՛ւ.
                    սիրո պերճ խաղը,
համբույրի աղը, հարբունքի տաղը,
կենակցման ծեսը, դաշտերի գեսը,
պտղաբերության շքեղ հանդեսը,
զոհաբերության անվաճառ խանդը
և սերնդաճի նախնյաց ավանդը:
Առանց կյանքի սեր ո՞վ է պայքարել,
կամ առանց պայքար կյանքն ինչպե՞ս սիրել...
                    Ստինք կենսածո՜ր,
մոլոր որբերիդ վերստին որդեգրե,
քո մարմինն է հենց հացն հանապազօր,
արյունդ՝ գինի,
    ,                սերդ՝ ամենազոր,
ուսուցմունքդ՝ պարզ ու առաքինի:
Զի «Մայր ամենայն դու զգաստութեանց,
բարերար ամէն մարդկան բնութեան,
որով կայ եւ զկենդանութիւն կրէ
                    ԵՐԿԻՐՍ ՀԱՅՈՑ...»:

* * *

Ծանթերդ արձակի՛ր, ո՜վ քաջ ՎԱՀԱԳՆ՝
ամպրոպների տեր, գիժ վիշապաքաղ,
                    վեհության վրդով,
թեև հարցական կեռերից առկախ,
բայց 7.000 եղեգնապորտով
                    մայր հողիդ գամված
                    դու հայ բահագն:

Ժայթք ու ժամքի դիք՝ դու մեր նախկին ՎԱՀ.
որից սերվել էր Յահվե-Եհովան,
քեզնից՝ քո կրկնակ Գաբրիելը հրեշտակ՝
սոսկ սրբատախտակ,
մինչ լեռնաշխարհում առհավետ առկա,
հայ դիցարանի դու ճայթյուն վկա:
Շանթերդ արձակի՛ր,
հայացքով կայծակ
տեսաբաններին բիբերը ծակիր,
լուսավորիր ծիրը բանագողերի,
որպեսզի հայոց հետքն արարչական
հանց հարդ չցրվի,
այլ ցրվի միայն մեր մտքի մեգը,
հոգու-պղերգը,
որպեսզի արդի քրմերդ հայորդի
ցայտերովդ ցիր,
շարան առ շարան բռնկեն մեկ-մեկ,
սլրոմեթևսական ջահերն անոթի,
վերապսպղա խավարման կորած
ծիրը սեփական,
փոթորկի կրկին խինդը տարերքի,
զարթոնքի երգը
հեղեղի համակ թե՛ ունկ, թե՛ ականջ...
Իսկ դու՝ ԱՍՏՂԻԿ վեստ.
ո՜վ գեղեցկության դիցուհի սքանչ,
ջրահարս լուսաչ, երկնային արվեստ,
միգամածություն երկրային սիրո,
մեր Սոնա սոնատ,
մեր Սոմա սոնետ,
փարատիր մարմնիդ մշուշը Մշո,
և աչքի փառը հայ կտրիճների
հայտնվիր անմեղ քո մերկությամբ ողջ՝
աշխարհին ի ցույց,
որպես նաիրուհու միացյալ բողբոջ,
գերազանցության չքնաղ ապացույց,
հրաշքների փաստ:
Եվ թող վերստին ցայտի ամենուր

հեթանոսական մեր Վարդավառը,
մի բուռ երկիրը դիտվի ընդհանուր
                    սենյակ Վահագնա,
կյանքի առագաստ վերստին ստանա՝
լեռնալիքներով փոթորկագնա,
ճակատագրի մեր լաստն անառագաստ,
                    և այսու զգաստ,
ընթանա դեպի դարն առաջիկա,
քանի էլ փչուն ուսմունքներ չկան...

* * *

                    Ինչպե՞ս չգոչեմ,
                    չոգեկոչեմ.
օ՜, ոգորանքի կորուսյալ ոգի,
                    արվեստների դիք,
                    դպրության երդիկ,
քե՛զ՝ բախտի դպիր, ո՞վ արփիական ՏԻՐ:
Մենք, որ դեռ մի կուռ կովի կրքոտ կուռք
                    կարգին չունեցանք,
ցերադասեցինք գիտություն ու գիր,
որպես զորավար ընտրեցինք Մաշտոց,
ռազմագիտության տեղ՝ հավատքի հավանգ,
բերդերի տեղակ՝ մատուռներ ու վանք,
փոխ դյուցազնության՝ ողբասացություն...
Թողած արիական յուրային աստծոց,
վասն Քրիստոսի ու առաքելոց
                    եղանք մարտիրոս,
պարտության հերոս, եղանք Վարդանանք՝
                    սպառվելով զուր,
մինչ դու որպես դիք ու դիվանագետ
գոյամարտային գերիմաստության՝
                    թե՛ գրիչ ու թե՛ սուր,
արդ ավելի քան երեկ ու երբեք
                    անհրաժեշտ ես մեզ,
որ քանակի դեմ հանենք մենք որակ,
ու բանակի դեմ՝ բանական զորակ,

զի ճորտությունը չի լինում այսօր
միայն բռնությամբ,
այլև քողարկված, այլև քաղցրածոր
մշակութային, գաղափարական
գաղութարարությամբ,
ինչպես հաղթանակն ընդդեմ տիրության՝
միտք-մշակույթի գերազանցությամբ...
Որպես փրկության ճատրակային ճար,
պիտի որ ծնենք բյուրավոր հանճար՝
բյուրավոր ձիանք...
Հանց քնաջնջման վճռական վրեժ,
պիտի հեղեղենք արարման ջրվեժ,
ու անտառ դառնանք տաղանդի արտում:
Առաջնորդիր մեզ
այս գոտեմարտում՝ ՏԻ՛Ր շնորհաձիր,
տուր մեզ տրիտուր շնորհներդ բյուր,
որ մարդկայնության անվարձ տրուբադուր
չմնանք այսպես՝
մարդկության մամուռ, թե երկրի բորբոս,
լուսավորության բոշա չդառնանք,
որ ամեն մի գոս, ամեն բարբարոս
մեզ այսպես դյուրին չոտնահարի,
հարիր-անհարիր
ամեն մի ճաղատ, փրչոտ ցուցամատ,
մեզ վայելչության, ճշմարտության
ցուցմունքներ չտա՝
այլ հողի վրա ու արևի տակ,
գտնենք մեր բաժին արժանի տեղը,
թե՛ ապաքինման, թե՛ հարատևման
մեր ուրույն դեղը:
Պուճուրի քայլը պետք է մեծ լինի,
հետնորդի երթը՝ միմիայն սլացք,
թե չի ուզում նա
ժողովուրդների առաջընթացից
քարշարկված մնալ:
Սպարապետ ՏԻ՛Ր, մեզ առաջնորդի՛ր
ուղիղ դափնենի...

* * *

Որտե՞ղ ես դու, ՄԻՀՐ,
ո՞վ արիական լուսարյուն աստված՝
ոգու, կրակի, կատարելության,
հիշողության մութ որջում բանտարկված
դու և՞ ոսկեհեր մեր Սասնա Մհեր,
և՞ հիմնադիրը աշխարհատարած
միհրականության՝
լոկ մեզնից ժխտված...
Թոթափիր մի պահ դու թմբիր ու նիրհ
ու դիտիր տոհմդ բնութագրկված,
բարոյալքված։
Որտե՞ղ են նախնյաց ոգին քո արդարծ,
դասը ազնվության, դասակներդ պարծ։
Քեզ սերած ցեղը դարձել է այսօր
անխորիզ խմոր,
անամրան շաղախ ու երկիր անաղ,
թագավորն՝ ռամիկ, ռամիկն՝ թագավոր...
Մինչ Հռոմեական կայսրության մեջ դու,
դաստիարակեցիր դասակարգ ազդու,
քո հաճոյությանն հասնելու համար,
քո նմանակր դառնալու համար,
ամեն մի ասպետ ձկուն թե պարկեշտ,
բայց և նրանց հետ՝ ռանչպար թե հովիվ,
ակամա-կամոք,
տքնում էր համառ,
ջանալով լինել ավելի ազնիվ,
ավելի վեհանձն, առավել արի,
այլերից բարի,
և ձևավորվեց բարք մարդավարի,
խուժանն եղկելի ունեցավ տիպար
օրինակելի,
լեգեոններն այն սփռեցին համայն
երկրներում տար,
մարդկությունը գործ վերաճեց բարվոք
մի մակարդակով,

իսկ մենք գործացանք քեզ ուրանալով…
Տարբեր ժամանակ, տարբեր ժողովուրդ,
դառնում է առողջ ու առաջատար,
                    բայց ժողովուրդն այդ,
պիտ ինքն ունենա առաջատար տարր,
                    պանծալի սերունդ:
Կա՞ բանակ արդյոք՝ սպա չունենա,
կամ քաղաքակիրթ ժողովուրդ ծանոթ
                    առանց ընտրանի,
առանց անձնակազմ կյանքի նավն անօգ
փորձություններում ո՛վ ղեկավարի:
                    Իսկ ազգն անոպա,
որն ազնվական անձնակազմ չունի,
իր ռահվիրային դասակից է զուրկ,
ինքն է ազգովի դառնում խաժամուժ,
                    ազգովի անուժ,
                    ազգովի ստրուկ…
Ու թե հանրահայտ ասացվածքն է ճիշտ.
                    «Ժողովուրդն է միշտ
կերտում պատմությունն իր արժանավոր…»,
բայց միշտ սրբազան մի խումբ խենթերի,
նվիրյալ որդոց օրհնյալ ձեռքերով…
                    «Օ՜, վեհության դիք,
ելիր դու անքեն քարայրից խոնավ,
չեն զտվել թեև մարդիկ ու ստիք,
                    բարքերը՝ բնավ՝
իդեաներն առատ, իդեալը սակավ:
                    Ե՛կ, դաստիարակի՛ր,
ազգային մի այլ ազնվապետություն,
ազգասիրությունը թող որ հռչակվի
                    գերագույն օրենք,
իմաստությունը՝ կրոն հայկազյան,
ոգեղինությունը՝ զինծառայություն,
արարչությունը՝ միջուկային զենք,
ասպետությունը՝ առօրյա տարազ,
անձնազոհությունը՝ հայոց անձնագիր,

զոհաբերությունը դիտվի թղթադրամ
ու մտնի ներքին շրջանառություն,
իսկ «արաքիրին»*՝ դատաստանագիրք
առաքինության...
Մարզիր դու նաև «կամիկազ»** ջոկատ,
դեռ կռվենք պիտի
ճակատագրի դեմ ճակատ առ ճակատ,
վայրի ցլան հետ ոգորն հանապազ
դեռ պիտի տևի,
դեռ բախվելու են՝ երախ-երաշխիք,
ժանիք-արժանիք,
առիք առ արիք...

* * *

Ո՞ր մեկիդ թողած՝ ո՞ւմ ոգեկոչեմ,
որ մոլորության ճահճուտում նվաստ
ինքս էլ չկորչեմ՝
ո՛վ աստված աստծոց ԱՐԻՆ-ԱՐԱՄԱԶԴ:
Մի ազգ, որ ուներ աստղոց չափ աստված,
կուռքեր այլազան, կիսաստված առատ,
ու զիջեց այլոց,
այնքան լիությամբ, անհաշվենկատ,
որ ինքը մնաց ինքնությամբ սնանկ,
եղավ սեփական հուշերի խառատ,
ավանդեց որդյաց դիցարան պռատ...
Ինչ գովեստ էլ տանք,
անշունչ է այսօր բնաշխարհն հայոց,
Արագած ու Սիմ, Արարատ, Նպատ՝
թշվառ ու թափուր,
երկնքում միայն կռունկներ թափառ,
իսկ երկրում մի բուռ՝
փլուզ ժողովուրդ, փլատակներ լուռ
ու փրկության փառ...

---

* **արաքիրին**— արիական պատիժ ինքնակոհությամբ (ճապոներեն)
** **կամիկազ**— անձնասպան (ճապոներեն):

Ո՜վ դու խորհուրդի գերագույն աստված,
եկ գլխավորի՛ր դիպքերով զատ-զատ
ներքին-արտաքին
նախարարությունն ազգային գործոց:
Մարդ է՞լ ունենա այսքան հոգս ու գործ,
բայց ոչ մի կարգին
գերատեսչություն...
Ի՞նչ հին ավերակ կամ թե ողբատուն,
դուք վայրէջքեցեք եռանդ ու խանդով,
մեր բախտի վրա, բայց նախ մեր անթեղ
ուղեղների ու ներաշխարհի մեջ,
քանզի բախտը նեխ թե նսեհ փթթուն,
ինչպես ամեն ինչ այս աշխարհում նեղ՝
հեղափոխություն թե անկախություն,
զարթոնք թե խոր քուն,
անկում ու վերելք, մահ թե փրկություն,
ամենից առաջ սկսվում են թեժ
միմիայն այստեղ.
— Լսո՞ւմ ես արդյոք ժողովուրդ իմ խեղ՝
ՄԻՄԻԱՅՆ ՄԵՐ ՄԵՋ,
Լլ բախտիդ ընդդեմ զուր չողոքես...
Ո՜վ դուք հարազատ աստվածներ հայոց,
վայրէջքե՛ք մեր մեջ,
ընկղմե՛ք բարով,
վառեցե՛ք ապա օջախներ ու բով,
հուրն բագինների, ջահերն երկնաճեմ,
որ եղիցի լո՜ւյս, որ եղիցի ջե՜րմ,
վառեցեք այնպես,
որ ոչ մի ստերջ հեղեղի հրձիգ,
պատմության հրշեջ,
կամ լացը մեր ծով, դավանանք ջրիկ,
չկարողացա այլևս երբեք
դրանք հանգցնել,
որ բոցը կյանքի՝
երգի, պայքարի, բերք ու բերկրանքի,
հայոց սրտերում բորբոքվի հավերժ,

անցյալը մնա անցյալ մղձավանջ՝
                    փորձառության կանչ,
թո՛ղ որ տառապե՛նք տենդախտով անբույժ,
                    անդրջանքով հույժ,
բայց նայենք արթուն, վճռանքով տոչոր,
                    ու աչքերով չոր,
դեպ ո՛չ գալիք դար՝ այլ հազարամյակ՝
                    միշտ դեպի հարավ,
հետևենք զգոն ծիրն Արեգակի,
միևնույնն է մի օր պիտի Մասիսի
                    կատարին կանգնի՝
հանց լուսապսակ, հանց մեր լույս կանաչ,
                    հանց մեր արշալույս...

* * *

Ամեն լաբիրինթ, ամեն փապուղի,
թե չվերջացար դու ճանապարհիդ՝
                    նա իր վերջն ունի,
ամեն մի փականք՝ բանալի ճշգրիտ,
ցանկացած գիշեր, ձգվի էլ դարեր՝
                    իր լուսաբացը,
ամեն լուսաբաց՝ մշտնջենական
                    իր վերադարձը,
ավելի պայծառ, առավել գերող.
երկրի ջերմացումն ու ահազնացող
                    արևը վկա,
զի այստեղ էլ կա տիեզերական
                    դիալեկտիկա...
Եվ հիմն այս հիմա թող հնչի որպես
                    ոչ թե ոգեկոչ,
այլ ազդաշեփոր վստահ մոտեցող
արեգակնային հազարամյակի...
                    ԱՐԵԳԱԿ հավե՛րժ,
դու ես ամենայն գերաստվածություն
և յուրաքանչյուր դավանանքի մեջ
                    այլորեն առկա:

Դու և՛ կենսատու մակարդ մարդացու,
և՛ անէության ոստի մահացու,
բայց ի՞նչ իմանար խեղճ մահկանացուն.
որ դու սոսկ կյանք չես,
պտղաբերության «Նուբար» սերմացուն,
ո՛չ լոկ լուսաթել բերկրանքի բեհեզ,
մանրէի մաքրիչ,
մակընթացության, տարերքի պատճառ,
կամ էներգիայի մարտկոց անսպառ՝
այլ նաև դրդիչ
հեղափոխական համաճարակի,
հորդորն արարման ու ներշնչանքի,
խորհուրդ բարության ու արիության,
արդարության հուք,
ճշմարտության խոսք,
բուրվառը սիրո, հոգու հնոցը,
հավատամքների ու իմաստության
աննկատ բոցը,
հույս ու հույզերի թաքուն փարոսը,
բուն էությունը ոգեղինության,
և դեռևս անհայտ քանի ու քանի
պայմանը խրթին առեղծվածների…

Եվ քեզ չենք պաշտում,
մենք՝ էներգետիկ կենսահյուլեներ
ու մեր մարմնի շուրջ դաշտ մագնիսական՝
ուրույն, սեփական,
քո ձգողության գերհզոր դաշտում
թպրտում ենք հեռ,
կատվի ձագի պես կույր-կույր խարխափում
քո ճաճանչ ափում,
հանց մթան թիթեռ ձգտում դեպի լույս,
հրդեհվում ներքուստ հառնումով անհույս,
հայացքներս կույր դեպ գիրկդ հրայր,
և կոչում են այս՝ ո՛վ առնական հայր,
ոգեկան կարոտ…

Բայց մեր ոտքի տակ երկիրն իգական՝
                    մայրը մեր խանդոտ,
որ ժառանգել է միս ու ախորժակ,
իր «գրավիտացիոն» ուժով վարվիժակ,
գրավել է մեզ ու գայթակղել
իր զգայական քաղցրություններով...
                    Եվ ահա այսպես
երկձգողության ու երկվության մեջ,
մարդ-աստվածային երկվությունն անշեջ
պառակտված անտես մեր ուղեղում կես,
                    թպրտում ենք հեռ,
և մեր շուրջն ամեն՝ մարմնի ու հոգու,
էգ ու արուի, չարի ու բարու,
նյութ-էներգիայի, «պլյուս-մինուսի»
                    հավերժական վեճ...
Եվ պիտի այսպես մենք թպրտանք դեռ՝
մինչև քեզանից հոգու հրթիռով
                    սովորենք թռչել,
մինչև մեր անմամբ-քո ահագնացմամբ
                    մերձենանք ավել:
Հաւնում, որ անում ենք ցայսօր մտովի,
լոկ պոետներն են ու քրմերն հինդու,
                    կամքով կորուլի
մեր սավառնելու ձիրքը կռահել,
բայց ասում են թե հաջողվել է այն
                    Քրիստոսին միայն...
Մինչդեռ մենք ճողոտ ճուտիկներ որպես,
կամ ավելի ճիշտ՝ մագնիսափոշի
                    դաշտումդ հրկեզ,
բրոունյան խոտոր շարժումներով մեր
                    թպրտում ենք հեռ,
առանց գիտնալու  ու գիտակցելու՝
ո՞վ դու թևավոր աստվածություն հին,
ո՞չ ոլորտը մեր գերգիտակցական՝
                    ուր թխսում ես դու,
ո՞չ լեզքիդ պետքը ճառագայթային,

ո՛չ քո հայրական լռության լեզուն
խորհրդով լեցուն,
և ո՛չ էլ որքան շնորհք ունենք դեռ
քեզնից քաղելու...

Բայց կգա օրը՝ այն հեռու չէ արդ,
երբ հասունները կդառնան գերմարդ,
կլինեն ներքուստ այնքան զորաշունչ,
որ ոչ թե մարմինն կընդգրկի հոգուն՝
այլ հակառակը,
և կճաճանչի նրանց մարմնի շուրջ
լուսապսակը առայժմ թաքուն,
ու կճանաչի էակը կարող,
մարդն առաքինի ու անառակը:
Կդասակարգվի բնությամբ հարող
արդարամտաց մի եղբայրություն՝
համայն աշխարհի:
Փաստը նվաստին չի արհամարհի,
զի ոչ ամեն ոք
կդառնա կամոք, հզոր ու խելոք,
առավել վսեմ,
այլ հավատավոր ռահվիրան այն լոկ,
ով կարողանա Արեգակն ի դեմ
հոգին միակցել նրա մարտկոցին,
առանց ավելորդ միջնորդների սին,
առանց շինծու սեմ...
Այսպես կստվերվեն բարքերը նսեմ,
թիվն հանճարների ու հրաշքների
կբազմապատկվի,
կստեղծվի բուժում՝ ներհայեցությամբ,
հաղորդակցություն՝ լեռան լռությամբ,
ռեկորդների նոր չափ կսահմանվի,
կհիպնոսացվի չարը կամովի,
այսօր անճարակ
սերը կդառնա հոծ համաճարակ,
իմաստությունը՝ գիտության ճրագ,
ըստ արևալիք զարկերակների

Ջի սերմերն ունեն՝ լինի լավ թե վատ,
ընտրության որակ,
կատարելության հակում ու հավատ,
հավատն՝ վարակի,
որը ծնում է ազգություն պարփակ,
ըստ իրենց ընտրյալ աստծո որակի՝
պատշաճ մակարդակ:

Ի՜նչ դատարկություն, աշխարհում այս նեղմ՝
թե ես էլ չասեմ,
կարո՞ղ էր լինել քառսուն «Տեր աստված»՝
ինքնակոչ, ներհակ,
այն էլ սեփական, ավելին՝ անստեղծ...
Չկա՜, չի՜ եղել, կա միայն մե՜կը,
որ պտտում է ինն մոլորակ.
ճեղքում սառույցն ու ժխտում մեգը,
և կա մարդկային մեկնաբանություն՝
առժամանակ եղծ:
Ռա, Ռամ ու Արամ, և նույնիսկ Նարամ,
Քրիստոս ու Քրիշնա, Արշամ ու Բարշամ,
Վահ ու Եհովահ,
տարբեր չեն բնավ՝ այլ սոսկ տարբերակ,
ճանաչել են քեզ
և կոչել իրենց ոստերդ երկրածին:
Դու ամենքինն ես՝
Արև՜ բարեպա՜շտ,
բայց առաջինը նրանն արդարև,
ով հավատում է քեզ անվերապահ:
Եվ հավատացին
քեզ առաջինը հայ լեռնաշխարհում
(մոլորությունը չեմ արհամարհում,
բայց անգետներր թող խոհեմ լռեն...)
ու հայոց նախնիք կոչեցին քեզ ԱՐ,
իսկ իրենց՝ Արեր, Հարեր, ետ՝ Հայեր,
այլերը՝ Արման, այսինքն Արորդի,
և դարձար ծնողն ողջ ժողովրդի,
տվեցիր նրան թե՜ միտք, թե՜ ոգի,

բնույթ ինքնուրույն, մշակույթ ուրույն,
եղար ապավեն ամեն անօգի,
իսկ ազգն իմաստուն՝
պարզամտությամբ հանճարեղագույն,
միակն աշխարհում
բնորոշեց քեզ որպես Էություն,
(արարածն՝ էակ...)
և ամենայնի դրական բևեռ,
իսկ նիշը քո՝ խաչ,
Քրիստոսից բյուր-բյուր տարիներ առաջ...
Քրիստոսից բյուր-բյուր տարիներ հետո,
գիտությունը խաս
մեկ-մեկ փաստարկեց կռահումն հարգո՝
խաչը ընդունվեց դրական «պլյուս»...
Այսպես ճառագեց լեռնաշխարհն հայոց,
տարտղնելով հոծ
լուսավորությունը հնդեվրոպական,
արիներն հզոր հավատամքը քո՝
Իրան ու Թուրան, Հնդկաստան տարան,
ապա Եվրոպա՝ անգամ Ճապոնիա...
Աստվածներն հայոց քո բազմախորհուրդ
առաքյալն դարձան,
ու բարգավաճեց ազգը փառահեղ:
Բայց որդը փառքի մտել էր դարան.
ընդդեմ բազմավանդ մի ողջ ժողովուրդ,
մի բուռ «բարեփոխ» բռնությամբ ահեղ՝
հերկելով անցյալն, երկիր ու ուղեղ,
թաղեցին ցեղը
լուսավորչական խավարում ստվար,
ու բազում դարեր հայոց աչք ու ունք՝
ի դիմաց ճաճանչ քո ճշմարտության,
թյուրությամբ կրեց կուրության ակնոց:
Այսպես խավարեց արեգակն հայոց՝
ո՛չ ծննդյան թուղթ, արիական կնունք,
երբեմնի ծաղկունք, ո՛չ ոգու պաշար,
ո՛չ անգամ խոկմունք:

Մնացյալն եղավ պատճառ ու արդյունք՝
մինչև ընկնելը եղեռնի երախ,
                    ապա ախ ու վախ...
...Միշտ խոստանալով նոր եդեմ դարձյալ՝
բյուր սերունդներ ետ՝ այսինքն հանդերձյալ,
հետո պիտի գար դավանանք մի այլ՝
նորից մարդասեր, փրկարար, արդար,
որն հորջորջվում էր թե համայնավար՝
ղեկավարում են սակայն անայլայլ
մի բուռ ինքնակոչ սրբեր «բարեփոխ»:
                    Կուռքերին ի փոխ,
երկիրն հեղեղվեց արձաններով ճոխ.
բերքը դաշտերից հանկարծ վերացավ,
արհեստավորը արհեստն մոռացավ,
                    ջուրը՝ չորացավ,
                    օդը՝ նսրացավ,
կռունկները տաք երկրներ փախան,
դռներին հուսո գումարվեց փականք:
Աքեմի վրա գումարվեց նոր քող
ու հանուր տարազ մի ապազգային,
                    և երգը հայոց
հնչեց աղավաղ ձայնապնակ ոնց:
Երկիրը կոճոն դարձավ արգելոց,
                    հայը գրանցվեց
կենդանապաշտպան գրքույկում Կարմիր...
                    Անտեր, միամիտ՝
ինչպես և այսօր, ինչպես դեռ երեկ,
լոկ մանուկներն են արտասանում գոց.
                    «Արև, Արև՝ ե՛կ, ե՛կ...»:

                    Օ՜, օգոստափառ,
չեմ ոգեկոչում քո վերադարձը՝
քեզնից առավել այլ օրինապա՞հ,
                    այդ մենք ենք որ պիտ
վերադառնանք քեզ ժամանակին ճիշտ,
որպես հերձվածող որդիք ամբարիշտ,
                    ծնկի գանք մի պահ,

և քեզ մատուցենք զղջումով արդար
մեղսության վարձը:
Զոհ մի պահանջիր՝ զոհ ենք ազգովի,
մի պախարակիր՝ ի՞նչ հաշվեհարդար,
դարձել ենք արխար,
խոստովանքը մեր ընդունիր հարմար
ու փակիր հարցը:
Ով ո՞ւմ էլ գովի,
փրկիչը խոստումն իր խախտի-չխախտի,
դու ես մարդկության կենտ աստղը բախտի,
մեզ համար սակայն կա՛ս, պիտի մնա՛ս,
հարատևության առձեռն մեկենաս...
Եվ ես, խոնարհ՝
մունետիկը քո կամ կուզես համհարզ,
ծնկած մարդկային ճանաչողության
վերին գագաթին,
բախտի պարիսպից հայացքս անդին,
աղերսում եմ քեզ՝ անսա մեր հայցը...
Բայց ես այդ քեզ չէ, որ դեռ պիտ դիմեմ...

Մտքերս մանեմ, խոսքերս մանրեմ,
ժողովրդիս մոտ խորհուրդի կարոտ,
քեզ ըստ արժանվույն ո՞նց բարեբանեմ,
որ նա հավատա,
որ նա դարձի գա:
Ի՞նչ անեմ՝ ասա՛, բարձրանա՞մ Մասիս
ու բոցավառվեմ՝ ճիչը բերանիս,
անտարբերության վիհում ապառաժ՝
շողերդ կարկամ դարձրած կեռ գամ,
խաչվե՞մ ինքնակամ,
ու իմ խեղճ ազգի արդեն խիստ ծանր
խղճին ծանրանա՞մ,
որ իմ հավատի ուժգնությամբ չարքաշ
նա հավատի գա:
Աչքերս փորե՞մ, լեզուս սղոցե՞մ,
ու որպես համր,

ընկնեմ դռնեդուռ խոհամտություն
լալագին մուրա՞մ:
Լեթարգիական քնի մեջ ընկած
մի անշառ «մասսա»,
որին չարթնացրեց եղեռններից ետ
անգամ երկրաշարժ,
ու գնաց հլու լուռ աղոթելու.
վերստին լսելու ողորմի մեսսա:
Ճակատագրական քանի ապտակ ջեռ
անհրաժեշտ է դեռ ազգն սթափելու,
ախտը թափելու...

Արեգ բարեգութ՝
ոգեկանի կաթ, հանճարների կութ,
դո՛ւ, որ ինձ այդքան շնորհ ես բաշխել՝
բաշխել չես հաշվել.
տո՛ւր նաև մեկը, տո՛ւր ինձ զորություն
ալեկոծության:
Դո՛ւ, որ ատոմում պայթյուն ես սերմել,
դո՛ւ, որ անաղարտ ջրի կաթիլին
կուռ ադամանդի բնույթ ես տալիս,
տուր տառապյալիս՝
քեզնից մի ատոմ, միայն մեկ կայլակ,
այնքանով հագուրդ,
որ իմ քայքայմամբ արեգակնանա
ծով մի ժողովուրդ,
և սկիզբ առնի մի շղթայական
փոթորկուն ռեակցիա:
Արեգակ արդար,
արդար արդարև՝
ի սեր զոհերի ու արդարության,
այդ նույնը արա այլոց հետ նաև,
դեռ կան արթնամիտ հայորդիներ շատ,
չշահագործված հանգամանք կիսատ,
պայքարի շիջուկ,
օջախներ անշեջ,
փրկությունը մեր թող միմիայն մեզ,

դու քոնը արա՝ ծակիր մեր գանգը,
որպես ցորյան հունդ
ճառագայթներով մեզ սրսկիր կեզ՝
թափանցիր մեր մեջ
ու ճեղքիր միջուկ,
հունդից կաճի հասկ ու առած հասակ
հասկը կդառնա հաստատուն մի դեզ,
դեզը՝ զորագունդ,
զորագունդը՝ ազգ,
և կղողանջի զարթոնքի զանգը,
աշխարհը հայոց աշխարհասփյուռ՝
մրրիկ թե զեփյուռ կտան արձագանք,
և կելնի ոտքի ազգն արևապաշտ
նոր գոյամարտի,
զի դեռևս կանք.
— Լսո՞ւմ ես, Արև, և դո՛ւ ժողովուրդ,
և դո՛ւ մարդկություն,
դեռ մի թաղեք մեզ այսպես հեշտ ու հաշտ,
և մի խղճացեք՝ մենք դեռևս կա՛նք,
ու դեռ պիտի գա՛նք
օլիմպոսական տոնահանդեսի...
Լսո՞ւմ ես, ՏԵՐ իմ,
քո հավատարիմն աղերսում է քեզ,
դու սսկ առօրյա հրաշքդ արա,
տո՛ւր կայծդ հրձիգ որպես հրահանգ,
դիր տողերիս մեջ՝ թե այդպես հաճես,
թող որ ես ողջ-ողջ, ոսկորտիքով պինդ,
ամրանը դառնամ նորոգ տաճարիդ,
ու թե հարկ է թող մինչև իմ մահը՝
մինչև հառնելս գիրկդ նահապետ,
ապրեմ ծնրադիր ողողելով խենթ.
— Հրաշքդ արա՛,
հայոց լեռներն են վանկարկում ինձ հետ,
Մասիսն է հավերժ քո միակ գահը.
— Հրաշքդ արա՛,

դու նրա միակ արժանի թագը...
Աղաչում եմ՝ տես, ՏԵ՛Ր ամենավես,
— Հրաշքդ արա՛,
պաղատում եմ քեզ դարձի բեր դու մեզ.
— Հրաշքդ արա՛,
— Հրաշքդ ա-րա՛,
— Հը-րաշ-քըդ ա-րա՜...

01.1988, Մարսել.— 10.1989, Դիլիջան.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Ռնգային երգեր


Խմբագրի կողմից . . . . . . . 5
Հեղինակի կողմից . . . . . . 7
Տիեզերքի գատում կավե . . . . . 17
Սերունդ է լուծվում . . . . . . 18
Աստղ տրոփեց.. . . . . . . . 19
Ու թե ճիշտ է . . . . . . 20
Կեղծիքներն ամեն... . . . . . . . 21
Իմաստունի խաքով պայծառ . . . . 22
Դե, ո՞վ չգիտե . . . . . . . . 23
Solde, Solde, Solde . . . . . . . 24
Արարչական մի թեթև ճիչ . . . . . . 25
Դու չուզեցիր . . . . . . . 26
Ձգո՛ւյշ, եղբայր իմ... . . . . . . . 27
Ո՛չ, համասեռ չեմ . . . . . . 28
Երկի՛ր հայրենի . . . . . . . 29
Ի՞նչ ասեմ քեզ . . . . . . 30
Էվրիկա՛... սխա՜լ . . . . . . 31
Արթնացի՛ր, այսօ՛ր.. . . . . . 32
Ի՞նչ ես անում 100 տարին . . . . 33
Այո, ծուռն եմ ես . . . . . . . . 34
Քնար ու քանքար . . . . . . 36
Տրտունջ է տեղում .. . . . . . 38
Ամենա .. ամեն . . . . . . 39
Ռնգային երգ . . . . . . . 41
Անհունություն . . . . . . . . 43
Բացարձակ զրո . . . . . . 46
Սերուցք թե՞ քափ.. . . . . . . 49
Perpetuum mobile . . . . . . 51
Նա, որ պիտի գար .. . . . . . 54
Աշուն է, աշուն .. . . . . . . 57
Պոետն ու պոռնիկը . . . . . . 60
Արշալույսի դիցուհուն . . . . . . 62
Ես կամ . . . . . . . . . 64


### Ոգեկոչ


Մենավոր աստղի մահը . . . . . . 67
Խոսք առ Քրիստոս . . . . . . 72
Քերթող են մոթում... . . . . . . 77
Ավազ և փրփուր . . . . . . 84
Խոստովանանք . . . . . . . 95
Հարս արփիական . . . . . . . 100
Ապաշխարանք . . . . . . . . 105
«Սրբական պտնկություն» . . . . . 112
Ավետ ի հավես . . . . . . . . 119
Ոգեկոչ . . . . . . . . . 134

Գրական-գեղարվեստական հրատարակություն

**Ալեքսանդր Սարգսի Վարպետյան**

**Ո Գ Ե Կ Ո Չ**

Բանաստեղծություններ, պոեմներ

Литературно художественнсе издание

**Александр Саркисович Варпетян**

Сгихи, поэмы

Ереван, издательство «Наири»
На армянском языке

Книга издается за счет средств автора.

**Գիրքը լույս է տեսնում «Էքս-ան-Պրովանս: Հայկական Մշակութային Միության» և «Արմենիա» ամսագրի օժանդակությամբ:**

Խմբ վարիչ Գ. Է. Գասպարյան
Հրատ. խմբագիր Գ. Գ. Սիմոնյան
Նկարիչ Վ. Ա. Հարությունյան
Գեղ. խմբագիր Հ. Ս. Մալխասյան
Տեխ խմբագիր Մ Է. Ճանճապանյան
Վերստուգող սրբագրիչ Զ. Ս. Կարապետյան

ИБ № 6926

Հանձնված է շարվածքի 11.09.1991 թ. Ստորագրված է տպագր.
Ֆորմատ՝ $84 \times 108_1/_{32}$: Թուղթ օֆսեթ: Տառատեսակ՝ «Նորք»: Տպագր.՝
բարձր: 8,82 պայմ. տպ. մամ, 7,0 հրատ. մամ.: Տպաքանակ 5000:
Պատվեր 448: Գինը 8 ռուբ.

«Նաիրի» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:
Издательство «Наири», Ереван-9, ул Теряна 91

ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր
մամուլի կոմիտեի № 6 տպարան: Երևան, Թումանյան 23/1:
Типография № 6 Комитета по делам издательств
Республики Армении Ереван, ул Туманяна, 23/1